Հաղթահարենք
պատերազմի
հետևանքները
միասին

ՆՏԱ և ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԱՋՈՂՎԱԾ ՓՈՐՁԸ

Ուկրաինայում Վրաստանում Հայաստանում Ռուսաստանում, Հյուսիսային Կովկաս

հետևանքները միասին
Ուկրաինայում,Վրաստանում,Հայաստանում, Ռուսաստանում, Հյուսիսային Կովկաս

Հաղթահարենք
պատերազմի
հետևանքները
միասին

ՆՏԱ և ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԱՋՈՂՎԱԾ ՓՈՐՁԸ

Ուկրաինայում
Վրաստանում
Հայաստանում
Ռուսաստանում,
Հյուսիսային Կովկաս

Բովանդակությունը

Ներածություն **11**

I. Գործընկեր կազմակերպությունները **26**

«Գերմանա-Ռուսական փոխանակում» (DRAe. V./ (DeutschRussischerAustausch, Գերմանիա) 26

«Կռաինա վիլնիխ լյուդեյ» («Країна вільних людей», Ուկրաինա) 30

Մշակութա-մարդասիրական հիմնադրամ «Սուխումի»Վրաստան) 34

«Հայկական Կարիտաս» բարեսիրական ՀԿ (Հայաստան) 38

II. Ծրագրի մասնակից կազմակերպությունները **43**

Ուկրաինական ոչ առևտրային կազմակերպություններ 45

«Երեխայի ժպիտը» շրջանային բարեգործական հիմնադրամ 46

«ՍՎՈՒ» բարեգործական հիմնադրամ 48

«Սոցիալական նախաձեռնությունների և գործընկերության կենտրոն» (ՍՆԳԿ) 52

«Պաշտպանության իրավունք»բարեգործական հիմնադրամ»բարեգործական կազմակերպություն 54

Վրացական ոչ առևտրային կազմակերպությունները **58**

«Խաղաղարար և գործարար Կովկաս» ասոցիացիա 59

«Իմեդի» ասոցիացիա՝ ՆՏԱ հանդիսացող կանանց շարժում հանուն խաղաղության 62

ՆՏԱ ինտեգրման և աջակցության կենտրոն 64

Սենակի համայնքային կրթական կենտրոն 66

Հայաստանյան ոչ առևտրային կազմակերպություններ **69**

«Նռան հատիկ» համայնքային զարգացման հիմնադրամ 70

«Կանայք հանուն զարգացման» ՀԿ 72

«Լիության տուն» համայնքային կենտրոն 74

«Հայ միասնության խաչ» բարեգործական մշակութային ՀԿ 76

Հյուսիսկովկասյան ոչ առևտրային կազմակերպություններ, Ռուսաստան **79**

Սոցիալական կողմնորոշմամբ «Օկտավա» դաղստանյան շրջանային ՀԿ 80

«Կանանց ռեսուրս կենտրոն» չեչենական շրջանային բարեգործական ՀԿ 83

«Կովկասյան նախաձեռնությունների կենտրոն»միջտարածաշրջանային ՀԿ 86

«Սինտեմ» չեչենական տարածաշրջանային սոցիալ-հոգեբանական ռեսուրս կենտրոն ՀԿ 88

III. ՆՏԱ-ների և փախստականների ինտեգրման հաջողված փորձը Ուկրաինայում, Վրաստանում, Հայաստանում, Հյուսիսային Կովկասում (Ռուսաստան) **93**

ՆՏԱ-ների և փախստականների ինտեգրման ուկրաինական փորձը **97**

Ուկրաինայում ՆՏԱ-ների և փախստականների ինտեգրման իրավիճակի հակիրճ վերլուծություն 98

Ուսուցողական այց Ուկրաինա 102

ՆՏԱ-ների և փախստականների ինտեգրման հաջողված օրինակներ Ուկրաինայում **109**

«Կարիտաս Կրամատորսկ» բարեգործական հիմնադրամ 110

«Ստանցիա Խարկով» կամավորական նախաձեռնություն 116

«Դոնբաս ՍՕՍ» ՀԿ 122

ՆՏԱ-ների և փախստականների ինտեգրման վրացական փորձը **129**

Վրաստանում ՆՏԱ-ների և փախստականների ինտեգրման իրավիճակի հակիրճ վերլուծություն 130

Ուսուցողական այց Վրաստան 133

ՆՏԱ-ների և փախստականների ինտեգրման հաջողված օրինակներ Վրաստանում **139**

«Լուսավորություն և տիեզերք» մանկավարժների միություն 140

«Համաձայնություն» ՆՏԱ կանանց ասոցիացիա (Consent) 146

«Աբխազետի» բարեգործական մարդասիրական կենտրոն 153

ՆՏԱ-ների և փախստականների ինտեգրման հայաստանյան փորձը **161**

Հայաստանում ՆՏԱ-ների և փախստականների ինտեգրման իրավիճակի հակիրճ վերլուծություն 162

Ուսուցողական այց Հայաստան 166

ՆՏԱ-ների և փախստականների ինտեգրման հաջողված փորձ Հայաստանում **171**

ԿԱԶԱ շվեցարական մարդասիրական հիմնադրամ 172

Հայաստանի փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման ազգային կենտրոն 179

«Հալէպ» հայրենակցական բարեսիրական ՀԿ 186

ՆՏԱ-ների և փախստականների ինտեգրման հյուսիսկովկասյան (ռուսաստանյան) փորձը 193

Հյուսիսային Կովկասում (Ռուսաստան) ՆՏԱ-ների և փախստականների ինտեգրման իրավիճակի համառոտ վերլուծություն 194

Հյուսիսային Կովկասի հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող ինտեգրման աշխատանքների ներկայացում 199

Հյուսիսային Կովկասում (Ռուսաստան) ՆՏԱ-ների և փախստականների ինտեգրման հաջողված օրինակներ 203

«Սինտեմ» չեչենական տարածաշրջանային սոցիալ-հոգեբանական կենտրոն ՀԿ 204

Կովկասյան նախաձեռնությունների կենտրոն 208

«Կանանց ռեսուրս կենտրոն» չեչենական տարածաշրջանային ՀԿ 211

Եզրակացություն 219

«Հաղթահարենք պատերազմի հետևանքները միասին» ծրագրի մասին 233

Ներածություն

Ուկրաինայի, Վրաստանի, Հայաստանի և Հյուսիսային Կովկասի (Ռուսաստան) քաղաքացիական հասարակության փորձագետների փորձի միջազգային փոխանակումներ ՆՏԱ և փախստականների ինտեգրման թեմայով

Սույն գրքույկը Ուկրաինայում, Վրաստանում և Հայաստանում անցկացված երեք ուսուցողական այցերի արդյունքն է, որոնց նպատակը ներքին տեղահանված անձանց (ՆՏԱ) և փախստականների ինտեգրումն էր: Այցերին մասնակցել են Ուկրաինայի, Վրաստանի, Հայաստանի և Ռուսաստանի, (Հյուսիսային Կովկաս) հասարակական կազմակերպությունների 16 ներկայացուցիչներ:

Այցերն անց են կացվել 2017թ.-ին «Հաղթահարենք պատերազմի հետևանքները միասին» միջազգային ծրագրի վեց աշխատանքային ուղղություններից մեկի շրջանակում: Ծրագրի «ՆՏԱ-ների և փախստականների ինտեգրում» աշխատանքային ուղղությունները համատեղ իրականացրել են գերմանական հասարակական կազմակերպությունները՝ Գերմանա-Ռուսական փոխանակում-ն (DRA) և երեք գործընկերներ՝ Կռաինա վիլնիխ յուդեյ («Країнавільних людей», Ուկրաինա), Մշակութա-մարդասիրական հիմնադրամ «Սուխումի» (Վրաստան) և «Հայկական Կարիտաս» (Հայաստան):

Այստեղ մեկտեղված նյութերը ծանոթացնում են ընթերցողին այս այցերի կազմակերպիչների և մասնակիցների հետ,

ներկայացնում են նրանց կատարած աշխատանքները, ինչպես նաև երեք երկրներում ու Ռուսաստանի (Հյուսիսային Կովկաս) ներքին արտահանված անձանց (ՆՏԱ) և փախստականների ինտեգրման գործով զբաղվող կազմակերպությունների մի շարք ընտրված օրինակներ և շատ հետաքրքիր, յուրահատուկ և հաջողված փորձի դրսևորումներ:

Հուսով ենք, որ մեր գրքույկը օգտակար կլինի բոլոր նրանց, ովքեր աշխատում են ՆՏԱ-ների և փախստականների ինտեգրման բնագավառում կամ հետաքրքրված են այս թեմայով:

«Հաղթահարենք պատերազմի հետևանքները միասին» ծրագրի մասին

«Հաղթահարենք պատերազմի հետևանքները միասին» միջազգային ծրագիրը (2016թ. օգոստոս-2019թ. հունվար) մշակվել և իրականացվել է «Գերմանա-Ռուսական փոխանակում» (Deutsch-RussischerAustausch, DRA) գերմանական հասարակական կազմակերպության և հինգ երկրների՝ Ուկրաինայի, Վրաստանի, Հայաստանի, Ռուսաստանի և Գերմանիայի յոթ հասարակական կազմակերպությունների հետ համատեղ՝ Գերմանիայի արտաքին գործերի նախարարության ֆինանսական աջակցությամբ: Ծրագրի հիմնական նպատակն է սատարել քաղաքացիական հասարակությանը ռազմական գործողությունների արդյունքում առաջ եկած հակամարտությունների հաղթահարման գործում և կանխարգելել նոր հետպատերազմյան հակամարտությունների առաջացումը, հատկապես Ուկրաինայում, որտեղ չդադարող ռազմական գործողությունների արդյունքում առաջացած շատ խնդիրներ պահանջում են շուտափույթ լուծում, ինչպես նաև Վրաստանում, Հայաստանում և Հյուսիսային Կովկասում, որտեղ հասարակական կազմակերպությունները ակտիվորեն լուծում են նմանատիպ խնդիրները:

ԳՈՓ-ի և գործընկերների կողմից այդ նույն թեմայով 2015-2016թթ.-ին իրականացված ծրագիրն ի ցույց դրեց հասարակական կազմակերպությունների միջև կենդանի հաղորդակցության արդյունավետությունը տարբեր տարածաշրջաններում, որտեղ ռազմական գործողություններ են ընթացել կամ դեռևս ընթանում են[1]: Միևնույն ժամանակ, քաղաքացիական հասարակությունը ծրագրի մասնակից բոլոր երկրներում համարում ենք հակամարտությունների հաղթահարման և խաղաղարարության կենտրոնական գործոն:[2]

Ծրագրի շրջանակներում պատերազմով պայմանավորված խնդիրների և հակամարտությունների լուծման և կանխարգելման գործում քաղաքացիական հասարակությանն ուղղված աջակցությունը տրամադրվում է բազմապիսի ձևաչափերով, որոնցից են՝

- վերապատրաստման խորացված դասընթացներ փորձը տարածողների և ստորև նշված վեց ուղղություններով աշխատող անձանց համար,
- ֆինանսական և փորձագիտական աջակցություն վերապատրաստման մասնակիցների նախաձեռնած փոքր ծրագրերի համար,
- հակամարտության (նախկինում հակամարտության հարթակ եղած) շրջաններում հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համար միջազգային հանդիպումների կազմակերպում՝ միջազգային համաժողովներ, կլոր սեղաններ և ուսուցողական այցեր,

---

1 Ср. https://kriegsfolgen-ueberwinden.de/ru/vorgaengerprojekt/schulungen-vernetzungstreffen/soziale-integration и https://kriegsfolgen-ueberwinden.de/ru/vorgaengerprojekt/schulungen-vernetzungstreffen/vernetzungstreffen-integration

2 Ср. https://kriegsfolgen-ueberwinden.de/ru/vorgaengerprojekt

- միջտարածաշրջանային տեղեկատվական քարոզարշավներ,
- հատուկ գրականության, տեղեկատվական և ուսումնական նյութերի հրապարակում:

Թեմատիկ առումով ծրագիրը ներառում է աշխատանքային վեց ոլորտ՝

- զինված հակամարտության հետևանքով ստացված ցնցումների ուղղությամբ աշխատանք,
- Պատերազմով հրահրված ընտանեկան բռնությանը հակազդելու ռազմավարություններ,
- «Ֆորում-թատրոնի» միջոցով երկխոսության հաստատման և հակամարտությունների խաղաղ կարգավորման ուղղությամբ աշխատանք,
- Զինված հակամարտությամբ պայմանավորված խտրականության դեմ պայքար,
- ներքին տեղահանվածների և փախստականների ինտեգրում,
- աջակցություն սոցիալական ձեռնարկատիրության զարգացմանը՝ սոցիալ-տնտեսական կոնֆլիկտների լուծման նպատակով:

«Հաղթահարենք պատերազմի հետևանքները միասին» ծրագրի մանրամասն նկարագիրը կարող եք տեսնել այս հրատարակության հետևյալ էջերում 233-241 և ծրագրի կայքում (գերմաներեն, ուկրաիներեն, ռուսերեն և անգլերեն) www.overcome-war.org.

«ՆՏԱ-ՆԵՐԻ և ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՈՒՄ» ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ծրագրի՝ «ՆՏԱ-ների և փախստականների ինտեգրում» աշխատանքային ուղղությունը իրականացվել է համատեղ չորս կազմակերպությունների կողմից. գերմանական ԳՈՓ կազմակերպությունը, որը հասարակական կազմակերպություն է և ունի ավելի քան 25 տարվա աշխատանքային փորձ

գերմանական և արևելաեվրոպական տարածաշրջանի քաղաքացիական հասարակությունների միջև լայն թեմատիկայով համագործակցության առումով: Իսկ Ուկրաինայի, Վրաստանի և Հայաստանի բոլոր երեք գործընկերները՝ «Կռաինա վիլնիխ լյուդեյ»-ը, «Սուխումի» մշակութային և մարդասիրական հիմնադրամը և «Հայկական Կարիտաս»-ը, իրենց երկրներում ՆՏԱ-ների և փախստականների ինտեգրման հարցերով զբաղվող առաջատար կազմակերպություններ են:

Գործընկեր չորս կազմակերպությունների առավել մանրամասն բնութագրին է նվիրված մեր հրատարակության առաջին մասը:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԱՅՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Ծրագրի «ՆՏԱ-ների և փախստականների ինտեգրում» աշխատանքային ուղղությամբ գլխավոր գործողություններն էին յոթօրյա տևողությամբ երեք ուսուցողական այցերն Ուկրաինա, Վրաստան և Հայաստան, ինչպես նաև Ռուսաստանի (Հյուսիսային Կովկաս) մասնակիցների աշխատանքային փորձի ներկայացումը և դրանց արդյունքների հիման վրա այս գրքույկի կազմումը:

Ծրագրի ղեկավար Մարիա Սլիզաչեկի (ԳՌՓ, Գերմանիա) ղեկավարությամբ ուսուցողական այցերը կազմակերպվել են համակարգող գործընկերների կողմից. Ուկրաինայում՝ Նադեժդա Խոմենկո («Կռաինա Վիլնիխ լյուդեյ»), Վրաստանում՝ Ալլա Գամախարիա և Մերի Գելաշվիլին («Սուխումի» մշակութային և մարդասիրական հիմնադրամ), Հայաստանում՝ Դիանա Միրիբյան («Հայկական Կարիտաս»): Այցերը նպաստեցին տարբեր երկրների ներկայացուցիչների փորձի կիրառմանը և տարբեր (հետ-) պատերազմական շրջաններում քաղաքացիական հասարակության ակտիվիստների ձեռք բերած նոու-հաուի ներդրմանը (ինչպես համանման և կոնկրետ), այնպես էլ ՆՏԱ-ների ինտեգրման ոլորտում:

Հարցաթերթիկային հարցման արդյունքում յուրաքանչյուր երկրից՝ Ուկրաինայից, Վրաստանից, Հայաստանից և Ռուսաստանից (Հյուսիսային Կովկաս), ընտրվել են չորս քաղաքացիական հասարակության ակտիվիստներ: Ուսուցողական այցերի նպատակը հենց այդ նույն երկրներում թեմատիկ իրավիճակի հետ ծանոթումն էր, բացառությամբ Ռուսաստանի (մասնակից երկրների միջև առկա հարաբերությունների պատճառով Հյուսիսային Կովկաս այց չի իրականացվել)։

Բոլոր 16 մասնակիցներն ունեն հարուստ փորձ ՆՏԱ-ների և փախստականների ինտեգրման գործում և ներկայացնում են այն կազմակերպությունները, որոնք այս ոլորտի առաջատարներից են իրենց երկրներում: Ավելացնենք, որ այդ կազմակերպություններից շատերը ստեղծվել են ՆՏԱ-ների կողմից: Այսպիսով, աշխատակիցները հաճախ պատերազմի և հարկադիր արտագաղթի սեփական փորձի կրողներ են:

Մեր հրատարակության երկրորդ մասում ներկայացված են բոլոր 16 մասնակից կազմակերպությունները:

Ուկրաինայի, Վրաստանի և Հայաստանի գործուղումների ընթացքում 16 փորձագետներ այցելեցին բարձր մասնագիտական կարողություններով ներկայացող 10-12 կազմակերպություններ: Դրանք միջազգային և տարածաշրջանային, և հիմնականում հասարակական կազմակերպություններ էին: Ուկրաինայի, Վրաստանի և Հայաստանի կազմակերպիչները ջանասիրաբար էին ընտրել այդ կազմակերպությունները՝ ելնելով մասնակիցների շրջանում նախապես անցկացված հարցմամբ բացահայտված առաջնային թեմատիկ հետաքրքրություններից, կարևորված հարցերի համար պատասխաններից և մասնակիցներին հետաքրքրող խնդիրների լուծումներից: Մեկ այլ չափանիշ է այն, որ այցելությունների ծրագրում ներգրավված կազմակերպությունների փորձը պետք է հետաքրքրի ոչ միայն

արտերկրի գործընկերների, այլև նույն երկրի մասնակիցներին:

Ներկայացվեցին ՆՏԱ-ների և փախստականների ինտեգրման աշխատանքների տարբեր փորձառություններ և ուղղություններ՝ սոցիալական ձեռներեցություն, կրթական, տնտեսական, ձեռնարկատիրական, մշակութային, սոցիալական, հոգեբանական ծրագրեր, բռնության կանխարգելում, երիտասարդների հետ աշխատանք, խաղաղարար աշխատանք և այլն:

Վերջում մասնակիցները կանգնեցին լուրջ խնդրի առջև. ընտրել ՆՏԱ-ների և փախստականների ինտեգրման երեքական առավել հաջողված փորձի օրինակ յուրաքանչյուր երկրից: Ավելի օբյեկտիվ գնահատական ստանալու համար մշակվեց հարցաթերթ, որը լրացրեցին ուսուցողական այցի բոլոր 16 մասնակիցները: Այնուամենայնիվ, դժվար էր սահմանափակվել յուրաքանչյուր երկրում գործող միայն երեք կազմակերպությունների փորձով: Արդարության համար պետք է խոստովանել, որ շատ լավ օրինակներ մնացել են չնկարագրված:

Ներկայացված է նաև երեք օրինակ Հյուսիսային Կովկասից: Քանի որ Հյուսիսային Կովկաս այց չի կազմակերպվել, նկարագրվում են մասնակից կազմակերպությունների գործունեությունից վերցված այն օրինակները, որոնք ներկայացվել են գործընկերներին և քննարկվել այցերի ընթացքում:

Չորս երկրների հաջողված փորձի օրինակները ներկայացված են այս գրքույկի երրորդ բաժնում: Այս բաժնում ներկայացված չորս հատվածներին նախորդում է այդ երկրներում ՆՏԱ-ների և փախստականների վիճակի կարճ վերլուծությունը, ինչպես նաև տեղեկությունը մեր ծրագրի շրջանակներում իրականացվող ուսուցողական այցերի մասին:

Ուսուցողական այցերի 16 մասնակիցներն իրենց խոսքում նշում են, որ այդ փորձը նրանց շատ բան է տվել: Այս այցերի ընթացքում

նրանք միմյանց պատմեցին իրենց ձեռքբերումների մասին, ծանոթացան ավելի քան երեսուն այլ կազմակերպությունների աշխատանքներին, ուսումնասիրեցին և քննարկեցին տարբեր մոտեցումներ գործունեության՝ բոլորի համար ընդհանուր բնագավառում՝ ՆՏԱ-ների և փախստականների ինտեգրման գործում, խորացրեցին գիտելիքները, որդեգրեցին նոր գաղափարներ և ստացան նոր տպավորություններ: Մասնակիցների միջև հաստատվել են ամուր կապեր՝ ստեղծելով նոր հնարավորություններ փոխանակման, խորհրդատվության և համագործակցության համար:

Երկրների միջև կան շատ ընդհանրություններ, բայց առկա են նաև տարբերություններ: Ակտիվ քաղաքացիական հասարակությունը հատկապես տպավորիչ էր Ուկրաինայում: Այստեղ քաղաքացիական հասարակությունը զարմանալիորեն արագորեն արձագանքեց երկրում տեղի ունեցող ռազմական գործողություններին և բազմաթիվ կամավորների շնորհիվ շատ արագ ստեղծեց ՆՏԱ-ների և փախստականների համար աջակցության և ինտեգրման տարբեր ձևեր: Վրաստանում հատուկ ուշադրություն է դարձվել թիրախային խմբերի ինտեգրման օրենսդրական միջոցներին, ինչպես նաև երիտասարդների համար հաջող կրթական ծրագրերին և լոբբիստական մեթոդներին: Ուկրաինացի գործընկերներն այդ մեթոդները անմիջապես իրականացրել են Ուկրաինայում: Հայաստանում ներկայացվեցին հատկապես ՆՏԱ-ների և փախստականների տնտեսական ինտեգրման շատ հաջողված ուղիներ, մասնավորապես `զբոսաշրջության ոլորտում փոքր և սոցիալական ձեռնարկատիրությանն աջակցելու եղանակով: Օգտակար գաղափարներ հատկորոշվեցին երեխաների և դեռահասների հետ աշխատանքի վերաբերյալ: Ռուսաստանում՝Հյուսիսային Կովկասում աշխատող մեր գործընկերները ներկայացրեցին իրենց տարածաշրջանից մի քանի ծրագրեր:

Սույն գրքույկը լույս է տեսնում չորս լեզուներով՝ ուկրաիներենով, ռուսերենով, հայերենով և վրացերենով: Հուսով ենք, որ այս

գրքույկը կգտնի ընթերցողներ՝ ծանոթացնելու նրանց ՆՏԱ-ների և փախստականների ինտեգրման ոլորտում Ուկրաինայում, Վրաստանում, Հայաստանում և Ռուսաստանում (Հյուսիսային Կովկասում) աշխատանքի հաջողված փորձին: Այս բոլոր կազմակերպությունները տարբերվում են միմյանցից, սակայն բոլորին միավորում է ՆՏԱ-ներին, փախստականներին և պատերազմի հետևանքների ազդակիր այլ անձանց օգնելու, այս հետևանքները միասին հաղթահարելու, այս մարդկանց իրենց հայրենիքում արժանապատիվ կյանքի վերադարձնելու, ինչպես նաև նոր հակամարտությունները կանխելու համար ամեն հնարավորն անելու ցանկությունը:

Ալլա Գամախարիա

Վրաստանում ծրագրի համակարգող
և հրատարակության կազմող

Մարիա Սլեզաչեկ

«Հաղթահարենք
պատերազմի հետևանքները միասին»
ծրագրի ղեկավար

Յուրաքանչյուր երկիր կատարած այցից և ուսուցողական բոլոր այցերի ավարտից հետո հավաքված 16 մասնակից ակտիվիստների արձագանքներն ի ցույց են դնում ուսուցողական այցերի ողջ հաջողությունը: Օրինակ՝

... Ուկրաինա կատարված ուսուցողական այցի մասին

«Ուկրաինայում մեր տեսած ինտեգրացիոն ծրագրերի փորձը շատ հստակ ներկայացրեց աշխատանքի հսկայական ծավալը՝ մարդասիրական օգնությունը, հոգեբանական աջակցությունը, (...) Նրանցից շատերը օգնում էին մարդկանց, կազմակերպեցին կանանց և երեխաների, ապա հաշմանդամների տարհանումը վտանգելով իրենց կյանքը: Այժմ շատերն աշխատում են լուծել զբաղվածության, հոգեբանական ադապտացիայի, երեխաների և ծնողների հետ վերամիավորման, փոքր բիզնեսի զարգացման խնդիրները: Գործում են անվճար իրավաբանական ծառայություններ, իրականացվում է ՆՏԱ-ների շահերի պաշտպանություն և լոբբինգ:»

(Ծրագրի վրացի մասնակիցների հաշվետվություններից)

... Վրաստանում կատարված ուսուցողական այցի մասին

«Մենք տեսանք բազմաթիվ հասարակական կազմակերպություններ, որոնք շատ քայլեր են անում խնդրի լուծման համար: Շատ հարցերին պատասխան ստացանք: Վրաստանում հակամարտության ողջ համատեքստը չէ, որ համընկնում է Ուկրաինայի հետ: Մենք ունենք մեր սեփական առանձնահատկությունները: Վրացական հասարակական կազմակերպությունները հասել են նրան, որ քաղաքացիական հատվածը համագործակցում է իշխանությունների հետ, ես տեսա, որ իշխանությունները շատ բաներ են անում իրենց ժողովրդի համար, նույնիսկ այն բացասական մթնոլորտում, որի մասին մենք լսում էինք, ես բացահայտ տեսնում էի իշխանությունների կողմից եկող աջակցության ուղիները, և այդ պրակտիկան կարելի է ներկայացնել իմ երկրում, հանրապետությունում, որպես հաջողված փորձ»:

(Ծրագրի ուկրաինացի մասնակիցների հաշվետվություններից)

... Հայաստան կատարված ուսուցողական այցի մասին

«Հետաքրքիր էր եկեղեցականների կլոր սեղան քննարկումը, շատ կարևոր է Եկեղեցին հայ հասարակության համար: Մենք հաճելիորեն զարմացանք փախստականներին օժանդակելու միասնականության, տարբեր դավանանքների սարկավագների ծառայության, ինչպես նաև փախստականների նկատմամբ տեղական բնակչության բարեկամական վերաբերմունքից. 10-ից միայն մեկ կազմակերպություն էր, որ մեզ տեղեկացրեց խտրականության փաստերի մասին: Այս օրինակից դասեր է պետք քաղել»:

(Ծրագրի ռուս մասնակիցների հաշվետվություններից)

I. Գործընկեր կազմակերպությունները

Գերմանա-Ռուսական փոխանակում (DRAe. V./(Deutsch-RussischerAustausch, Գերմանիա)

Գերմանիա, Բեռլին-13357, Բադշտրասսե 44
(Badstraße 44, 13357 Berlin, Deutschland)
+49 (0)30 446680-0
info@austausch.org
austausch.org/ru
fb.com/draberlin

ГОФ (DRA) հասարակական կազմակերպությունը միջազգային ոչ առևտրական կազմակերպություն է, որն հիմնադրվել է Բեռլինում: Հիմնադրվելով 1992թ. Բեռլինում «Գերմանա-Ռոսական փոխանակում» անվամբ (Deutsch-RussischerAustausch, ГОФ)՝ կազմակերպությունն սկսեց իր աշխատանքները Ռուսաստանում ժողովրդավարական գործընթացների և քաղաքացիական հասարակության զարգացմանը նպաստելու նպատակով: ГОФ-ն (DRA նաև աշխատում է Գերմանիայում և 1997թ.-ից ի վեր իրականացնում է ծրագրեր Ուկրաինայում և Բելառուսում, ապա նաև՝ Վրաստանում և Հայաստանում: Բացի այդ, ГОФ-ն մշտապես համագործակցում է այս և այլ երկրների, այդ թվում՝ Լեհաստանի, Հունգարիայի, Ֆրանսիայի, Հոլանդիայի, Բոսնիայի և այլն գործընկերների հետ:

2011 թվականին ГОФ-ն (DRA) դարձավ ԵՄ – Ռուսաստան Քաղաքացիական ֆորումի, ՔՀՖ, նախաձեռնողն ու կազմակերպիչը, որում այժմ ընդգրկված են 150 կազմակերպություններ: Բացի այդ, կազմակերպությունը դարձավ

քաղաքացիական նախաձեռնությունների միավորմանը և Դոնբասի վերականգնմանը ուղղված քաղաքացիական հասարակության եվրոպական բաց հարթակի՝ CivilM+-ի համահիմնադիրներից մեկը:

ԳՈՓ-ի (DRA)ի գործունեությունը իրականացվում է բացառապես ծրագրի դրամաշնորհների, կամավոր նվիրատվությունների և անդամավճարների միջոցներով:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Եվրոպական քաղաքացիական հասարակության աջակցություն և հզորացում, ինչպես նաև միջսահմանային համագործակցության և խաղաղ երկխոսության ստեղծում ժողովրդավարական Եվրոպայում:

ՏԵՍԼԱԿԱՆ

Անկախ քաղաքացիական հասարակությունը, դիսկուրսում առկա բազմակարծությունը և մարդու և քաղաքացու իրավունքները հարգելը ժողովրդավարական հասարակության հիմնական նախադրյալներն են: Դրանց պահպանումը և զարգացումը մշտապես պահպանում են իրենց հրատապությունը, ինչը պահանջում է միջազգային մակարդակով համատեղ կոմպետենտ գործողություններ: ԳՈՓ-ը, բազմաթիվ միջազգային գործընկերների հետ միասին, նպաստում է այդ նպատակների իրագործմանը:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Եվրոպայի քաղաքացիական հասարակության կառույցների ամրապնդումը, հատկապես հետխորհրդային տարածքում,
- խաղաղարարություն, հակամարտությունների կարգավորում և կանխարգելում,
- միջէթնիկական և միջմշակութային փոխազդեցություն,
- ինտեգրում, ներառում,

- մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանություն,
- քաղաքացիական ներգրավվածություն և կրթություն,
- ժողովրդավար հասարակություն և ազատ լրատվամիջոցների ձևավորում,
- կլիմայի և շրջակա միջավայրի պահպանություն։

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

- ուսուցում, թրեյնինգներ և ուսուցողական այցեր հասարակայնորեն ակտիվ մասնագետների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների որակավորման բարձրացման համար,
- Արևելյան և Արևմտյան Եվրոպայում ակտիվիստների ու մասնագետների միջև փորձի փոխանակման և ցանցային համագործակցության հարթակների ստեղծում միջազգային համաժողովների, կլոր սեղան քննարկումների, պանելային քննարկումների և փառատոնների միջոցով,
- Արևելյան և Արևմտյան Եվրոպայի տարբեր երկրներից կամավորների և մասնագետների փոխանակման ծրագրեր,
- Ուկրաինայում մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ հակամարտության գոտիներում մոնիթորինգի առաքելություններ,
- վերլուծական ուսումնասիրություններ, հրատարակչական աշխատանքներ,
- գերմանական և արևմտյան եվրոպական հիմնադրամների շրջանում խորհրդատվության տրամադրում Արևելյան Եվրոպայի հետ հասարակականև քաղաքական միությունների համագործակցության խնդիրների շուրջ։

«Կռաինա վիլնիխ լյուդեյ» («Країна вільних людей»,Ուկրաինա)

Ուկրաինա, ք. Կրամատորսկ,
փ.Տրանսպորտնայա 20
+380 (99) 022 66 75
kvl.org.ua
fb.com/ngocfp

«Կռաինա վիլնիխ լյուդեյ» հասարակական կազմակերպությունը հանդիսանում է ԳՈՓ-ի հիմնական ուկրաինական գործընկերը՝ «Հաղթահարենք պատերազմի հետևանքները միասին» ծրագրի իրագործման շրջանակներում: «Կռաինա վիլնիխ լյուդեյ»-ը հիմնադրվել է 2014 թ. ապրիլին Դոնբասի քաղաքացիական ակտիվիստների կողմից: Այսօր կազմակերպությունը անցել է զարգացման ուղի՝ընդամենը երեք աշխատակից ունեցող հասարակական նախաձեռնությունից մինչև ուժեղ կազմակերպություն, որն արդեն տրամադրել է տարատեսակ օգնություն 47,5 հազար ՆՏԱ-ի, 23 հազ.քաղաքացիների ռազմական գոտում: Բացի այդ, աշխատակիցների և կամավորների ուժերով տարահանվել են 4,5 հազար մարդ պատերազմական գոտուց, ևս 5 հազար երեխա ստացել է հոգեբանական աջակցություն: Կազմակերպությունը աշխատում է 300-ից ավելի բնակելի տարածքներում ռազմաճակատային տարածքներում՝ տրամադրելով նյութական և ոչ նյութական օգնություն տեղացի բնակչությանը:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Զինված հակամարտության հետևանքների նվազեցում կառուցողական փոխազդեցության և իրական փոփոխությունների միջոցով:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Մարդասիրական օգնություն և ժամանակավոր կացարանով ապահովում,
- Զինված հակամարտությունների հետևանքների նվազեցում և շահերի պաշտպանություն,
- Գոյության միջոցների ապահովում և տնտեսական զարգացում,
- Հոգեբանա-սոցիալական աջակցություն տուժած բնակչությանը,
- Երեխաների և երիտասարդների զարգացում ու պաշտպանություն,
- Խաղաղարար գործունեություն:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

- ոչ պարենային, բժշկական, դրամական օժանդակության բաշխման միջոցով տուժած բնակչության համար հիմնական կարիքների բավարարման մատչելիության ապահովում,
- կոմպակտ բնակավայրերի ստեղծում և պահպանում,
- հասարակության ներուժի ամրապնդում և սոցիալական համախմբվածության մեծացում՝ սոցիալական ուղղվածության նախաձեռնությունների իրականացման միջոցով,
- տեղական համայնքների աջակցությունը «Երաշխիք աշխատանքի դիմաց» ծրագրի միջոցով,

- փոքր ֆերմերական տնտեսությունների և կոոպերատիվների վերականգման և գյուղատնտեսության զարգացման միջոցով,
- ենթակառուցվածքների վերականգնում (նախագծային փաստաթղթերի ստեղծում, դպրոցների ամբողջական վերանորոգում, հասարակական վայրերում խաղահրապարակների հիմնում),
- իրավապաշտպանությանը միտված արշավներ, օրենսդրական գործունեություն, տուժած բնակչության համար անվճար իրավաբանական խորհրդատվական աշխատանքների կազմակերպում և հակամարտության գոտում իրավաբանների շրջիկ այցելություններ, դատական վարույթի փաստաթղթերի պատրաստում և աջակցություն դատարաններում:
- պատերազմական հակամարտությունների հետևանքով առաջացած հոգեբանական ցնցումների հետ աշխատանք, անհատական և խմբային հոգեբանական աջակցության ցուցաբերում
- հոգեբանական-սոցիալական աջակցություն տարեցներին, սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին և ծնողներին, ինչպես նաև այլ խոցելի խմբերին,
- հետադարձ կապի ապահովումը տուժած բնակչության հետ՝ «թեժ գծի» գործարկմամբ և վերահասցեագրման մեխանիզմների մշակման միջոցով,
- ՆՏԱ երեխաների և երիտասարդների, ընդունող ԻՏՄ մասնակից հասարակության և երեխաների ինտեգրում՝ վերականգնողական ճամբարների, թեմատիկ, զարգացման, մարզական միջոցառումների, հանգստի, էքսկուրսիաների և արշավների կազմակերպման միջոցով,
- երիտասարդական ակումբների ձևավորում, որոնք տրամադրում են ոչ ֆորմալ կրթություն և քաղաքացիական մասնակցության հնարավորությունների ստեղծում, երիտասարդական նախաձեռնությունների ծրագրերի նախապատրաստում և իրականացում,

- հասարակության մեջ մարդկանց միջև փոխըմբռնման մշակույթի զարգացում, տարբեր խմբերի ներկայացուցիչների միջև երկխոսության ուսուցում՝ բաց, հանդուրժող հասարակություն ձևավորելու նպատակով,
- երկխոսության և հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ աշխատանք։

Մշակութա-մարդասիրական հիմնադրամ «Սուխումի»Վրաստան)

Վրաստան, ք. Քութաիսի, Մալոբլիշվիլի 6
+995 431 27 29 02
wombfansukhumi@gmail.com
fsokhumi.ge
fb.com/fsokhumi

Մշակութա-մարդասիրական հիմնադրամ «Սուխումի» կանանց հասարակական կազմակերպությունը ստեղծվել է Աբխազիայի ներքին տեղահանված կանանց կողմից Քութաիսիում (Արևմտյան Վրաստան) 1997 թվականին:

Կազմակերպության առաջնային խնդիրն էր վրաց-աբխազական հակամարտությունից տուժած (14 օգոստոս, 1992 – 29 սեպտեմբեր, 1993) և Քութաիսիում ապրող Աբխազիայի ՆՏԱ կանանց հետ-կոնֆլիկտային տնտեսական, հոգեբանական և սոցիալական վերականգնումը, աստիճանաբար աշխատանքը ընդլայնվեց ողջ Արևմտյան Վրաստանով (Իմերեթիա, Մեգրելիա, Գուրիա, Աջարիա):

Սկզբում որոշարկվեց գործունեության գենդերային վեկտորը: Այն թիրախավորում էր կնոջը, նրա կենսակերպն և հիմնական կարիքները՝ փորձելով ստեղծել կայուն զարգացման հնարավորություն կանանց համար, փոխել և բարելավել նրա դիրքը ընտանիքի և հասարակության մեջ:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Կանանց ակտիվության զարգացումը կրթական, իրավական, տնտեսական, սոցիալական, մշակութային գործունեության միջոցով, կնոջ դերի բարձրացումը՝ Վրաստանում դեմոկրատական հասարակության կազմավորման և հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացում:

ՏԵՍԼԱԿԱՆԸ

Հասնել գենդերային հավասարության և ունենալ բռնությունից զերծ աշխարհ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Կինը և գենդերային հավասարությունը,
- Կինը և խաղաղարարությունը,
- Կինը և բռնությունից զերծ հասարակությունը,
- Աշխատանքը երիտասարդների հետ,
- Աշխատանքը ՆՏԱ-ների հետ:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Կազմակերպությունը իր առջև դրված խնդիրները իրականացնում է քաղաքացիական կրթության, հետազոտության, տեղեկատվության տարածման և ջատագովության միջոցով.

- քաղաքացիական կրթություն՝ թրեյնինգներ, աշխատաժողովներ, վարպետության դասեր,
- հետազոտություն՝ հարցումներ, խորքային հարցազրույցներ, ֆոկուս-խմբեր, վերլուծություններ,
- տեղեկատվություն/քարոզչություն՝ հասարակական բանավեճեր, կլոր սեղան քննարկումներ, օրենսդրական նախաձեռնություններ, հրատարակություններ, քաղաքացիական ֆորումներ,

սոցիալական տեսահոլովակներ, ռադիո և հեռուստահաղորդումներ, գովազդներ, ֆիլմեր, ֆորում-թատրոն, ստվերների թատրոն,

- խորհրդատվություններ՝ իրավաբանական, հոգեբանական, վերարտադրողականության թեմատիկայով։

ԱՐԱՄՏՅԱՆ ՎՐԱՍՏԱՆԻ «ՍՈՒԽՈՒՄԻ» ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒՄ ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆ՝

- Կանանց աջակցման 9 կենտրոններ,
- Կանանց ընտրողների 8 ակումբներ,
- Գենդերային խորհրդատվական 4 խորհուրդ,
- 9 երիտասարդական ակումբ,
- Ֆորում- թատրոն,
- Ստվերների թատրոն։

«Հայկական Կարիտաս» բարեսիրական ՀԿ (Հայաստան)

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ք. Գյումրի 3118, Օ. Սարգսյանի անվան փ., 3-րդ նրբանցք, տ. 8 +374 312 57 20 1
info@caritas.am
caritas@caritasarmenia.org
caritas.am
fb.com/ArmenianCaritas

Հայկական Կարիտաս
Armenian Caritas

«Հայկական Կարիտաս»-ը բարեգործական հասարակական կազմակերպություն է, որը հիմնվել է 1995թ. Հայ կաթողիկե եկեղեցու կողմից: «Հայկական Կարիտաս»–ը, ունենալով բարեգործական հասարակական կազմակերպության կարգավիճակ, կենտրոնացնում է իր ուժերը սոցիալական ապահովության ծրագրերի, համայնքային զարգացման՝ կենսապայմանների և կրթության բարելավման համար առավել խոցելի սոցիալական խմբերին ցուցաբերվող հանրային առողջության, վերադարձողների համար կայուն վերաինտեգրման միջոցառումներ հանդիսացող միգրացիոն և ինտեգրացիոն ծրագրերի, հումանիտար և զարգացման գործողությունների վրա: Իր գործունեության մեկնարկից ի վեր «Հայկական Կարիտաս»-ը աջակցել է Հայաստանում հազարավոր մարդկանց մոտավորապես 125 համայնքներից և շարունակում է ընդլայնել իր ծրագրերը համահայաստանյան ծածկույթով:

Կազմակերպությունը գործում է Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Արարատի մարզերում և մայրաքաղաք Երևանում: Կազմակերպության ինտեգրացիոն գործունեության շրջանակներում 2000-ից ավելի սիրիահայեր օգտվել են տարբեր տիպի օժանդակության հնարավորություններից: Այսօր «Հայկական Կարիտաս»-ն ունի հստակ ինստիտուցիոնալ բազա, հստակ սահմանված առաքելություն և տեսլական, մեծաքանակ տեղական և միջազգային գործընկերներ: «Հայկական Կարիտաս»-ը Caritas Internationalis և Caritas Europe համադաշնության, ինչպես նաև Կարիտասի միջազգային ցանցի անդամ է: Այս ցանցի կազմում ներառված են ավելի քան 160 անդամ: Ցանցը տրամադրում է անհետաձգելի օգնություն, ինչպես նաև աջակցություն է ցուցաբերում աշխարհի տարբեր երկրների:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Սիրով ու սրտացավությամբ ծառայել տարբեր խոցելի խմբերին՝ հարգելով յուրաքանչյուրի արժանապատվությունը:

ՏԵՍԼԱԿԱՆԸ

Մարդկանց կյանքում տևական դրական փոփոխությունների հաստատումը սոցիալական արդարության խթանմամբ ու Հայաստանում կայուն զարգացման հնարավորությունների ապահովմամբ:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- երեխաների սոցիալական պաշտպանություն,
- հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառում,
- տարեցների սոցիալական ներառում և խնամք,
- աղետների ռիսկի նվազեցում և արտակարգ իրավիճակների արձագանքում,

- համայնքային զարգացում,
- միգրացիա և ինտեգրացիա,
- «Հայկական Կարիտասի» կազմակերպական զարգացում։

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Թիրախային խմբերի համար հիմնական կարիքների բավարարման, խնամքի և զարգացման ապահովման գործառույթների հետ մեկտեղ, Հայկական Կարիտասը իր ջանքերն ուղղում է նաև ջատագովությանն ու ավելի կայուն փոփոխությունների ապահովմանը միտված պետական սոցիալական քաղաքականության վերանայմանը՝

- սիրիահայերին մարդասիրական օգնություն տրամադրելու տարբեր ծրագրեր, որոնք հիմնականում նպաստեցին Սիրիայից առավել խոցելի խմբերի փախստականների համար կենսապայմանների ապահովմանը,
- սննդամթերքի, հիգիենայի պարագաների, ձմեռային հագուստի, վարձակալության և կոմունալ ծառայությունների, դեղորայքի և բժշկական օգնության տրամադրում, ինչպես նաև լեզվի դասընթացներին և Սիրիայից եկած փախստականների տարբեր շուկաներին և տոնավաճառներին մասնակցության ապահովում,
- թափուր աշխատատեղերի, բնակարանների վարձակալության գործակալությունների, դպրոցների և բուհերի, բժշկական ծառայությունների և թրեյնինգների վերաբերյալ տեղեկատվության հասանելիություն բոլոր շահառուներին,
- սիրիահայերի ինտեգրմանն աջակցող միջոցառումներ, մասնագիտական դասընթացներն ավարտելուց հետո գործիքներ տրամադրում, բիզնես-դասընթացների կազմակերպում,
- փոխառությունների տրամադրում փոքր և միջին բիզնեսի համար,

- լեզվի դասընթացների կազմակերպում,
- իրավաբանական աջակցության տրամադրում:

Բոլոր գործողություններն ուղղված են եկամուտների ստեղծմանն ու ստացմանը, սիրիահայերի զբաղվածության խնդիրների լուծմանը, քանի որ դրանք վճռորոշ գործոններ են ինտեգրման ոլորտում հաջողության հասնելու համար:

II. Ծրագրի մասնակից կազմակերպությունները

Ծրագրի մասնակից ուկրաինական ոչ առևտրային կազմակերպությունները

«Երեխայի ժպիտը» շրջանային բարեգործական հիմնադրամ

69035, Ուկրաինա, Զապորոժիե, Նեզավիսիմոյ
Ուկրաինի փ., տուն 40ա, գրասենյակ 14
+38 050 321 12 88, +38 093 323 47 73
childsmile.zp@gmail.com
childsmile.org.ua
fb.com/childsmilezp

«Երեխայի ժպիտը» Զապորոժիե շրջանային բարեգործական հիմնադրամը պաշտոնապես գրանցվել է 2013թ. ապրիլի 25-ին:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Օժանդակում է գիշերօթիկ դպրոցների և սոցիալ-հոգեբանական կենտրոնների երեխաների սոցիալապես ադապտացվելուն և ինտեգրվելուն մշակույթին և հասարակությանը, Ուկրաինայի արևելքում հակամարտության հետևանքով սոցիալապես անապահով ընտանիքների, ներքին տեղահանված անձանց և բնակչությանը նպատակային աջակցություն տրամադրելուն՝ համապարփակ ծրագրերի և միջոցառումների իրականացման միջոցով:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Զապորժյան և Դոնեցկյան շրջաններում (որոնք մասամբ Ուկրաինայի կառավարության կողմից են վերահսկվում)

հիմնադրամը իրականացնում է ծրագրեր, որոնք ուղղված են հոգեբանական և իրավաբանական աջակցության, զբաղվածության ուղղությամբ օժանդակության տրամադրմանը, սոցիալական աշխատողներին սատարմանը, դրամաշնորհների հատկացմանը: Միևնույն ժամանակ, աշխատում են ընտանեկան և երեխաներիի զարգացման կենտրոններ Զապորոժիեի և Դոնեցկի շրջաններում, որտեղ համալիր դասընթացներ են անցկացվում՝ուղղված ընտանիքի հոգեբանական աջակցությանը:

2015թ.-ից ի վեր կանոնավորապես անցկացվում է համաքաղաքային ընտանեկան փառատոն՝ «Ընկերներիշրջանակ», որն ուղղված է ՆՏԱ-ների ինտեգրմանը տեղական հասարակությունում:

2016թ.-ի ընթացքում աջակցություն է ցուցաբերվել 20 609 մարդու:

«ՍՎՈԻ» բարեգործական հիմնադրամ

Կիևի շրջ., Վասիլկովսկի թաղամաս, գ. Ռոսլավիչին, Շեվչենկո փ., 18գ
+38 050 384 76
+38 063 233 09 91, +38 066 135 88 51
o.sukorukova@svoyi.com.ua office@svoyi.com.ua
svoyi.com.ua/uk
fb.com/cf.svoyi

СВОЇ
БЛАГОДІЙНИЙ ФОНД

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«ՍՎՈԻ» բարեգործական հիմնադրամ» բարեգործական կազմակերպությունը»-ը («ՍՎՈԻ» ԲՀ ԲԿ) ստեղծվել է կամավորների կողմից 2014 թ. օգոստոսին՝ Դոնեցկի և Լուգանսկի շրջաններից և Ղրիմի Ինքնավար Հանրապետությունից ՆՏԱ-ներին աջակցություն ցուցաբերելու համար: Հենց սկզբից, երբ ռազմական գործողությունների հետևանքով սեփական տունը լքած մարդկանց հոսքը շատ մեծ էր, հիմնադրամը փորձեց ապահովել այն մարդկանց, ովքեր շտապ կերպով փախչում էին վտանգից, առաջին անհրաժեշտության իրերով՝ սնունդ, հագուստ, մթերք, կենցաղային իրեր և դեղեր: Այն ժամանակ բոլորը հավատում էին, որ դա երկար չի տևի, և մարդիկ կվերադառնան իրենց տները:

Սակայն որոշ ժամանակ անց պարզ դարձավ, որ ՆՏԱ-ների վերադարձը իրենց տները չի

լինի այնքան շուտ, որքան ուզում էին, իսկ մարդիկ բացի առաջին անհրաժեշտության իրերից, կարիք ունեին նոր հասարակությանն ինտեգրվելու աջակցության:

Հիմնադրամի կամավորները կազմակերպեցին դասընթացներ, որոնք օգնեցին աշխատանք գտնելու հարցում, կազմակերպեցին տարրական համակարգչային գրագիտության դասընթացներ, որտեղ տարեցներին սովորեցրեցին օգտվել ինտերնետից, պարզ ծրագրերից և սոցիալական ցանցերից, ինչը մեծապես նպաստեց աշխատանք գտնելուն, կենցաղային իրեր գտնելուն, հասանելիություն ապահովեցին ՆՏԱ-ներին օժանդակող ռեսուրսներին, նպաստեցին Ուկրաինայով մեկ սփռված հարազատների և ընկերների հետ կապ հաստատելուն:

Երեխաների համար ևս շատ դժվար էր նոր համայնք ինտեգրվել: Նրանց համար «ՍՎՈԻ» ԲՀ ԲԿ-ն իրականացրել է մի շարք ծրագրեր՝ ուղղված նրանց սոցիալականացմանը և տեղական համայնքին ինտեգրմանը:

2015 թ.-ի ամռանը երեք ամիս կամավորական կենտրոնում գործում էր ցերեկային մանկական ճամբար «Ամառը Ֆրոլովսկայում», որը հնարավորություն տվեց ՆՏԱ ընտանիքներից 250 երեխայի ավելի լավ ճանաչել Կիևը, սիրել իրենց նոր քաղաքը, ծանոթանալ համալսարան ընդունվելու հնարավորություններին և տեղեկանալ այն մասնագիտությունների մասին, որոնց կարիքն ունի քաղաքը:

2015 թ. սեպտեմբերից մինչ օրս գործում է «Տանիքի տակ» ՆՏԱ ընտանիքների երեխաների համար նախատեսված շաբաթական ակումբը, որտեղ կազմակերպվում են հետաքրքիր վարպետության դասեր, էքսկուրսիաներ և անգլերենի դասընթացներ: Ավարտական դասարանների աշակերտները հնարավորություն ունեն պատրաստվելու արտաքին անկախ

գնահատման՝ ուկրաիներենի և ուկրաինական գրականության, Ուկրաինայի պատմության քննություններին: Մենք խրախուսում ենք երեխաներին նոր ձեռք բերած տեղաբնակ ընկերներին բերել ակումբ, տեղաբնակ այն երեխաներին, ովքեր ծանր իրավիճակում են հայտնվել, մենք ներգրավում ենք պատանեկան ակումբում:

Կամավորական կենտրոնում, որը հիմնադրվել է 2014 թ. օգոստոսին «Ֆրոլովսկայա 9/11» -ում, կիևցի կամավորների կողքին կանգնած էին նաև ՆՏԱ կամավորներ: Մարդիկ եկան օգնության,և մի քանի օր անց նրանք վերադարձան ուրիշներին օգնելու համար: Ներկայումս հիմնադրամի մշտական կամավորների 70% -ը ՆՏԱ-ներ են:

«Սոցիալական նախաձեռնությունների և գործընկերությունների կենտրոն» (ՍՆԳԿ)

18001, Ուկրաինա, Չերկասկայա շրջ., ք.
Չերկասի, Բլագովեստմայա,170
+38 099 930 00 67, +38 099 342 91 12
csip.ngo@gmail.com
fb.com/CSIPngo

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ներքին տեղահանված անձանց ինտեգրում,
- երիտասարդական ծրագրեր՝ ուղղված խաղաղասիրական, խտրականության դեմ պայքարի, սոցիալական ակտիվիզմի ոլորտում երիտասարդական նախաձեռնությունների զարգացմանը և աջակցմանը,
- միջազգային փորձի փոխանակման և միջազգային համագործակցության ոլորտում ոչ ֆորմալ կրթական ծրագրերի իրականացում,
- կանանց իրավունքների պաշտպանություն և սոցիալականացում,
- հասարակության համախմբվածությանն ուղղված ծրագրեր:

Բացի դրանից, «ՍՆԳԿ» հասարակական կազմակերպության ներկայացուցիչները տեղական իշխանությունների և ՆՏԱ-ների իրավունքների և ազատության պահպանմամբ զբաղվող սոցիալական

կազմակերպությունների հետ կազմակերպեցին կլոր սեղան քննարկումներ։ Բազմիցս մասնակցել են ներգաղթյալների թեմաներով հեռուստաեթերներին՝ կոտրելով կարծրատիպերը և նվազեցնելով ընդունող համայնքի և ՆՏԱ-ների միջև լարվածությունը։

Բացատրական աշխատանքները, նոր վայրում ՆՏԱ-ների կյանքը լուսաբանելը, ընդունող համայնքի հետ փոխգործակցությունը, տարբեր միջոցառումներ իրականացնելը և պարզ հաղորդակցությունը օգնում են կոտրել կարծրատիպերը և նախապաշարմունքները ՆՏԱ-ների վերաբերյալ, և, ի վերջո, նվազեցնել հասարակության մեջ լարվածությունը, իսկ ՆՏԱ-ներին տալ ուժ և անհրաժեշտ ճանաչում այն հասարակությանն ինտեգրվելու համար, որը վերջիններս հարկադրաբար կամ կամավոր հիմունքներով ընտրել են որպես իրենց նոր տունը։

«Պաշտպանության իրավունք» բարեգործական հիմնադրամ» բարեգործական կազմակերպություն

Ուկրաինա, Շեկավիցկայա փ., 55
+38 044 337 17 62
a.galkin@r2p.org.ua
r2p.org.ua
fb.com/right2protection

«Պաշտպանության իրավունք» ԲՀ-ն բարեգործական հիմնադրամ է, որը պաշտպանում է ապաստան հայցողներին, փախստականներին, քաղաքացիություն և փաստաթղթեր չունեցող անձանց, ներքին տեղահանված անձանց և հակամարտության հետևանքով տուժած անձանց (այսուհետ՝ շահառուներ)։

«Պաշտպանության իրավունք» ԲՀ-ն Ուկրաինայում միգրացիայի ոլորտում ակտիվ հասարակական հատվածի ճանաչված առաջատարն է։ Մեր շահառուները ունեն բոլոր պայմանները անվտանգ և արժանապատիվ կյանքի համար։

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Մենք ձգտում ենք մեղմել զանգվածային հակամարտությունների, ռեպրեսիվ ռեժիմների և բնական աղետների բացասական ազդեցությունները մեր շահառուների վրա։ «Պաշտպանության

իրավունք» բարեգործական հիմնադրամը պաշտպանում է շահառուների իրավունքները, աջակցում և նպաստում է նոր, ապահով և արժանապատիվ կյանք կառուցելու պայմանների ստեղծմանը:

ՏԵՍԼԱԿԱՆԸ

Մենք նպաստում ենք Ուկրաինայում և ամբողջ աշխարհում սոցիալ-տնտեսական կայունության և անվտանգության աճին:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

- Պաշտպանում ենք շահառուների իրավունքները՝ ուղղակիորեն իրավաբանական աջակցություն տրամադրելով:
- Իրականացնում ենք մարդու իրավունքների և ազատությունների պահպանման պարբերական մշտադիտարկում:
- Խրախուսում ենք համակարգային փոփոխություն՝ շահերի պաշտպանության գործիքների միջոցով, ներառյալ ազգային և միջազգային մակարդակներում ռազմավարական դատավարությունների անցկացումը և օրինաստեղծ գործունեության մասնակցությունը:
- Բարձրացնում ենք հասարակության և մեր շահառուների իրազեկվածության մակարդակը իրենց իրավունքների և միգրացիայի թեմաներով:
- Օգնում ենք պետական կառույցներում աշխատող մասնագետներին բարձրացնել իրենց մասնագիտական ներուժը և կրթական ու վերապատրաստման ծրագրերի միջոցով մարդու իրավունքների թեմայով իրազեկությունը:
- Բարձրացնում ենք ուկրաինական հասարակության իրազեկության մակարդակը մեր շահառուների խնդիրների շուրջ:

- Զարգացնում ենք քաղաքացիական հասարակությունը՝ աջակցելով ակտիվիստների նախաձեռնություններին, նպաստում նրանց ինստիտուցիոնալ և մասնագիտական աճին՝ շահառուներին ուղղված աջակցության ոլորտում նորարարական մոտեցման ներդրման համար:
- Հասարակության առավել խոցելի խմբերին տրամադրում ենք մարդասիրական օգնություն:

Ծրագրի մասնակից վրացական ոչ առևտրային կազմակերպությունները

«Խաղաղարար և գործարար Կովկաս» ասոցիացիա

4600, Վրաստան, Քութաիսի,
Գուգունավա փ. № 1
+995 043 12 65 106
alu.gamakharia@mail.ru
apbc.ge

Կազմակերպությունն ունի 30 աշխատակից:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Աջակցություն հակամարտության կարգավորմանը ուղղված խաղաղ փոխակերպմանը: Գործազրկության և աղքատության կրճատում հասարակության խոցելի խմբերի շրջանում:

ԽՆԴԻՐՆԵՐԸ

- կենսական աղբյուրների մատչելիության և հանրության խոցելի հատվածի՝ հիմնականում ՆՏԱ-ների և միգրանտների համար աշխատանքի ապահովում,
- աջակցություն հակամարտող կողմերի միջև վստահության բարձրացմանը և հակամարտության խաղաղ կարգավորմանը:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Իմերեթիա, Սամեգրելո, Աբխազիա,

Հարավային Օսեթիա, Քարթլի

Դաշտային գրասենյակներ՝ գ. Խուրչա (Զուգդիդի քաղաքապետարանը), գ. Պերեվի (Սաչխերսկիի քաղաքապետարան)

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Աջակցություն վրաց-աբխազական, վրաց-օսեթական կողմերի միջև փոխվստահության ու մերձեցման մակարդակի բարձրացմանը: Հակամարտության հետևանքներով միմյանցից բաժանված համայնքների միջև սոցիալ-հումանիտար և տնտեսական-գործարար կապերի զարգացման ապահովում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Շահառուների որոնումը կատարվում է Աբխազիայում և Հարավային Օսեթիայում՝ գործընկերների և դաշտային գրասենյակների միջոցով:

ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ՆՏԱ-ՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

2014թ. ստեղծված «բիզնես-ինկուբատորում» ՆՏԱ-ների արտադրական պրակտիկայի և աշխատանքի տեղավորմանը բերված աջակցություն

«Իմեդի» ասոցիացիա՝ ՆՏԱ հանդիսացող կանանց շարժում հանուն խաղաղության

2100, Վրաստան, Զուգդիդի,
Շոթա Ռուսթավելի փ. 92
+0415 25 20 29, +995 599 91 93 22
imedi-info@yandex.ru
Kristina-kilanava@yandex.ru
fb.com/infoimedi

Կազմակերպությունն ունի 19 աշխատակից (հաստիքային աշխատող՝ 4, պայմանագրային՝15):

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կանանց մասնակցության աջակցություն հակամարտության կարգավորմանը և խաղաղության կառուցման գործում: ՆՏԱ-ների հոգեբանա-սոցիալական և տնտեսական վերականգնում:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Սամեգրելո-Զեմո Սվանետի, Զուգդիդի

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Կանանց իրավունքների պաշտպանություն, տեղեկատվություն, կանանց և երիտասարդ աղջիկների ոչ ֆորմալ կրթություն, հոգեբանա-սոցիալական վերականգնում, խաղաղարարություն, ՆՏԱ-ների խնդիրների

լուծում, գենդերային հավասարություն, ինստիտուցիոնալ զարգացում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Կազմակերպության ռազմավարության որոշում, շահառուների որոնում, գործողությունների պլանի մշակում, շահերի պաշտպանության արշավ, սոցիալական ծառայությունների ներկայացում:

ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ՆՏԱ-ՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

- ՆՏԱ-ների սոցիալ-տնտեսական և մշակութային ինտեգրումը տեղական հասարակություն (սոցիալական ծառայություններ, ակցիաներ, մշակութային միջոցառումներ և այլն)
- Սամագրելո-զեմո Սվանետիի խաղաղարար կանանց ցանց (տեղացի և ՆՏԱ կանանց մասնակցությամբ):

ՆՏԱ ինտեգրման և աջակցության կենտրոն

Վրաստան, Խոնի,
Զինվորական ավան 85/26
+99 559 835 03 62

Կազմակերպությունն ունի 6 աշխատակից:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

ՆՏԱ-ներին ցուցաբերվող աջակցությունը տեղեկացվածության և նրանց վերաբերող կարևոր հարցերի շուրջ ջատագովության ոլորտում:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Խոնի, Զինվորական ավան, ՆՏԱ բնակավայր

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

- մասնակցություն դատական գործընթացներին՝ պաշտպանելով ՆՏԱ-ների շահերը ըստ նրանց կարիքներից,
- մասնակցություն տեղական և խորհրդարանական ընտրություններին՝ որպես բոլոր մակարդակներում ընտրական գործընթացների դիտորդ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Սկզբում նրանք հիմնականում գնում էին այնպիսի բնակավայրեր, որտեղ ապրում են ՆՏԱ-ները և հարցման մեթոդով ուսումնասիրում էին նրանց խնդիրները:

Այնուհետև իրականացվում էր ջատագովությունը տարբեր մակարդակներով: Հետագայում ՆՏԱ-ները սկսեցին դիմել մեզ և միասին սկսեցինք լուծել նրանց խնդիրները:

ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ՆՏԱ-ՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

- Խնդրի լուծում, որը ստիպված էին եղել հասցնել մինչև նախագահի մակարդակ. 17 մասնաշենքերի ցանկից հանված ՆՏԱ-ների 5 մասնաշենքերի վերանորոգում, որոնք ի վերջո վերանորոգվել էին:
- ՆՏԱ-ների կոմպակտ բնակավայրերի ջրամատակարարման խնդրի լուծում: Այժմ ապահովված է 24-ժամյա ջրամատակարարում:
- Գազաֆիկացման խնդրի լուծում, ջեռուցման համակարգի մոնտաժում, ճանապարհներ և այլն

Սենակի համայնքային կրթական կենտրոն

Վրաստան, Սենակի, Զինվորական ավան
Ցալենդժիխա, Զվարի, Անդրիա Պիրվեցոդեբուլի փ., 141
+041 327 32 00; +995 577 57 66 55
senaki.cec@gmail.com

Կազմակերպությունն ունի 35 աշխատակից (նրանցից 8-ը մշտական աշխատակիցներ են):

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Ոչ ֆորմալ կրթություն, քաղաքացիական հասարակության ձևավորում, աշխատանքի տեղավորում, հասարակության խոցելի հատվածի սոցիալական ինտեգրումը:

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- Աջակցել ՆՏԱ-ների և սոցիալապես անապահով երիտասարդների, կանանց, սահմանափակ հնարավորություններ ունեցող մարդկանց հանրային և սոցիալական ինտեգրմանը՝ մասնագիտական կրթության և աշխատանքի տեղավորման միջոցով,
- աջակցել քաղաքացիական ներգրավվածությանը, քաղաքացիական նախաձեռնություններին, համայնքային զարգացման գործընթացներին,
- խթանել ձեռնարկատիրության և փոքր բիզնեսի զարգացումը,
- խթանել շարունակական կրթական բարեփոխումները,
- աջակցել քաղաքացիական հասարակության ձևավորմանը և ժողովրդավարական գործընթացների զարգացմանը:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Սենակի, Խոբի, Աբաշի, Չխորցկուի քաղաքապետարաններ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ոչ ֆորմալ կրթություն

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Հարցում, մոբիլիզացիա և շահառուների մոտիվացիայի բարձրացում

ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ՆՏԱ-ՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

2010-2017թթ. պրակտիկա է անցել 13268 շահառու, այդ թվում՝ 9824 ՆՏԱ։Աշխատանքի է տեղավորվել 1356 հոգի, որոնցից 983ը՝ ՆՏԱ։

Ծրագրի մասնակից հայաստանյան ոչ առևտրային կազմակերպություններ

«Նռան հատիկ» համայնքային զարգացման հիմնադրամ

1301-1304 ,Հայաստան,
Գեղարքունիքի մարզ, ք. Ճամբարակ
+3 74 093 07 24 75
nunemir@mail.ru

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ և ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հիմնադրամի առաքելությունն է խթանել սոցիալ-տնտեսական, մշակութային և կրթական զարգացումը, ենթակառուցվածքների ստեղծումը, համայնքի անդամների ինտեգրումը քաղաքացիական հասարակություն Ճամբարակում և հարակից 14 գյուղական համայնքներում:

Ճամբարակը սահմանային բնակավայր է: Այստեղ մեծ թվով փախստականներ կան Ադրբեջանից և Արծվաշենի անկլավից: Մեր հիմնադրամի ծրագրերում մենք հիմնականում ընտրում ենք նրանց որպես թիրախային խումբ՝ փորձելով օգնել ինտեգրվել համայնքի կյանքին:

Հաշվի առնելով այն, որ Ճամբարակի շրջանը Ադրբեջանի հետ սահմանային գոտում է և այստեղ բնակչության աղքատության մակարդակը բարձր է, մեր հիմնադրամը առաջնորդվում է համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման, աղքատության

կրճատման, մարդու իրավունքների պաշտպանության և համայնքների բոլոր անդամների հասարակական կյանք ինտեգրման առաջնահերթություններով:

Մեր հիմնադրամի ծրագրերի օգնությամբ մենք օգնում ենք փախստականներին հաղթահարել լեզվական խոչընդոտները, նպաստում ենք ավանդական հայկական արհեստների միջոցով (ձեռագործություն, գորգագործություն և այլն) կանանց սոցիալականացման խթանմանը՝ այդպիսով լուծելով նաև սոցիալական դժվարությունները մեղմելուն ուղղված աշխատանքով ապահովման խնդիրները:

Մեր հիմնադրամի նպատակներից մեկն այն է, որ Ճամբարակի երիտասարդությունը ներգրավվի կամավորական և քաղաքացիական գործունեության մեջ: Մենք գտնում ենք, որ փախստականների՝ համայնքային կյանքին ինտեգրման գործընթացում կարևոր է նրանց մասնակցությունը համայնքային կառավարման և բյուջետային վերահսկողության գործընթացներին: Այդ նպատակի համար ստեղծվեց «Բյուջետավորման գործընթացի հրապարակայնությունը և թափանցիկությունը ու համայնքների անդամների մասնակցությունը այդ գործընթացներում» ծրագիրը: Խնդիրները լուծելու համար կազմակերպվել են կլոր սեղան քննարկումներ, հանդիպումներ տեղական իշխանությունների ներկայացուցիչների և համայնքների բնակիչների հետ:

Փախստականների ինտեգրման գործում պակաս կարևոր չէ առողջ ապրելակերպը և նրանց երեխաների անհոգ մանկությունը: Այս նպատակով Մարտունի և Թթուջուր գյուղերում «Երիտասարդ կամավորները համայնքի հետ, իրենց համար» ծրագրի շրջանակներում կառուցվեցին խաղահրապարակներ:

«Կանայք հանուն զարգացման» ՀԿ

3118, Հայաստան,
Գյումրի, Շահինյան փ., 6ա, բն.16
+3 743 123 30 07, +3 749 339 08 72
goharmark@gmail.com
wfd.am
fb.com/pages/Women-For-Development-NGO

«Կանայք հանուն զարգացման» հասարակական կազմակերպությունը ստեղծվել է 1997թ. Գյումրի քաղաքում, Հայաստանի Հանրապետությունում:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Նպաստել Հայաստանում ժողովրդավարական բարեփոխումների իրականացմանը, աղքատության կրճատմանը, զարգացման գործընթացներին:

ՏԵՍԼԱԿԱՆԸ

Նվազեցնել Հայաստանի քաղաքների և գյուղական համայնքների միջև առկա սոցիալ-տնտեսական պայմանների տարբերությունը և նպաստել տարածաշրջանում խաղաղության հաստատմանը:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ

- խաղաղությանը և հակամարտությունների կարգավորմանը վերաբերող դասընթացներ,

- գյուղական համայնքների զարգացում,
- կանանց իրավունքներ:

ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ԵՆ ՀԵՏԱՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ՝

- «Խաղաղության և կոնֆլիկտների խաղաղ լուծման ուսուցում Հայաստանի դպրոցներում» ծրագիր (2002թ.-ից ի վեր),
- հակամարտությունների խաղաղ լուծման շուրջ դասընթացներ ուսուցիչների, ծնողների և դպրոցական կոլեկտիվների համար,
- հայկական դպրոցներում խաղաղության կրթության ինստիտուցիոնալացում (2015թ.-ից ի վեր),
- խաղաղություն պատկերող կտավների տարեկան ցուցահանդեսների կազմակերպում (2015թ.-ից ի վեր),
- ամառային խաղաղության երիտասարդական ճամբար Շիրակի մարզի համայնքներում (2017 թ.),
- գործընկերների հետ փորձի փոխանակում (2014թ.-ից ի վեր),
- խաղաղարար կրթական հարթակ (սկսած 2017թ.),
- խաղաղ արար համաժողովներ (2007-2017),

  Ուսուցում են անցել 100 000 աշակերտներ և 6 000 ուսուցիչներ Հայաստանի 850 դպրոցներից (Հայաստանի բոլոր դպրոցների 60%-ը):
- Գյուղական համայնքի զարգացում և խաղաղարարություն խաղաղության ուսուցման միջոցով» ծրագիրը

  Ծրագրի շրջանակներում իրականացվել է 23 սոցիալական և 2 բիզնես ծրագիր:

ԱՊԱԳԱՅԻ ՊԼԱՆՆԵՐ

Գործընկերների հետ կառուցողական համատեղ գործողությունների վերապատրաստման և իրականացման միջոցով տարածաշրջանում խաղաղարար գործունեության գործնական մեթոդների մշակում:

«Լիության տուն» համայնքային կենտրոն

Հայաստան, ք. Գյումրի,
Լիության տուն, համայնքային կենտրոն
+3 74 093 62 04 55
liutjan-tun@mail.ru

«Լիության տուն» համայնքային կենտրոնը հասարակական կազմակերպություն է, որը հիմնադրվել է 2003թ. ապրիլի 16-ին:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ և ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կազմակերպության նպատակն է պաշտպանել համայնքի շահերը, կոնսոլիդացնել ռեսուրսները և համագործակցություն ձևավորել համատեղ ծրագրերի իրականացման համար: Բազմաֆունկցիոնալ գործողությունների միջոցով կազմակերպությունը լուծում է համայնքի խնդիրները:

«ԼԻՈՒԹՅԱՆ ՏՈՒՆ» ԻՐԱԿԱՆԱՑՐԵԼ Է ՀԵՏևՅԱԼ ԾՐԱԳՐԵՐԸ՝

- «Համայնքային ընդունարան» ծրագիրը, որը ֆինանսավորվել է «Հայկական Կարիտաս» բարեսիրական ՀԿ-ի կողմից.

- «Ժողովրդավարությունը և երեխաների հասարակությունը», որը ֆինանսավորվել է Հայաստանում ԱՄՆ-ի դեսպանության աջակցությամբ.
- «Պայքար Հայաստանում ապօրինի միգրացիայի և թրաֆիքինգի դեմ», որը ֆինանսավորվել է «Հայկական Կարիտաս» կազմակերպության կողմից: Ծրագիրն իրականացվում է 2015 թվականից: Ծրագրի նպատակն է ծանոթացնել գյումրեցի ավագ դպրոցի աշակերտներին, երիտասարդներին և գյուղական համայնքների բնակիչներին միգրացիային, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միությանը վերաբերող օրենսդրության հետ:

«Հայ միասնության խաչ» բարեգործական մշակութային ՀԿ

1101 Հայաստան, ք. Էջմիածին,
Շահումյան փ. 36
+3 742 314 56 10
info@cau.am
cau.am
fb.com/CAUNGO?fref=ts

«Հայ միասնության խաչ»-ը (Cross of Armenian Unity)՝ ՀՄԽ-ն, 1991թ. գրանցվել է պաշտոնապես՝ դառնալով անկախ Հայաստանի Հանրապետության առաջին հասարակական կազմակերպությունը:

ՀՄԽ-ն կարևորում է կրթության և մշակույթի դերը մատաղ սերնդի շրջանում անհատի ձևավորման գործում և իր գործունեության ընթացքում իրականացնում է բազմաթիվ մշակութային, կրթական, սոցիալական և իրազեկության բարձրացման ծրագրեր՝ ուղղված շահագրգիռ կողմերի և նրանց ընտանիքների բարեկեցության ամրապնդմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը, այդ գործունեության մեջ ներառելով երեխաների և համայնքի անդամների ընտանիքների ներգրավմանը, ինչը բարձրացնում է ծրագրերի արդյունավետությունը:

2003 թ.-ին ՀՄԽ-ն որդեգրեց արվեստի

միջոցով կրթության մեթոդը և նախատեսում է շարունակել կիրառել այս մեթոդը՝ կատարելագործելով իր գործունեությունը և ընդլայնելով դրա ոլորտը: Կազմակերպությունը կարևորում է երեխայի անձի զարգացման գործընթացը, ՀՄԽ-ն իր սաներին ցանկանում է տեսնել ոչ միայն մասնագիտացած որևէ արվեստի կամ արհեստի մեջ, այլև որպես ակտիվ քաղաքացիական դիրքորոշում ունեցող գիտակից և պատասխանատու քաղաքացի:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Աջակցել կրթված, իրավասու, հայրենասեր քաղաքացու ակտիվ քաղաքացիական, ազգային և համամարդկային արժեքների ձևավորմանը և քաղաքացիների սոցիալական վիճակի բարելավմանը՝ կենտրոնանալով բնակչության խոցելի խմբերի վրա: Նպաստել հայրենիքի և սփյուռքի ակտիվ կապերի ամրապնդմանը:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

- սոցիալապես անապահով և սահմանափակ հնարավորություններով երեխաների համար արվեստի դպրոց,
- Էջմիածնում և Ճամբարակի սահմանամերձ շրջանում, որտեղ ապրում են Ադրբեջանից փախստականներ և Արծվաշենից ՆՏԱ-ներ, ուսուցում արվեստի միջոցով,
- Էջմիածնում և Ճամբարակի շրջանում զբոսաշրջության զարգացման ծրագրեր,
- Ճամբարակի շրջանում կանանց աշխատատեղերի ստեղծմանը նպաստող ծրագրեր:

Ծրագրի մասնակից Հյուսիսկովկասյան (Ռուսաստան) ոչ առևտրային կազմակերպություններ

Սոցիալական կողմնորոշմամբ «Օկտավա» դաղստանյան շրջանային հասարակական կազմակերպություն

Դաղստան ք. Մախաչկալա
+7 928 507 40 58
rsbs3@mail.ru
oktava-roo@mail.ru

Սոցիալական կողմնորոշմամբ «Օկտավա» դաղստանյան շրջանային հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2000թ.-ին:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

- աջակցություն բնական աղետների, տեխնոլոգիական կամ այլ աղետների, սոցիալական, ազգային, կրոնական հակամարտությունների զոհերին, փախստականներին և ներքին տեղահանված անձանց,
- քաղաքացիների սոցիալական աջակցություն և պաշտպանություն,
- բնակչության շրջանում իրավական հարցերի շուրջ իրազեկության բարձրացում, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանությանն ուղղված միջոցառումներ,

- կրթության, իրազեկման, գիտության, մշակույթի, արվեստի, առողջապահության, քաղաքացիների առողջության, հիվանդությունների կանխարգելման, հանրային առողջության պահպանման, առողջ ապրելակերպի խթանման, քաղաքացիների բարոյահոգեբանական վիճակի բարելավման ուղղությամբ գործողություններ,
- ընտանիքի, մայրության, մանկության և հայրության պաշտպանություն,
- երեխաների և երիտասարդության հասարակական շարժման զարգացում և աջակցություն,
- քաղաքացիական հասարակության ինստիտուտների զարգացում,
- ծնողազուրկ երեխաների, ծնողների խնամքից զուրկ մնացած երեխաների, կյանքի դժվար իրավիճակներում հայտնված երեխաների սոցիալական վերականգնում,
- ազգամիջյան համագործակցության զարգացում, Ռուսաստանի Դաշնության ժողովուրդների ինքնության, մշակույթի, լեզուների և ավանդույթների պահպանում և պաշտպանություն:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Երեխաների և երիտասարդների շրջանում իրենց և այլ ազգությունների, մշակույթի և հավատի հանդեպ հարգանքի և հանդուրժողականության դաստիարակում, մերձավորի նկատմամբ գթասրտության ու հոգատար վերաբերմունքի սերմանում,
- Ծրագրի մասնակիցների շրջանում զարգացնել հոգեբանական մշակումը և մանիպուլյացիայի փորձերը տարբերակելու և դիմակայելու, տվյալ պահին ազդեցություն ունեցող խմբի տեսակետից տարբերվող սեփական տեսակետը բացահայտ կերպով արտահայտելու և պաշտպանելու կարողություններ

ԹԻՐԱԽԱՅԻՆ ԼՍԱՐԱՆԸ

- երիտասարդներ, պատանիներ, ծնողներ
- քաղաքային և գյուղական բնակչություն, ներգաղթյալներ, ներգաղթյալների երեխաներ, փախստականներ

ԸՆԹԱՑԻԿ ԾՐԱԳՐԵՐԸ

- «Երիտասարդների շրջանում արմատականության և ծայրահեղականության կանխարգելումը»
- «Բարության ուժը»

«Կանանց ռեսուրս կենտրոն» չեչենական շրջանային բարեգործական ՀԿ

Ռուսաստան, Չեչենական Հանրապետություն,
ք.Գրոզնի,Տրոշևա փ., շենք 73, բն. 6
+8 928 738 33 84

«Կանանց ռեսուրս կենտրոն» չեչենական շրջանային հասարակական բարեգործական ՀԿ-ն իր գործունեությունը մեկնարկեց 2006 թվականին Չեչնիայի Հանրապետությունում:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կազմակերպության առաքելությունն է բարելավել կանանց կարգավիճակը Չեչենական Հանրապետությունում՝

- բարեգործական օգնություն ցուցաբերել կանանց, ծնողների կամ ծնողներից մեկի խնամքից դուրս մնացած երեխաներին, բնակչության այլ, սոցիալապես անապահով խավերին,
- պետական իշխանությունների կառույցներին ցուցաբերվող օժանդակություն՝ կանանց և այլ սոցիալապես անապահով խավերին հանրօգուտ գործունեության մեջ ներգրավելու ուղղությամբ,
- նյութական և այլ աջակցության տրամադրում կանանց, այդ թվում՝ սոցիալապես անապահով և

խոցելի այլ խավերին, անկախ իրենց ազգությունից, քաղաքացիությունից, հավատից,

- հասարակությունում ընտանիքի հեղինակության և դերի ամրապնդմանը սատարում,
- մայրության և մանկության պաշտպանության խթանում:

Կազմակերպության աշխատակազմը բաղկացած է բարձր որակավորում ունեցող անձանցից, որոնք երկար տարիների հաջող փորձ ունեն (կալանավորված, կալանքից ազատված և կյանքի դժվարին պայմաններում գտնվող) կանանց և աղջիկների դրության փոփոխության գործում համապարփակ ծրագրի իրականացման, վերասոցիալականացման և վերականգնման միջոցով: Այստեղ կարելի է ներառել՝

- կալանավորված կանանց իրավունքների ոտնահարման դեպքերի նվազեցումը՝ բանտի աշխատակազմի այն անդամների հետ փոխգործակցության միջոցով, ովքեր գտնվում են անմիջական կապի մեջ կալանավորված կանանց հետ,
- կալանավորված, կալանքից ազատված և կյանքի ծանր իրավիճակում գտնվող) կանանց և աղջիկների հոգեբանական վիճակի բարելավման հնարավորությունների տրամադրում,
- կանանց/աղջիկների իրավունքների պաշտպանության խթանում,
- կանանց/աղջիկների տնտեսական կախվածության մակարդակի նվազեցում,
- հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների սոցիալական կապիտալի զարգացում,
- կալանավոր կանանց նկատմամբ բռնության հիմնախնդիրների և հասարակության կողմից այս կանանց մերժման լուսաբանումը լրատվամիջոցների միջոցով:

«Կանանց ռեսուրս կենտրոն»-ը Հյուսիսային Կովկասի դաշնային շրջանի միակ կազմակերպությունն է, որ իրականացնում է կանանց վերասոցիալականացման ծրագիր և արդեն 10 տարի շոշափելի աջակցություն է ցուցաբերում, կալանավոր, կալանքից ազատված և սահմանային վիճակներում գտնվող կանանց իրավունքների պաշտպանության և կյանքի որակի բարելավման գործում:

Կազմակերպության հաջողված փորձի մասին տե՛ս 211-215 էջերում:

«Կովկասյան նախաձեռնությունների կենտրոն» միջտարածաշրջանային ՀԿ

105062, Ռուսաստան, Մոսկվա,
Պոկրովկա փ., տուն 30
+798 548 74 78 0
+495 625 06 63
hadbad2012@gmail.com

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քաղաքացիական հասարակության զարգացման և խոսքի ազատության «Կովկասյան նախաձեռնությունների կենտրոն» (ԿՆԿ) միջտարածաշրջանային հասարակական կազմակերպությունը Ռուսաստանի մարդու իրավունքների հետազոտական կենտրոնի անդամ է և իրականացնում է Հյուսիսային Կովկասում մարդու իրավունքների պաշտպանության, սոցիալական, տեղեկատվական և հրատարակչական ծրագրեր:

Մասնավորապես, «Կովկասյան նախաձեռնությունների կենտրոն» ՄՀԿ-ն առաջին կովկասյան անկախ ամսագրի «ДОШ»-ի հիմնադիրն է և հրատարակիչը, որը 2003 թվականից ի վեր հրապարակում է իրավիճակը Հյուսիսային Կովկասի հանրապետություններում՝ շեշտը դնելով տարածաշրջանում մարդու իրավունքների

խախտումների խնդրի վրա: Ամսագիրը խոսում է Հյուսիսային Կովկասի տարածաշրջաններում մարդու իրավունքների խախտումների, սոցիալ-քաղաքական իրավիճակի, ներկայիս սոցիալ-տնտեսական խնդիրների, բժշկության, կրթության, բնապահպանության ոլորտի խնդիրների մասին:

Ավելին, «Կովկասյան նախաձեռնությունների կենտրոնը» սոցիոլոգիական հետազոտություններ է իրականացնում Հյուսիսային Կովկասում՝ հանրային կարծիքի հարցումներ անցկացնելով ընթացիկ հիմնախնդիրների վերաբերյալ՝ բժշկության, էկոլոգիայի, կրթության, գենդերային հավասարության հարցերի մասին արդյունքները«ДОШ» ամսագրում հրապարակելով:

2012 թ.-ի ապրիլին «Կովկասյան նախաձեռնությունների կենտրոն» ՄՀԿ-ն ռեսուրս կենտրոն բացեց Գռոզնիում հասարակական կազմակերպությունների և անկախ քաղաքացիական ակտիվիստների համար:

Այդ նույն 2012թ. հուլիսին ԿՆԿ գործընկեր կազմակերպության՝ «Սինտեմ» կանանց ռեսուրս կենտրոնի հետ համատեղ սկսել է հրատարակել «Կնոջ խոսքը» ամսագիրը:

«ДОШ» ամսագրի հաջողված փորձի մասին տե՛ս 209-210 էջերում.

«Սինտեմ» չեչենական տարածաշրջանային սոցիալ-հոգեբանական ռեսուրս կենտրոն ՀԿ

364 000, Ռուսաստան, Չեչենական
Հանրապետություն, ք. Գրոզնի, Մայակովսկու
փ., 86ա, տուն 7
+8 938 893 74 51
sintem_org@mail.ru

Կազմակերպության ներկայացուցիչ՝
Հայրապետյան Իննա Կիմաևնա

Գրանցման ամսաթիվ՝ 2005թ., փետրվարի 14

ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Տարբեր հակամարտությունների և բնապահպանական աղետների հետևանքով բնակչության համար բազմապիսի հոգեբանական ծառայությունների տրամադրում:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

- սոցիալ-հոգեբանական վերականգնում,
- կրթական-լուսավորչական գործունեություն,
- իրավապաշտպան գործունեություն,
- խաղաղարար գործունեություն:

2005 թ.-ից «Սինտեմ» ՍՀՌԿԿ-ն իրականացրել է ավելի քան 30 սոցիալական ծրագրեր՝

վերացնելու մայրական անգրագիտությունը, ստեղծելու Հյուսիսային Կովկասի երիտասարդների միջև միջմշակութային երկխոսություն՝ բռնության ենթարկված կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության, գենդերային հավասարության ապահովման և այլ նպատակներով: Կանանց հասարակական կազմակերպությունների ներուժի ավելացման միջոցով, ավելի քան կանանց 16 հասարակական կազմակերպություն ստացել է փոքր դրամաշնորհներ մեր կազմակերպության միջոցով և կարողացել է աջակցել ՆՏԱ-ներին, ովքեր բնակվում էին ժամանակավոր բնակավայրերում, բոլոր կազմակերպված ծրագրերը կենսունակ են, քանի որ նրանք ուղղակիորեն արձագանքում էին ՆՏԱ-ների կարիքներին:

Այսօր թիմը բաղկացած է բարձրագույն կրթությամբ 12 մասնագետներից, որոնք ունեն առնվազն 10-20 տարվա աշխատանքային փորձ:

2005 թ.-ից ծրագրերի իրականացմանը մասնակցել են նաև հրավիրված մասնագետներ, ովքեր ներկայումս անդամակցում են մասնագիտական գործընկերային ցանցի: Ցանցը ներառում է մասնագետներ՝ մանկավարժներ,մարզիչներ, գիտությունների թեկնածուներ, հոգեբաններ, բժիշկներ, պետական պաշտոնյաներ, ՀԿ ոլորտի աշխատողներ, երաժիշտներ, լրագրողներ: Այսօր ցանցն ունի ավելի քան 150 անդամ:

Բացի այդ, ստեղծվել է նաև կամավորների բարեգործական ցանց երիտասարդ ուսանողների, չաշխատող երիտասարդների և ավագ դպրոցականների մասնակցությամբ: Ամեն տարի ավելի քան 40 երեխա մասնակցում է կազմակերպության տարբեր միջոցառումներին՝ ներգրավվելով հասարակական կյանքին՝ նոր կապեր հաստատելու, հասարակության մեջ փոխգործակցության, համար անհրաժեշտ կյանքի հմտությունների ձեռքբերման նպատակով:

Կազմակերպության աշխատակիցները մշտապես զբաղվում են ինքնակրթությամբ, սեմինարների, համաժողովների, կլոր սեղան քննարկումների և այլ ծրագրերի մասնակցությամբ

մասնագիտական հմտությունների բարելամամբ, անցնում են ստաժավորում, վարպետության դասեր:

Մենք գործում ենք Չեչենական Հանրապետությունում, ինչպես նաև համագործակցում ենք Հյուսիսային և Հարավային Կովկասի հարևան հանրապետությունների հետ: Մենք փորձում ենք համագործակցություն հաստատել ամբողջ Ռուսաստանում և հասնել համագործակցության միջազգային մակարդակի:

Կազմակերպության հաջողված փորձի մասին տե՛ս 205-207 էջերում:

III. ՆՏԱ-ների և փախստականների ինտեգրման հաջողված փորձը Ուկրաինայում, Վրաստանում, Հայաստանում, Հյուսիսային Կովկասում (Ռուսաստան)

ՆՏԱ-ների և փախստականների ինտեգրման ուկրաինական փորձը

Ուկրաինայում ՆՏԱ-ների և փախստականների ինտեգրման իրավիճակի հակիրճ վերլուծություն

Արևելյան Ուկրաինայում պատերազմական գործողությունները, որոնք սկսեց Ռուսաստանը 2014թ.-ին, ինչպես նաև Ղրիմի բռնակցումը, հանգեցրին Դոնեցկի և Լուգանսկի շրջանների և Ղրիմի հանրապետության բնակչության զանգվածային վերաբնակեցմանը: Վերաբնակվողների թիվը հասավ մոտ 1,5 միլիոնի:

Այս ամենի հետևանքով առաջացավ հարց, մի կողմից՝ այս մարդկանց օգնել հարմարվել և ինտեգրվել տեղական համայնքին, մյուս կողմից՝ հաղթահարել ՆՏԱ-ների և ընդունող համայնքների մոտ առաջացած դժվարությունները, որոնք ծառանում էին ժամանակի ընթացքում:

Ելնելով ստեղծված իրավիճակից, նաև պետության՝ խնդրին ուշացած և ոչ լիարժեք արձագանքից՝ ուկրաինական հասարակական կազմակերպությունները մշակեցին վերաբնակեցվողների ադապտացման նախաձեռնություններ՝ տեղական բնակչության հետ համատեղ:

Ուկրաինայում պատերազմական հակամարտությունների առաջին տարիներին առաջացած տնտեսական անկայունության և ՆՏԱ-ների ու տեղացի բնակչության միջև սոցիալական լարվածության հետևանքով ինտեգրման և վերաբնակվողների ադապտացման խնդիրները շատ սուր էին դրված և դառնում էին մի շարք հակամարտությունների աղբյուր: Ժամանակի ընթացքում հասարակությունը և ՆՏԱ-ներին ընդունող համայնքները ենթարկվել են մի շարք փոփոխությունների, այսպիսով՝ հաղթահարելով մի շարք խնդիրներ՝ կառուցելով փոխհարաբերությունների և համագործակցության նոր մոդելներ: Միևնույն ժամանակ առաջացան նոր խնդիրներ, իսկ մի քանիսը, օրինակ, բնակարանով ապահովման խնդիրը,

մնացել են և ձգձգվում են արդեն տարիներ շարունակ:

Բնակեցման նոր վայրերում դեռևս ապրող վերաբնակվածների մի մասին համար շարունակում է արդիական տնտեսական ծանր վիճակի խնդիրը, որի պատճառով նրանք չեն կարողանում իրենց զգալ ապահով և նոր քաղաքի լիիրավ բնակիչներ, ինչպես նախկինում, երբ ունեին սեփական բնակարանային պայմաններն ու աշխատանքը: Բացի դրանից, նոր սոցիալական կապերի և շփումների ձեռքբերման հարցերը արգելք դարձան ՆՏԱ-ների լիարժեք ինտեգրման համար: Քաղաքաբնակներն ավելի շատ հնարավորություններ ունեն այս իմաստով, քան փոքր բնակավայրերում ապրողները, շնորհիվ այս ուղղությամբ գործունեություն ծավալող մեծաքանակ հասարակական կազմակերպությունների և ծրագրերի: Այլ հարց են գյուղական վայրերը, որտեղ նմանատիպ ծրագրերը գործնականում ոչ մի տեղ ներկայացված չեն:

Շատ ՆՏԱ-ներ ստեղծեցին իրենց հասարակական կազմակերպությունները, որոնք աշխատում էին հակամարտության տարբեր տեսակի հետևանքների, ինչպես նաև քաղաքների և համայնքների զարգացման վրա կենտրոնացմամբ: Ակտիվ գործարարները շարունակում էին զարգացնել իրենց բիզնեսը կամ բացում էին նորը, որը նպաստում էր տվյալ տարածքների տնտեսական աճին: Միևնույն ժամանակ, զուգահեռաբար տեղ են գտնում սոցիալական լարվածության հետ կապված գործընթացներ, երբ նորաբնակ մասնագետները, հատկապես խոշոր քաղաքներում, մրցակցություն են ստեղծում տեղացիների համար, կամ հակառակը, չունեն մշտական եկամուտ, և դրանով էլ ավելի են խորացնում սոցիալ-տնտեսական լարվածությունը: 2018թ. մարտ ամսվա դրությամբ ՆՏԱ-ների միայն 48%-ը ուներ մշտական աշխատանք: Համաձայն Միգրացիայի միջազգային կազմակերպության տվյալների, հարցված վերաբնակվածների 80%-ը հայտարարեց, որ դժվարությունների է հանդիպել աշխատանք փնտրելիս (թափուր աշխատատեղերի բացակայություն, անհարմար աշխատանքային գրաֆիկ, ցածր

աշխատավարձ): Նրանք, ովքեր երկար ժամանակ չէին գտնում աշխատանք և չունեին հնարավորություն վճարելու վարձակալած բնակարանի համար, ստիպված էին լինում վերադառնալ իրենց տները, որոնք Ուկրաինայի կողմից վերահսկվող տարածքից դուրս էին:

Եթե խոսենք, ՆՏԱ-ների քաղաքական իրավունքների իրացման մասին, ապա այստեղ առկա է սահմանափակում և անկարողություն՝ կապված տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների վերաբերյալ որոշումների կայացման հետ:

Չնայած արդեն չորս տարիների ընթացքում հաղթահարված այս բոլոր դժվարություններին, այն աշխատանքին, որն իրականացվում է այս ուղղությամբ այս իսկ պահին՝ ՆՏԱ-ների ինտեգրման ոչ բոլոր խնդիրներն են դեռևս լուծված: Ուկրաինական հասարակության առաջ ծառացան նոր մարտահրավերներ, որոնք վերաբերում են ավելի լայն և համակարգված ՆՏԱ ինտեգրմանը ընդունող համայնքներում: Հետագայում, անհրաժեշտ է ներդնել ավելի շատ ծրագրեր, ուղղված ոչ բռնի հաղորդակցությանը, հաշտեցմանը և երկխոսությանը, իրենց նվաճումների ընդհանուր նպատակների և գործիքների որոնմանը՝ միտված բոլորիս համար ավելի լավ ապագայի ստեղծմանը:

Նադեժդա Խոմենկո
ծրագրի համակարգող (Ուկրաինա)

Ուսուցողական այց Ուկրաինա

«Հաղթահարենք պատերազմի հետևանքները միասին» ծրագրի «Ներքին վերաբնակիչների և փախստականների ինտեգրում»-ը ուղղության ներքո երեք միջազգային ուսուցողական այցերից առաջինը տեղի ունեցավ 2017թ. մայիսի 19-ից 26-ը Ուկրաինայում:

Վերջին տարիներին՝ պատերազմի սկզբից ի վեր Ուկրաինայի համար ՆՏԱ-ների ինտեգրման և փախստականների հարցը շատ կտրուկ է դրված երկրի արևելքում: Ինտեգրման ընթացքում կարևոր դեր են խաղում հասարակական կազմակերպությունները: Ինչպես հակամարտություններ ունեցող հետխորհրդային այլ շրջաններում, նրանք ձեռք բերեցին բավական փորձ այն տիպիկ խնդիրների լուծման համար, որոնք ծագում են տեղահանված անձանց և փախստականների նոր միջավայրում ինտեգրման ժամանակ: Բացի այդ, մշտապես մշակվում են սեփական արդյունավետ մեթոդներ: Ուղևորությունը տվեց հնարավորություն Ուկրաինայի, Հայաստանի, Վրաստանի և Հյուսիսային Կովկասի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին միասին ուսումնասիրել ուկրաինական փորձը, միմյանց ներկայացնել արդյունավետ մոտեցումներ և մեթոդներ վերաբնակվողների և փախստականների ինտեգրման հետ կապված, ինչպես նաև մշակել համատեղ առաջարկներ հասարակական կազմակերպությունների աշխատանքի բարելավման ուղղությամբ՝ հիմնվելով այս չորս երկրների փորձի վրա:

Նախ և առաջ, մասնակիցները ծանոթացան Ուկրաինայի հակամարտության և ՆՏԱ-ների ինտեգրման ուկրաինական փորձի վերլուծությանը, որն օգնեց նրանց ավելի լավ գիտակցել առկա իրավիճակը, հանգել սեփական եզրակացությունների և գնահատել հաջողված աշխատակարգերը: Դրան հաջորդած Ուկրաինայի տարբեր շրջաններ յոթնօրյա ուղևորության

ժամանակ մասնակիցները ծանոթացան ուկրաինական այն հասարակական կազմակերպությունների աշխատանքին, որոնք ակտիվորեն զբաղվում են ինտեգրման, հարկադրաբար վերաբնակվողների ադապտացիայի ու օժանդակության խնդիրներով։

Երթուղին ներառում էր Կիևի, Խարկովի, Դոնեցկի, Չերկասի և Օդեսայի շրջանները, որոնք վերջին երեք տարիներին ընդունել են ամենամեծ քանակով հարկադիր վերաբնակողների: Ընդհանուր առմամբ մասնակիցներն այցելեցին 11 հասարակական կազմակերպություններ և հանդիպեցին մի քանի տասնյակ ակտիվիստների հետ: Ընդունող հասարակական կազմակերպություններն էին՝ «Դոնեցկի և Արևելյան Ուկրաինայի փախստականների միություն» (Չերկասի), «Հյուրընկալության կենտրոն» (Չերկասի), Դոնաբսից ՆՏԱ-ների օգնության շտաբ «Համագործակցություն» (Օդեսա), «Սոցիալական համերաշխություն» (Օդեսա), Կամավորական կենտրոն «Ստանցիա Խարկով» (Խարկով), «Ուկրաինական սահմաններ» (Խարկով), Բարեգործական ֆոնդ «Կարիտաս Կրամատորսկ» (Կրամատորսկ), «Կռաինա վիլնիխ յուդեյ» (Կրամատորսկ), «Դոնբաս ՍՕՍ» (Կիև), «Պաշտպանության իրավունք» (Կիև), «Ազատ մարդկանց զբաղվածության կենտրոն» (Կիև)։

Այս կազմակերպությունների ներկայացուցիչները կազմակերպեցին հանդիպումներ և շնորհանդեսներ գործընկերների համար: Զեկուցումները, քննարկումներն և բանավեճերը նվիրված էին բոլորի համար ընդհանուր՝ ինտեգրման գործունեությանը, հարկադրված վերաբնակիչների ադապտացիային, մարդասիրական օգնության կազմակերպման գործընթացին (սննդի, հագուստի, դեղորայքի), հոգե-սոցիալական աջակցությանը, ժամանած նոր բնակիչների վերաբնակեցմանը, ռազմաճակատային գոտու բնակիչներին օգնության տրամադրմանը, պետական մարմիններին դիմելիս իրավաբանական օգնության տրամադրմանը և հարկադրված վերաբնակիչների իրավունքների պաշտպանությանը, մշակութային, կրթական միջոցառումների կազմակերպմանը,

վերապատրաստման և աշխատանքի տեղավորման հարցում օգնության տրամադրմանը:

Գրեթե բոլոր խնդիրները, որոնց մասին Վրաստանի, Հայաստանի և Ռուսաստանի, Հյուսիսային Կովկասի մասնակիցները լսել էին, առկա էին նաև իրենց երկրներում, սակայն յուրաքանչյուր վայրում արտահայտվում են տարբեր կերպով և տարբեր սրությամբ:

Կրթական ծրագրի վերջնակետը Կիևն էր՝ քաղաք, որը պատերազմի սկզբից ի վեր ընդունել է մեծաքանակ վերաբնակիչների: Այստեղ մասնակից-ակտիվիստները այցելեցին ծրագրով նախատեսված վերջին երեք հասարակական կազմակերպությունները, ամփոփեցին ուղևորության արդյունքները, փոխանակեցին ինտեգրմանն ուղղված աշխատանքների և ներքին տեղահանվածներին և փախստականներին տրամադրվող օժանդակության իրենց սեփական փորձը:

Արտասահմանցի հյուրերը նշեցին ակտիվիստական և կամավորական շարժումների յուրահատկությունը Ուկրաինայում, որոնք, չնայած կարճատև գոյությանը, ընդգրկում և կարգավորում են երկրում պատերազմի հետևանքով առաջացած տպավորիչ ծավալի սոցիալական և մարդասիրական խնդիրներ:

Աննկատ չի մնացել ուկրաինական կազմակերպությունների աշխատակիցների և կամավորների ծանրաբեռնվածության աստիճանը և մասնագիտական ու հոգեբանական սպառվածության ռիսկը, ովքեր արդեն երեք տարի շարունակ առանց դադարի իրականացնում են իրենց հասարակական գործունեությունը: Սա ընդգծում է մասնագիտական աջակցության կարևորությունը, այդ թվում՝ սուպերվիզիայի ձևաչափով, որոնք առաջարկվում են կլինիկական սուպերվիզորների կողմից, և, որոնք առաջինն են Ուկրաինայում անցել համապատասխան հավաստագրված

ուսուցում[1] մեր՝ «Հաղթահարենք պատերազմի հետևանքները միասին» ծրագրի մեկ այլ աշխատանքային ուղղության շրջանակներում (ուղղությունը՝ «Աշխատանք պատերազմական հակամարտությամբ պայմանավորված ցնցումների հետ»)[2]: Այնպիսի միջազգային մակարդակի հանդիպումները, ինչպիսիք են, օրինակ, մեր ուսուցողական այցերը, կանխում են մասնագիտական սպառվածությունը, քանի որ դրանք օժանդակում և աջակցում են ուկրաինացի գործընկերներին հնարավոր մասնագիտական փոխանակումների միջոցով, այդպիսով օգնում նրանց լուծել արդիական խնդիրները, արձագանքել աշխատանքային նոր մարտահրավերներին:

Ամփոփելով ուսուցողական այցի արդյունքները՝ մասնակիցները ընտրեցին, իրենց կարծիքով, ամենահաջողվածը, ՆՏԱ-ների ինտեգրմամբ զբաղվող երեք կազմակերպությունների՝ «Բարեգործական ֆոնդ «Կարիտաս Կրամատորսկ»-ի, «Ստանցիա Խարկով»-ի և «Դոնբաս ՍՕՍ»-ի փորձը:

---

1 Մանրամասները տե՛ս հետևյալ հղումով՝ https://kriegsfolgen-ueberwinden.de/ru/успешное-окончания-первого-обучения/

2 Մեր կողմից ուսուցում անցած մասնագետ սուպերվիզորների օգնության համար հայցը կարելի է ներկայացնել այս հղումով՝ https://kriegsfolgen-ueberwinden.de/ru/обученные-в-рамках-нашего-проекта-кли/

«Մենք ծանոթացանք տասնմեկ կազմակերպությունների աշխատանքային փորձին, ուկրաինացի գործընկերները մեզ հետ կիսվում էին տարբեր բնագավառների իրենց փորձով, իրականացնում շնորհանդեսներ, ծանոթացնում աշխատանքային պայմաններին: Նոր մոտեցումները, որոնք ձեռք են բերվել Ուկրաինայում, օգնում են մեզ ձևավորել նոր գաղափարներ՝ նոր ծրագրերի մշակման համար: Այս նոր գիտելիքները ստիպեցին մտածել վրաց-ուկրաինական համատեղ ծրագրերի մասին, որտեղ հաշվի կառնվեն երկու երկրների դրական և բացասական փորձը»:

(Ծրագրի վրացի մասնակիցների հաշվետվությունից)

«Նրանք կարողացան գտնել ուժ կազմակերպելու այս ամենը՝ չունենալով փող, չունենալով ոչինչ: Քաղաքների բնակիչների կողմից մարդասիրական օգնության, ապա նաև միջազգային կազմակերպությունների կողմից օգնության հետ զուգահեռ, նրանք կարգավորում էին և դեռևս շարունակում են ղեկավարել մարդասիրական օգնության բաժանման գործընթացը, տրամադրում հոգեբանական աջակցություն: Կազմակերպություններն իրենց ուժերը կենտրոնացրել են ՆՏԱ-ների սոցիալական ադապտացիայի և ինտեգրման խնդիրների վրա: Նրանք երեխաների և ծնողների համար կազմակերպում են թրեյնինգներ, վերապատրաստման դասընթացներ և նպաստում նոր մասնագիտության ստացմանը, բիզնես հմտությունների ուսուցմանը, տրամադրվում է ֆինանսական օգնություն, որպեսզի սկսեն բիզնես կամ զարգացնեն այն: Դա օգնում է լուծել աշխատանքի տեղավորման հարցը: Մի քանի կազմակերպություններ տարբերվում էին մյուսներից իրավական աջակցության շնորհիվ, մի քանիսն էլ իրականացնում են լոբբիստական գործունեություն»:

(Ծրագիրի հայ մասնակիցների հաշվետվությունից)

ՆՏԱ-ների և փախստականների ինտեգրման հաջողված օրինակներ Ուկրաինայում

«Կարիտաս Կրամատորսկ» բարեգործական հիմնադրամ

ք. Կրամատորսկ, Խաղաղության
պողոտա 5
+38 066 993 28 00 (թեժ գիծ)
kram_kar@ukr.net
caritas-kram.org.ua
fb.com/caritaskramatorsk

Տնօրեն՝ Վասիլի Իվանյուկ

«Վերցնելիս ձեռքն է լցվում, տալիս՝ սիրտը»։

Caritas Kramatorsk Краматорськ Карітас

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

«Կարիտաս Կրամատորսկ» ԲՀ ԲԿ-ը բարեգործական կազմակերպություն է, որի գլխավոր նպատակն է բարեգործական օգնություն տրամադրել հասարակության և բնակչության առանձին խավերին:

Հակամարտության հենց սկզբից, Ուկրաինայի արևելքում, «Կարիտաս Կրամատորսկ»-ը կենտրոնացրել էր իր գործունեությունը ներքին տեղահանված անձանց և բուֆերային գոտու բնակիչների մարդասիրական օգնության խնդիրների լուծման վրա: 2015թ. իրականացվել են տասնյակ ծրագրեր՝ սկսած սննդի և հիգիենայի պարագաների բաժանումից մինչև հաշտեցման ծրագրեր:

«Կարիտաս Կրամատորսկ» թիմում ներգրավված է տարբեր բնագավառների մոտ 60 մասնագետ՝ սոցիալական մասնագետներ, հոգեբաններ, լոգիստներ, գյուղատնտեսության և ձեռնարկատիրական գործունեության փորձագետներ, անիմատորներ, մանկավարժներ և այլն: Այս մարդիկ ամեն օր շտապում են օգնել կարիքավորներին, քանի որ Կարիտասը ինքնին գթասրտություն է և սեր:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈՐՁԸ

Կազմակերպությունը բազմաթիվ քայլեր է արել հասարակության կայունացման և տեղական համայնքներ ՆՏԱ-ների արդյունավետ ինտեգրման ուղղությամբ՝ աջակցելով նրանց հաղթահարել պատերազմի հետևանքները, ուսուցանելով հակամարտության՝ բռնությունից զերծ լուծման եղանակներ, «Մարդկանց համախմբումը խաղաղության համար՝ ապաքինումից մինչև համագործակցություն» կարգախոսով: Մեծ ուշադրություն է հատկացվում գյուղական համայնքներն:

«Մասնավոր գյուղատնտեսությանը աջակցող դրամաշնորհներ»-ը նպաստում են գյուղական միջավայրում բնակվող ներքին տեղահանված անձանց և տեղացիների ապրուստի հայթայթման միջոցների վերականգմանը՝ մասնավոր գյուղատնտեսության զարգացման միջոցով:

«Ներքին տեղահանվածների տնային խնամքը Կրամատորսկ քաղաքում» ծրագիրն ուղղված է ֆիզիոլոգիական, հոգեբանական վիճակի և խնամքի կարիք ունեցողների, այդ թվում՝ միայնակների, ծանր հիվանդների, հաշմանդամների և ծերերի կյանքի որակի լավացմանը:

«Կարիերա նոր կյանքի համար» ծրագրի նպատակը նպաստելն է այն վերաբնակիչների և տեղաբնակների աշխատանքային զբաղվածությանը, որոնք հակամարտության պատճառով զրկվել են եկամուտի հիմնական աղբյուրից:

«Բուժօգնություն Դոնեցկի և Լուգանսկի շրջանների հակամարտություններից տուժած սոցիալապես անապահով բնակչությանը» ծրագիրն ուղղված է Ուկրաինայի կառավարության կողմից վերահսկվող տարածքների շփման գծում տեղակայված գյուղական և արվարձանային շրջաններում տարեցների, հաշմանդամների, միայնակ մայրերի և երեխաների համար առաջնային բուժօգնության մատչելիության ապահովմանը:

«Լուգանսկի և Դոնեցկի շրջանների բուֆերային գոտու բնակիչների նախապատրաստումը ձմռանը» ծրագիրն ուղղված է բուֆերային գոտու բնակիչներին ձմռանը նախապատրաստելուն, հատկապես ցրտահարության և հիվանդությունների տարածման կանխարգելմանը: Այն նաև հնարավորություն է տալիս բնակարանը նույնպես նախապատրաստել ձմռան համար:

ՀԱՋՈՂՎԱԾ ՓՈՐՁ

«Ուկրաինայի արևելքում հակամարտությունից տուժածների տարրական կարիքների բավարարում»

Սա «Կարիտաս Կրամատորսկի» թիմի մարդասիրական ճգնաժամին արագ արձագանքման առաջին հսկայածավալ ծրագրերից մեկն է:

Ծրագիրը շահառուներին տրամադրում է ինչպես մարդասիրական օգնության, այնպես էլ գոյության միջոցների վերականգնում՝

- մթերքի և հիգիենայի պարագաներիների բաշխում,
- բնակչության տարրական կարիքների բավարարում՝ մթերքի, հիգիենայի պարագաների և հագուստի համար կանոնավոր վճարումներ,
- Դոնեցկի շրջանի բուֆերային գոտու բնակելի տարածքների ջեռուցման համար վառելիքի բաշխում,
- Բուժօգնություն և աջակցություն դեղորայքի ձեռք բերման և բուժզննության կազմակերպման հարցերում,
- հոգեբանական աջակցություն և բնակչության հետ հոգե-սոցիալական աշխատանք,
- սեփական գործի վերականգման և զարգացման համար դրամաշնորհների տրամադրում,
- վերապատրաստում/վերարակավորում,
- աշխատանքի դիմաց վճարում (Cash for work), մասնագիտական փորձի ձեռքբերում:

Ծրագիրի իրականացման ընթացքում օգնություն են ստացել 26000-ից ավելի ներքին տեղահանվածներ և բուֆերային գոտու բնակիչներ:

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Եկատերինա, Կրամատորսկ

2016թ. ամռանը «Անհատական վերապատրաստման դրամաշնորհներ» ծրագրին դիմեց Եկատերինան, որն ուներ հատուկ կարիքներ, բայց և գիտելիքների մեծ ծարավ: 2016թ. նա ավարտեց «Համակարգչային օպերատորի» դասընթացը և վստահորեն դիմեց «Կարիտաս Կրամատորսկ» բարեգործական հիմնադրամ «Համակարգչային տառատեսակներ» դասընթացին մասնակցելու համար: Հարցազրույցից հետո նա ստացավ կրթական դրամաշնորհ: Երկու ամիս անց աշխատանքի տեղավորմամբ զբաղվող թիմը ներկա էր Եկատերինայի ավարտական միջոցառմանը, որտեղ նա ներկայացրեց առաջին անգամ իր ինքնուրույն կազմած թերթը: Եկատերինան նաև կիսվեց իր հետագա պլաններով, որովհետև իր առջև նպատակ էր դրել տիրապետել լուսանկարչական և վիդեոմոնտաժի արվեստին: Ցուցաբերված աջակցության այսպիսի արդյունքները տեսնելը մեր աշխատանքի ամենահաճելի պահն է:

Ալեքսանդր, Կրամատորսկ

Ալեքսանդրը ծնողազուրկ է և ապրում է Կրամատորսկում՝ հանրակացարանում: Չի աշխատում, կեցության միջոցները բացակայում են, մոտ հարազատներ չունի:

2017թ. հուլիսին Ալեքսանդրը հայտնվեց վնասվածքաբանական բաժանմունքում շատ ծանր վնասվածքներով, գլխի ու ներքին օրգանների սալջարդերով: Որոշ ժամանակ կոմայի մեջ էր: Ապաքինվելու շանսերը փոքր էին, բայց բժիշկներն անում էին հնարավոր ամեն ինչ, և վեց վիրահատությունից հետո Ալեքսանդրը դուրս գրվեց հիվանդանոցից:

Օգնության խնդրանքին արձագանքեցին «Կարիտաս Կրամատորսկի» ճգնաժամային կենտրոնի աշխատակիցները: Ալեքսանդրին կցեցին դեպքերի կառավարման ծրագրին, որի շրջանակներում նրան տրամադրվեց սնունդ: Նրան գրանցեցին քաղաքային հիվանդանոցում, որտեղ նեղ ոլորտային մասնագետները զննություն կատարեցին, իրականացրեցին

լաբորատոր փորձաքննություններ, որոշվեց հաշմանդամության կարգը: Աջակցություն է ցուցաբերվել նաև Ալեքսանդրին կենսապայմանների բարելավման ուղղությամբ (նա ուներ տեղաշարժման սահմանափակ հնարավորություններ). գնվեց մահճակալ՝ օրթոպեդիկ ներքնակով, սպասք, սնունդ, հագուստ և այլն: Ընտանիքն իրականացրեց պրոֆեսոր-ռեաբիլիտոլոգը, ով արագ ապաքինման համար մի շարք խորհուրդներ տվեց:

Ալեքսանդրն արդեն բավականին լավ է, բայց աշխատանքները շարունակվում են, և դեռ շատ բան կա անելու:

«Կարիտաս Կրամատորսկն» աշխատում է օգնել ՆՏԱ-ներին գոյատևել, կենսագործունեության ապահովման ծրագրի շրջանակներում տրամադրում է ֆինանսական միջոցներ բիզնեսի կազմակերպման, արդեն հիմված բիզնեսի վերագործարկման կամ զարգացման համար: «Կարիտաս Կրամատորսկը» խոշորագույն գործատուների հնգյակում է»:

(Ծրագիրի վրացի մասնակիցների հաշվետվությունից)

«Ստանցիա Խարկով» կամավորական նախաձեռնություն

ք. Խարկով, Դմիտրիևսկայա փողոց, 20
station.kharkiv@gmail.com
080 030 29 11 (թեժ գիծ)
station.kharkov.ua
fb.com/Station.Kharkov

Իրավաբանորեն կազմակերպությունը ձևակերպվել է որպես երկու ոչ առևտրային կազմակերպություններ՝ բարեգործական ընկերություն «Բարեգործական հիմնադրամ «Ստանցիա Խարկով» (ղեկավար՝Յուլիա Կոնոտոպցևա) և հասարակական կազմակերպություն «Կամավորական նախաձեռնություն «Ստացիա Խարկով» (ղեկավար՝ Ալիսա Ֆեշենկո):

«Ստանցիա Խարկով» կամավորական նախաձեռնությունը հիմնադրվել է Խարկովում 2014թ. մայիսին (հիմնադրման պաշտոնական օր է համարվում հունիսի 1-ը): Այս անկախ, ոչ պետական, ոչ առևտրային բարեգործական հասարակական կազմակերպության նպատակը դժվարին իրավիճակի մեջ հայտնված մարդկանց համապատասխան օժանդակության արդյունավետ տրամադրումն է:

«Ստանցիա Խարկով» ԿՆ օգնում է միայն խաղաղ բնակչությանը:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ և ԽՆԴԻՐՆԵՐԸ

«Ստանցիա Խարկով» ԿՆ-ն ներդրում է կատարում արդար, համերաշխ, ակտիվ քաղաքացիական հասարակության ձևավորման մեջ և նպաստում է սեփական ուժերի և միմյանց նկատմամբ հավատի վերականգնմանը: Առաջնահերթություններ են իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը, հավասար հնարավորությունների ապահովումը, տարատեսակ խտրականությունների կանխարգելումը:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- սոցիալական ինտեգրում և ադապտացիա,
- հոգեբանական աջակցություն,
- վերապատրաստման դասընթացների անցկացում,
- վերապատրաստում և զբաղվածության ապահովում,
- բարեգործական և մարդասիրական օգնություն,
- մշակութային միջոցառումներ և ազատ ժամանակի կազմակերպում:

ՀԱՋՈՂՎԱԾ ՓՈՐՁ

2014թ. ամռանը ստեղծվեց օգնության առաջին կայանը: Դա տվյալ պահին միակն էր Խարկովում, որտեղ Ղրիմի ԻՀ-ի և Դոնբասի բնակչությունը կարող էր ստանալ մարդասիրական օգնություն, որը այստեղ էին բերում ոչ անտարբեր խարկովցիները:

2014թ. հուլիսի վերջին և օգոստոսի սկզբին ստեղծվեց «Ստանցիա Խարկով» կամավորական կայանը, որտեղ աջակցություն և խորհրդատվություն էր տրամադրվում: Տրամադրվում էր սնունդ, տրվում էր մարդասիրական օգնություն, որն ընդգրկում էր առաջին անհրաժեշտության ապրանքներ, ճանապարհին ուտելու համար նախատեսված սնունդ, տեղի էր ունենում ժամանակավոր կացարանի կարիք ունեցողների ապահովում:Այս կայանը աջակցություն

է ցուցաբերել մոտ 30000 անձանց:

Աստիճանաբար, 2014թ.-ի օգոստոսից սկսած, կամավորական նախաձեռնությանը սկսեցին միանալ պետական ծառայությունները՝ Ուկրաինայի արտակարգ իրավիճակների պետական ծառայությունը և Խարկովի զբաղվածության կենտրոնը, որոնց հետ «Ստանցիա Խարկով» ակտիվորեն համագործակցում է մինչև օրս (Զբաղվածության կենտրոնի ներկայացուցիչները շաբաթական երկու անգամ հերթապահում են «Ստանցիա Խարկով»-ի կամավորական կայանում):

2015 թ.-ին «Ստանցիա Խարկով» ԿՆ-ի աշխատանքների շրջանակներում բացվել է չորս տարածաշրջանային միավոր, որոնք նույնատիպ օգնություն են տրամադրել տեղացիներին: Այսօր տարածաշրջանային կայան մնացել է միայն Կուպյանսկ-Ուզլովոյում:

Կազմակերպության հիմնական ֆինանսավորման աղբյուրը Ուկրաինայի քաղաքացիների, արտասահմանում բնակվող ուկրաինական սփյուռքի, օտարերկրացիների և դոնորական կազմակերպությունների նվիրատվություններն են: «Ստանցիա Խարկով»-ը համագործակցում է միջազգային և իրավապահ կազմակերպությունների հետ, որոնք տրամադրում են մարդասիրական օգնություն և ինստիտուցիոնալ աջակցության, չեզոքության, անկախության, թափանցիկության և իրավահավասար գործընկերության պայմաններում:

Բարերարների նվիրատվությունները փոխանցվում են ինչպես «Ստանցիա Խարկով»-ի բարեգործական հիմնադրամի, այնպես էլ կոնկրետ մարդկանց և ընտանիքների հաշվին՝ գումարի, ապրանքների, իրերի և ծառայությունների տեսքով: Դոնորներից դրամաշնորհները տրամադրվել և տրամադրվելու են ըստ էության կոնկրետ խնդիրների լուծման համար՝ սոցիալական ադապտացիա, զբաղվածություն, վերապատրաստում, «Ստանցիա Խարկով» տարածաշրջանային կայանների կազմակերպում և այլն:

«Ձեռնարկատիրական նախաձեռնությունների աջակցության և զարգացման» ծրագրի (մասնավոր գործատուների ասոցիացիայի հետ համատեղ) նպատակն է ՆՏԱ-ներին

տրամադրել նյութական օգնություն սեփական բիզնեսի կազմակերպման և ՆՏԱ-ների ընտանիքների նյութական ապահովման համար: Ծրագրում հիմնականում ընդգրկված են այն ՆՏԱ-ները, ովքեր մինչ այդ դիմել էին «Ստանցիա Խարկով» և ստացել տարատեսակ օգնություն:

«Խարկովում և Խարկովի շրջանում տեղեկատվության, իրավական և հոգեբանական աջակցության ընդլայնում և բարելավում»-ը տարածքային ծրագիր է, որն ուղղված է «Ստանցիա Խարկով»-ի մարդասիրական և ադապտացիոն աջակցության նպատակով գլխամասային և տարածքային կայանների գործունեության բարելավմանը:

«Ուկրաինայում ներքին տեղահանված անձանց իրավունքների պաշտպանություն» ծրագրի նպատակն է օժանդակել ՆՏԱ-ներին և տրամադրել մարդասիրական օգնություն: Ծրագրի շրջանակներում վարձակալվել է հանրակացարանի շենք՝ ինքնավար տարածքային միավորը լքած ՆՏԱ-ների համար որպես ժամանակավոր բնակատեղ և հաշմանդամություն ունեցող երեխաների ադապտացման համար կենտրոն գործածելու նպատակով: Իրականացվել է իրավաբանական և հոգեբանական խորհրդատվություն: Տրամադրվել է օգնություն

բնակարանների վարձակալության համար: Աշխատել է շուրջօրյա թեժ գիծ:

18 տարեկանում հատուկ կարիքներով երեխաների սոցիալականացման և վերականգնման համար իրականացվել են մի շարք միջոցառումներ: Ծրագրի բոլոր մասնակիցների համար (120 երեխա) ձեռք են բերվել ինքնուրույն վերականգնման համար անհրաժեշտ միջոցներ:

«Աջակցության կայարան» նպատակային աջակցության ծրագիրը ամբողջովին կամավոր է: Իր գոյության ընթացքում 2014 թ.-ի օգոստոսից ի վեր չի ֆինանսավորվել դրամաշնորհային ծրագրերով, բոլոր միջոցները հավաքվել են դրամահավաքների միջոցով և Ուկրաինայի ու աշխարհի այլ երկրների անհատներից և ձեռնարկություններից: Բացի այդ, մենք հաճախ կարողանում ենք գտնել հատուկ դոնոր ծանր իրավիճակում հայտնված ընտանիքների համար, որը նպատակաուղղված աջակցություն է ցուցաբերում մարդկանց՝ նրանց վիճակը բարելավելու համար: Ծայրահեղ վիճակում գտնվող 350 ընտանիքներ ստացել են թիրախավորված օգնություն: 235 անապահով ընտանիքներ նորածինների համար հավաքածուներ ստացան (օրորոց, հագուստ, տակդիր):

«Մարդասիրական օգնություն Ուկրաինայում հակամարտության հետևանքով տուժած հարկադիր տեղահանվածների և համայնքների համար» վաուչերային ծրագիրը սննդամթերքի և առաջին անհրաժեշտության ապրանքների ձեռքբերման համար վաուչերներ է տրամադրում (մոտ 2700 շահառուի):

«Հույսի իրավունքով, սիրո հանդեպ հավատով» ծրագրի՝ ՆՏԱ-ների ընտանիքների ծայրահեղ վիճակի հաղթահարմանն ուղղված («Կայան հույս») «Հայրիկը Ուկրաինայի համար» ակցիայի շրջանակներում Խարկովի և Խարկովի շրջանի ծանր կացության մեջ հայտնված վերաբնակիչների փոխարեն վճարեց սննդի, դեղորայքի և ժամանակավոր կացարանի համար:

«Ստեղծել կանանց՝ կյանքի դժվարին պայմանները հաղթահարելու հնարավորություններ՝ ինքնազբաղվածության միջոցով» վերապատրաստման ծրագրի շրջանակներում

ակնկալվում է նոր հմտությունների և մասնագիտությունների (հիմնականում առցանց մասնագիտություններ) ձեռքբերումը, որոնք կանանց օգնում են աշխատել հեռավար ռեժիմով և (կամ) կես դրույք ծանրաբեռնվածությամբ և բավարարել իրենց կարիքները ինքնազբաղվածության միջոցով:

«Դոնբաս ՍՕՍ» ՀԿ

ք. Կիև, 03150, Դելովայա փողոց,
մասնաշենք 10ա
info@donbasssos.org
0 800 309 110
donbasssos.org/ru
fb.com/DonbassSOS

Ղեկավար՝ Վալերիա Պոկլոնսկայա

«Դոնբաս ՍՕՍ» հասարակական կազմակերպության գլխավոր նպատակը Դոնբասում ռազմական գործողություններից տուժած քաղաքացիական հասարակությանը, ներքին տեղահանվածներին օգնություն տրամադրելն է, ինչպես նաև խաղաղության պահպանման և հակամարտության բացասական հետևանքների մեղմացման ուղղությամբ աշխատանքների իրականացումը։

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Դոնբասում զինված հակամարտության հետևանքով տուժած անձանց տեղեկատվության և համակարգված աջակցության տրամադրում, այդ թվում՝ Ուկրաինայի կառավարության կողմից չվերահսկվող տարածքում Ազգային թեժ գծի միջոցով 8 800 309 110, որը գործում էր Ուկրաինայի ողջ տարածքում,
- Այնպիսի տեղեկությունների հավաքագրում, վերլուծություն և լուսաբանում, որոնք օգնում են լուծել Դոնբասում ռազմական գործողությունների հետևանքով տուժած մարդկանց խնդիրները,

- մարդասիրական օգնություն, այդ թվում՝ ողջ երկրի տարածքում կարիքավոր ՆՏԱ-ներին տրամադրվող հասցեական օգնություն (դեղորայք, սնունդ, հագուստ), բարեգործական միջոցառումների իրականացում,
- իրավաբանական խորհրդատվություն ՆՏԱ-ներին (խորհրդատվություն և մարդու իրավունքների խախտման դեպքերում հետագա աջակցություն),
- Ռազմական գործողություններից տուժած ՆՏԱ-ների և քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանություն պետական մարմիններում, համագործակցություն այլ հասարակական կազմակերպությունների հետ,
- պետական մարմիններին օժանդակություն՝ ուղղված զինված հակամարտությունից տուժած բնակչության իրավունքների պաշտպանության ոլորտում օրենսդրության բարելավմանը,
- Երիտասարդների շրջանում իրավական գրագիտության բարձրացում և այլատյացության դեմ պայքար,
- Խաղաղարար գործողություններ և միջոցառումներ, որոնք ուղղված են սոցիալական համերաշխության ամրապնդմանը։

ՀԱՋՈՂՎԱԾ ՓՈՐՁ

Ազգային թեժ գիծ Դոնբաս ՍՕՍ»՝ Դոնբասում զինված հակամարտության զոհերի համար տեղեկատվական և խորհրդատվական կենտրոն

«Դոնբաս ՍՕՍ»-ի թեժ գիծն առաջ եկավ ինքնաբերաբար 2014թ.-ի գարնանը: 2014 թ.-ի հունիսից սկսած (ստացված զանգերի վիճակագրության արձանագրումով) «թեժ գիծը» գործում է շարունակական հիմունքներով՝ օգտագործելով երեք բջջային հեռախոսներ (երկրում գործող խոշորագույն բջջային օպերատորների թվով): Հակամարտության թեժ փուլում Թեժ գիծը շուրջօրյա էր աշխատում, իսկ հետո ժամանակացույցը փոխվեց:

2014թ. նոյեմբերին անցում կատարվեց թեժ գիծ զանգողների համար անվճար զանգերի 0 800 309 110 համարին՝ զանգերի կենտրոնի սարքավորումներով, զանգերի ֆիքսման և մշակման համար: Այժմ «Դոնբաս ՍՕՍ»-ի ազգային թեժ գիծը աշխատում է այս գաղափարներով.

- Անվճար
- Գաղտնիություն
- Անհատական մոտեցում:

Թեժ գիծն աշխատում է հետևյալ ժամանակացույցով՝ 9.00 - 21.00 – աշխատանքային օրերին, 9.00 - 18.00 – ազատ օրերին:

Թեժ գիծի աշխատանքի առաջին երկու և կես տարիներին (մինչև 2016 թ.) կամավոր օպերատորի հերթափոխը երեք ժամ էր, շաբաթական 3-4 անգամ: Այժմ օպերատորները աշխատում են ամբողջ դրույքով:

Թեժ գիծը սպասարկում է 2-4 օպերատոր միաժամանակ, կախված գծի ծանրաբեռնվածությունից, նաև՝ 1 օպերատոր-իրավաբան:

2014 թ.-ի աշնանից ի վեր իրավաբան կամավորներ են միացել թիմին և սկսել օպերատորներին խորհուրդ տալ իրենց հմտությունները բարելավելու և ծառայությունների որակի բարելավման նպատակով: 2016 թվականից օրենսդրական փոփոխությունների և ՆՏԱ-ների մասին կանոնակարգի ընդունման արդյունքում ավելացել է մասնագիտական

իրավաբանական խորհրդատվության տրամադրումը: 2016 թվականի փետրվարից փաստաբանները աշխատում են մշտական հիմունքներով:

Ի սկզբանե, 2018 թ.-ին Թեժ գծին մոտ 100 զանգ է ստացվում, որոնց մոտ 30%-ը՝ ժամանակավորապես չվերահսկվող տարածքից:

Այժմ «Թեժ գծի» վրա աշխատում են վեց օպերատորներ, երկու դեպքի կառավարիչներ, վիճակագիր-վերլուծաբան, տեղեկատվական շտեմարանի փորձագետ, երեք փաստաբան-օպերատոր (նախնական իրավաբանական օգնություն), երկու իրավաբան, ովքեր երկրորդային իրավաբանական օգնություն են տրամադրում (օգնում են մշակել հայտարարություններ, դատական հայցեր), հոգեբան, Թեժ գծի համակարգող:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

- Դոնեցկ քաղաքի ուկրաինական վերահսկողությունից դուրս տարածքից հաշմանդամություն ունեցող մի կին դիմել է թեժ հեռախոսագծին: 2015 թվականից նա տնից դուրս չի եկել, քանի որ հնարավոր չի եղել գտնել և գնել հաշմանդամության սայլակ: Շաբաթվա ընթացքում գործընկերների օգնությամբ սայլակը հայտնաբերվել և տարվել է համապատասխան վայր: Կինը հնարավորություն ստացավ լինել մաքուր օդում, մարդկանց հետ շփվել, ինքնուրույն գնումներ կատարել և ավելի վստահ զգալ իրեն:
- Դոնեցկի շրջանից ներքին տեղահանված մի տղամարդ դիմել է «թեժ գիծ»: Նրա բազմազավակ ընտանիքը (յոթ երեխա) երկար ժամանակ չէր կարողացել բնակարան գտնել, տեղափոխվել են քաղաքից քաղաք, ստիպված են եղել լքել վարձով բնակարանները՝ բարձր վարձավճարի պատճառով: Կազմակերպությունն օգնեց ընտանիքին գտնել բնակարան Չերնոգովի շրջանում: Այս տարածաշրջանի գյուղերից մեկում ՆՏԱ-ներին (հատկապես բազմազավակներին) մեծ ուրախությամբ ընդունում և նրանց օգնության են հասնում տեղավորման և կացարանով ապահովման գործում: Այժմ երեխաները գնում են դպրոց և մանկապարտեզ: Ընտանիքում ծնվել է աղջիկ, որը Չերնիգովի շրջանի նոր բնակչուհի է՝ դոնեցկյան արմատներով:

«Դոնբաս ՍՕՍ» կազմակերպությունը գործում է ՆՏԱ-ների իրավունքների և շահերի պաշտպանության, խտրականության դեմ պայքարի, ՆՏԱ-ներին դեղորայքի տրամադրման ուղղությամբ աջակցման, երկխոսությունների ձևավորման ուղղությամբ: Նրանք ստեղծեցին «Երեք քարտեր» անվճար թեժ գիծը, ձևավորեցին տեղեկատվական շտեմարան, հավաքում են բաժանորդներին վերաբերող վիճակագրությունը և մշտադիտարկում իրականացնում: Նրանք տպագրում են տեղեկատվական թերթիկներ, տրամադրում են իրավաբանական օգնություն, շահերի պաշտպանություն, բաժանում մարդասիրական օգնություն, կազմակերպում բարեգործական միջոցառումներ»:

(ծրագրի հայ մասնակիցների հաշվետվությունից)

BIZ
CLUB
567

ՆՏԱ-ների և փախստականների ինտեգրման վրացական փորձը

Վրաստանում ՆՏԱ-ների և փախստականների ինտեգրման իրավիճակի հակիրճ վերլուծություն

Վրաստանում (ԽՍՀՄ-ի փլուզումից հետո) Հարավային Օսեթիայում (նախկին Հարավօսեթական ինքնավար շրջան) և Աբխազիայում (նախկին Աբխազիայի ինքնավար հանրապետություն) երկու հակամարտությունների մեկնարկից ավելի քան 25 տարի է անցել:

Արդյունքում, Հարավային Օսեթիայի և Աբխազիայի (հիմնականում, Վրաստանի քաղաքացիություն ունեցող) ավելի քան 350 հազար բնակիչ դարձավ «ներքին տեղահանված անձ» (ՆՏԱ): Նույն տեղահանվածների կեսից ավելին վերաբնակեցվել է գրեթե բոլոր շրջանների տարբեր հաստատությունների շենքերում՝ մանկապարտեզներում, հանրակացարաններում, հյուրանոցներում, հիվանդանոցներում և այլն: Մյուս կեսը ինքնուրույն տեղավորվել է Վրաստանի տարբեր քաղաքներում և գյուղերում:

Համարվում է, որ Վրաստանում եղել է ՆՏԱ-ների հոսքի երկու ալիք՝ 90-ականների սկզբին (այսպես կոչված, «հին» ՆՏԱ-ներ) և 2008 թ. օգոստոսյան պատերազմից հետո (այսպես կոչված, «նոր» ՆՏԱ-ներ):

1992 թվականի վերջին, առաջին հակամարտությունների ժամանակ, ստեղծվել է Միգրացիայի և փախստականների կոմիտե, որը զբաղվում էր այդ մարդկանց տրամադրվող օժանդակության և վերաբնակեցման կազմակերպման հարցերով: Պետությունը որոշել է բնակիչներին տեղավորել հյուրանոցներում, դպրոցներում, առողջարաններում, հիվանդանոցներում, արդյունաբերական նշանակության և երկարատև բնակության համար այլ անբարենպաստ շենքերում: Այդ տարիներին ինտեգրման մասին խոսակցություններ չեն եղել. ուշադրության կենտրոնում էր միայն վերադարձը: Ներմուծվեց «ժամանակավոր ինտեգրում» եզրույթը, քանի որ վախ կար, որ ՆՏԱ-ներին սեփական բնակարաններով ապահովումը կնվազեցնի վերադառնալու նրանց շահագրգռությունը:

2007 թ.-ին հաստատվել է «Ներքին տեղահանված անձանց հարցերով պետական ռազմավարություն» ծրագիրը, որը իրականացվել է «Նոր մոտեցում ՆՏԱ-ներին օգնելու համար» ծրագրի շրջանակներում: Դա Վրաստանի կառավարության, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության, Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության, Համաշխարհային բանկի, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի և ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի համատեղ նախաձեռնությունն էր: Սույն փաստաթղթի ուժեղ կողմն այն է, որ այն մշակվել է ինչպես պետական մարմինների, այնպես էլ հասարակական կազմակերպությունների, հասարակության լայն շրջանակների և ՆՏԱ-ների մասնակցությամբ: Ռազմավարությունը հիմնված էր մարդու իրավունքների 10 սկզբունքների վրա և ընդգրկում էր երկու հիմնական նպատակ՝ արժանապատիվ և անվտանգ վերադարձի նախապատրաստություն և ՆՏԱ-ների սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում:

Ռազմավարությունը դարձել է ՆՏԱ-ների խնդիրներին պետության կողմից մեկ միասնական մոտեցման մշակման առաջին ազդակը, ի հայտ եկան նոր գաղափարներ այն մասին, թե ինչպես կարելի է հաշվի առնել նրանց շահերը և կարիքները: Ռազմավարության մեջ հստակ նշված են ՆՏԱ տարաբնակեցման ժամկետները և մեթոդները:

2014 թ.-ից ի վեր Վրաստանում կան ՆՏԱ-ներին բնակարաններով ապահովման ուղղությամբ օգնության տարատեսակ ձևեր՝ դրամական փոխհատուցում (տարբեր գումարներ), կոլեկտիվ կենտրոնների վերանորոգում և դրանց հետագա մասնավորեցում, անավարտ շենքերի վերանորոգում/վերակառուցում, գյուղական բնակավայրերում տների գնում (մեկ ընտանիքին՝17,000 լարի), արտոնյալ պայմաններով հիփոթեքային վարկերի տրամադրում: Վերջերս հաջողությամբ ներդրվել է բազմաբնակարան շենքերում բնակարանների ձեռքբերման համակարգը: Մենք համարում ենք, որ այս գործընթացը ավելի առաջադեմ է, քանի որ տեղական համայնքներում տեղահանվածների ինտեգրումը ավելի արագ կընթանա:

Վրացական հասարակական կազմակերպություններն ընդգրկված են ՆՏԱ-ներին վերաբերող օրենսդրական փոփոխությունների, ներառյալ՝ վերաբնակեցման

չափորոշիչների և պայմանների ստեղծման, նյութական օգնություն տրամադրելու և սոցիալական հարցերի լուծման հանձնաժողովներում: Նրանք նաև ակտիվորեն աշխատում են ՆՏԱ-ների կարևոր խնդիրների ուղղությամբ՝ հոգեբանական վերականգնում, սոցիալ-տնտեսական վիճակի բարելավում, իրավունքների պաշտպանություն, կարողությունների զարգացում և հանրային կյանքում ներգրավվածություն: Հատուկ ուշադրություն է դարձվում երիտասարդների կրթությանը՝ խաղաղարարության ոգով:

2008 թվականից սկսվել է ժնևի գործընթացը, որը վերաբերում է բոլոր, ներառյալ ՆՏԱ-ների վերադարձի խնդիրներին: Եվ ամեն անգամ, երբ վրացական կողմը բարձրացնում է ՆՏԱ-ների վերադարձի հարցը, այն անմիջապես փակվում է մյուս կողմի կողմից, և բոլոր բանակցությունները դադարում են:

Չնայած ՆՏԱ-ների ինտեգրման ոլորտում վրացական հասարակական կազմակերպությունների երկար տարիների աշխատանքին, դեռևս խնդիրներ և մարտահրավերներ կան.

- անհրաժեշտ է ամրապնդել այդ բնագավառում գործող կազմակերպությունների և «Սիներջի» հասարակական կազմակերպությունների ցանցի միջև համակարգումը,
- ինտեգրման հարցերը (և ընդհանրապես խաղաղարարությունը) միջազգային դոնորների կողմից ֆինանսավորման համար առաջնային թեմա չէ, և արդյունքում վերջին ժամանակներս ինտեգրման հարցում ՆՏԱ-ների հետ ակտիվ աշխատանք չի տարվել,
- հաշտեցման, քաղաքացիական հավասարության, հակամարտությունների լուծման և ՆՏԱ-ի խնդիրներով զբաղվող պետական մարմինները հաճախ են օգտագործում հասարակական կազմակերպությունների ռեսուրսները և հարուստ փորձը: Ապագայում հասարակական կազմակերպություններին հարկ է ընդլայնել ՆՏԱ-ների իրավունքների պաշտպանությանն ու նրանց տեղեկացնելուն ուղղված աշխատանքները:

Ալլա Գամախարիա

ծրագրի համակարգող (Վրաստան)

Ուսուցողական այց Վրաստան

2017 թ.-ի հուլիսի 24-ից մինչև 31-ը Վրաստանում տեղի ունեցավ Ուկրաինայից, Վրաստանից, Հայաստանից և Հյուսիսային Կովկասից ներքին տեղահանված անձանց և փախստականների ինտեգրման թեմայով փորձագետների երկրորդ ուսուցողական այցը:

Կազմակերպիչներն ընտրեցին 12 կազմակերպություն, որոնք կարող էին տեղեկատվություն և լավագույն փորձի փոխանակում ապահովել, մասնավորապես առաջին ուսուցողական այցից հետո մասնակիցների կողմից արտահայտված հարցերի և հետաքրքրությունների վերաբերյալ:

Այսպիսով, զեկույցների և քննարկումների հիմնական թեմաներն էին սոցիալ-տնտեսական ինտեգրման երկարաժամկետ ծրագրերի ներդրումը, սոցիալական ձեռներեցության ծրագրերը, ներքին տեղահանված անձանց իրավունքների և շահերի պաշտպանությունը, ՆՏԱ-ներին իրավական աջակցությունը, ՆՏԱ-ների վերաբնակեցումը բնակավայրերում, վերաբնակեցման ժամանակ կիրառված մեթոդները և չափանիշները, զբաղվածության խնդիրները, երիտասարդների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների հետ աշխատանքը, երիտասարդության հետ ինտերակտիվ երկխոսությունները և կրթական աշխատանքները կոնֆլիկտների կանխարգելման ուղղությամբ, ներքին տեղահանված անձանց և տեղական բնակչության համար ոչ ֆորմալ կրթական ծրագրերը, ինչպես նաև նրանց միջև սոցիալական կապեր հաստատել, պետական կառույցների հետ փոխգործակցությունը, ցանցային համագործակցության հաստատումը և այլն: Բացի դրանից, քննարկվեցին կանանց կազմակերպությունների դերը և ազդեցությունը Վրաստանում խաղաղարար գործընթացների վրա:

Մասնակիցները այցելեցին Քութաիսի, Բաթումի, Փոթի, Թբիլիսի և Զուգդիդիում գործող հասարակական կազմակերպությունների:

Հենց այս քաղաքներում են ապրում մեծ թվով ներգաղթյալներ և փախստականներ, և նրանց ինտեգրման գործում քաղաքացիական կազմակերպությունների աշխատանքը առավել առաջանցիկ է:

Մասնակիցները հյուրընկալվեցին «Կրթություն և տիեզերք» մանկավարժների միությանը (Քութաիսի), Երիտասարդ իրավաբանների ասոցիացիային (Քութաիսիի մասնաճյուղ), Սուխումի հիմնադրամին (Քութաիսի), Կրթության զարգացման և զբաղվածության կենտրոնին (Քութաիսի), «Թանգիմոբ» ՆՏԱ կանանց ասոցիացիային (Թբիլիսի), DRC-ին (Թբիլիսի), բարեգործական-մարդասիրական կենտրոն «Աբխազետի»-ին (Թբիլիսի), «Համաձայնություն» ՆՏԱ կանանց միջազգային միությանը (Թբիլիսիի), «Գանտիադի» համայնքային հասարակական կազմակերպությանը (Գորի), «Լազիկա»-ին (Փոթի), «Սաունդժե»-ին (Զուգդիդի), «Ատինատի»-ին (Զուգդիդի), Զարգացման և կրթական կենտրոնին (Բաթումի):

Մասնակիցները նշել են վրացական կազմակերպությունների լավ կազմակերպված աշխատանքը, հետաքրքիր գաղափարները և բյուրոկրատիայի դեմ արդյունավետ պայքարը. «Տպավորվեցի նրանով, որ Վրաստանում կազմակերպությունները աշխատում են մի թիմի պես, ճանաչում են միմյանց, հաջողությամբ լուծում են ներքին տեղահանվածների խնդիրները և հստակորեն դրանք դնում պետության առաջ»,- մասնակիցներից մեկը նկարագրել է իր տպավորությունները:

Փոթի քաղաքում Աբխազիայի «Լազիկա» միգրանտների հարցերով զբաղվող հասարակական կազմակերպության հետ հանդիպմանը ներկայացվեց «Իններորդ ալիք» հեռուստաալիքի (2017 թ. հուլիսի 28) զեկույցը: Այնտեղ «Իմեդի՝ հանուն խաղաղության տեղահանված կանանց շարժում» վրացական ասոցացիան ներկայացնող, ուսուցողական այցի մասնակից Քրիստիան Քիլանավան, ծրագրի մեր հիմնական ուկրաինական գործընկեր՝ «Կռաինա վիլնիխ յուդեյ»-ի ներկայացուցիչ և ծրագրի ղեկավար Նադեժդա Խմենկոն, ԳՌՓ-ի ներկայացուցիչ Մարիա Սլիզաչեկը կիսվեցին իրենց տպավորություններով և մանրամասն պատմեցին այցի նպատակի մասին:[1]

Արդյունքում, մասնակիցները ընտրեցին առավել հաջող փորձերից երեքը, որոնք ներկայացված են այս բաժնում: Դրանք են «Լուսավորություն և տիեզերք» մանկավարժների միությունը (Քութաիսի), «Համաձայնություն» ՆՏԱ կանանց միությունը (Թբիլիսի) և «Աբխազետի» բարեգործական-մարդասիրական կենտրոնը:

1 *Հաղորդումը հասանելի է հետևյալ հղումով՝ https://youtu.be/-pMdi2Ti82w*

«Ուսուցողական այցը շատ օգտակար էր: Վրաստանն ունեցել է նույնպիսի խնդիրներ, ինչ Ուկրաինան: Եվ այս պահին երկրի հասարակական կազմակերպությունների հատվածում մեծ փորձ կա կուտակված ՆՏԱ-ների հետ աշխատանքի և պետության հետ համագործակցելու ուղղություններով: Մեզ հատկապես հետաքրքրում էին խնդիրների լուծման համար իշխանությունների հետ ամենաբարձր մակարդակի շփումները: Առաջին անգամ հետխորհրդային տարածքում մենք ականատես եղանք, թե որքան մեծ է Վրաստանի քաղաքացիական հասարակության ազդեցությունը ՆՏԱ-ների ինտեգրմանը նպաստող օրենսդրական ակտերի ստեղծման գործում: Դա մեզ համար չափազանց արժեքավոր էր: Վրաստան կատարած ուղևորությունից հետո մենք քննարկեցինք մեր շրջանակներում և մեր տարածքում, թե ինչպես կարող ենք ստեղծել ցանց և բարձրացնել հասարակական կազմակերպությունների դերը՝ որոշումների կայացման վրա ազդելու և մարդկանց խնդիրների լուծման համար պետական բյուրոկրատական մեքենայի վրա ճնշում գործադրելու նպատակով»:

(ծրագրի ուկրաինացի մասնակիցների հաշվետվությունից)

«Կարծում եմ, որ նպատակները իրագործվեցին: Մենք կարողացանք իրավիճակ տեսնել մեր աչքերով՝ շփվել ՆՏԱ-ների հետ, տեսնել կոմպակտ բնակավայրեր, թե՛ նոր, թե՛ հին, գնալ սահմանային անցակետ, ծանոթանալ լուրջ հասարակական կազմակերպությունների հետ: Երկարաժամկետ ազդեցությունն այն էր, որ մենք կիրառեցինք վրացի գործընկեների մշակումները, որոշ ժամանակ անց համագործակցություն հաստատեցինք մեր կազմակերպությունների միջև: Գործնականում մեր այցելած կազմակերպություններից յուրաքանչյուրի փորձը հետաքրքրություն էր ներկայացնում: Մենք պայմանավորվեցինք մշակված նյութերով փոխանակվել:

(Ծրագրի ուկրաինացի մասնակիցների հաշվետվություններից)

ՆՏԱ-ների և փախստականների ինտեգրման հաջողված օրինակներ Վրաստանում

«Լուսավորություն և տիեզերք» մանկավարժների միություն

Վրաստան, Քութաիսի,
Դավիդ Ագմաշենեբելու պողոտա, №10
+995 99 19 14 04
nramishvili@mail.ru
uteu_ge@yahoo.com
www.uteu.ge
fb.com/Union-of-Teachers-Education-and-Universe-220841264606274/
Ներկայացուցիչ՝ Նանուլի Ռամիշվիլի

«Լուսավորություն և տիեզերք» մանկավարժների միությունը (Union of Teachers Education end Universe) հասարակական կազմակերպություն է, որը հիմնադրվել է Քութաիսիում (Իմերեթիա, Վրաստան) 2002թ.-ին:

Դա այն ՆՏԱ-մանկավարժների միությունն է, ովքեր ակտիվորեն ներգրավված են խաղաղարարության, քաղաքացիական կրթության ապահովման գործում: Կազմակերպության ստեղծումը և գործունեությունը հիմնված է կամավոր կրթական նախաձեռնությունների վրա, որոնք կարևոր դեր են խաղում վրացի ուսուցիչներին, կին գիտնականներին, երիտասարդ ուսանողներին և ՆՏԱ-ներին սոցիալական գործունեության և հասարակության ժողովրդավարացման մեջ ներգրավելու գործում:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առանցքային ռազմավարական ուղղությունը մանկավարժների այս միության գործունեությունում, կրթության ոլորտում ժողովրդավարական գործընթացների և մշակութա-կրթական բնագավառներում եվրոպական ինտեգրման խթանման հետ մեկտեղ, ներառում է նաև ակտիվ մասնակցությունը հակամարտությունների խաղաղ կարգավորման գործին՝ խթանելով բնակչության ակտիվ կյանքը, կրթության և մշակույթի ոլորտում աշխատող ուսուցիչների խաղաղարար գործունեությանը, սոցիալական և հասարակական ակտիվությանը:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ

ՓՆՏԱ-ների և տեղական բնակչության ֆորմալ և ոչ ֆորմալ կրթությունը, նրանց միջև սոցիալական կապեր հաստատելը, գիտական գաղափարներ և ուսուցման առաջադեմ մեթոդներ պոտենցիալ սպառողներին փնտրելը, ուսուցիչների մանկավարժական կարողությունների բարձրացումը, նրանց կարիերայի աճի համար իրազեկությունը բարձրացնելը և մատչելի տեղեկատվություն տրամադրելը՝ հանուն քաղաքացիական և խաղաղարար նախաձեռնությունների ակտիվացման և համակարգման, ընդլայնելով կանանց և մանկավարժների ազդեցությունը հասարակության զարգացման վրա, այսինքն, վերացնելով կանանց (աղջիկների) և տղամարդկանց կրթության և մշակույթի համակարգում գենդերային անհավասարությունը:

ՀԱՋՈՂՎԱԾ ՓՈՐՁԵՐ

Վրաստանում կրթական համակարգի բարեփոխման օրվանից սկսած (2002 թ.-ից), կազմակերպությունը մեծ ջանքեր է գործադրել, որպեսզի ՆՏԱ-մանկավարժները ներգրավվեն այս գործընթացի մեջ: Կազմկերպության հիման վրա ստեղծվեց «Մանկավարժների առաջանցիկ փորձի դպրոցը»: Հատուկ ծրագիր է մշակվել ՆՏԱ-մանկավարժների որակավորումը

բարձրացնելու համար (կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր), որը նպաստել է մանկավարժների մասնագիտական աճին, արդյունավետ ուսուցման մեթոդների և տեխնիկայի ներդրմանը ժամանակակից կրթական տեխնոլոգիաների, վերապատրաստման սեմինարների, վարպետության դասերի, առարկաների դասավանդման դասընթացների և այլնի շնորհիվ:

«ՆՏԱ-ների՝ որպես հասարակության ակտիվ անդամների համար նախատեսված դպրոցներ»: Այս նախաձեռնության շրջանակներում Միության ծրագրով իրականացվել է սոցիալական ներառման մոդելի փորձնական ներդնում՝ չորս դպրոցների միավորմամբ (երկու ՆՏԱ դպրոց + երկու տեղական դպրոց Քութաիսի քաղաքում): Այս համագործակցությունը ամրապնդեց ներգրավված դպրոցների ներուժը և զգալիորեն նվազեցրեց ՆՏԱ-ների դպրոցներում սովորող երեխաների մեկուսացումը:

ՆՏԱ-ների և ռիսկային խմբերի երեխաների համար կրթական հնարավորությունները ընդլայնվում են Քութաիսիում և Ցխալթուբոյում ուսուցիչների մանկավարժական կարողությունների կատարելագործման շնորհիվ: Իմերեթիայի շատ ուսուցիչներ պատրաստ չեն բռնության ենթարկված, ցնցումներով (հակամարտության ընթացքում և հետո) և բաց հակամարտությունների անմիջական փորձառություն ունեցող երեխաներին օգնություն ցույց տալ: Միությունն իրականացրեց 100-ից ավելի ուսուցիչների և 20 հոգեբանների ուսուցում՝ նպատակ ունենալով նրանց շրջանում զարգացնել այդպիսի երեխաների հետ աշխատանքի հմտությունները: Վերապատրաստման մի շարք ինտենսիվ դասընթացներից հետո ուսուցիչները իրենց գիտելիքներով կիսվեցին գործընկերների հետ: Ծրագրի շրջանակներում ուսուցիչների համար պատրաստվել է ձեռնարկ, որը դարձել է կարևոր գործիք՝ հաշմանդամ երեխաների և ռիսկային խմբերի հետ աշխատանքին ուղղված մանկավարժական հմտությունների կատարելագործման համար:

Երիտասարդական խաղաղաարար ծրագիր՝ «Ապրել խաղաղության և ներդաշնակության մեջ»: Այս ծրագրի

շրջանակներում Արևմտյան Վրաստանի կրթական հաստատություններում (Իմերեթիա, Սամեգրելո, Աջարիա) ստեղծվել է «Խաղաղությունն ինձնով է սկսվում» խաղաղասիրական ցանցը (ցանցը ներառում է 81 դպրոց և չորս համալսարան): Երիտասարդ մարզիչները և կամավորները տարածեցին խաղաղության գաղափարները՝ օգտագործելով հատուկ մշակված «Դեպի խաղաղություն տանող ուղին» ծրագիրը, որը բաղկացած է 12 մոդուլից:

«Խաղաղության մշակույթ» ծրագիրը երիտասարդներին ընձեռում է հնարավորություն՝ ծանոթանալ ազգային և այլ շրջանների, երկրների մշակույթների հետ և ձեռք բերել այնպիսի արժեքներ, ինչպիսիք են հանդուրժողականությունը մշակութային բազմազանության նկատմամբ, երկխոսության և համագործակցության հիման վրա հակամարտությունների իրավիճակների խաղաղ կարգավորումը, պատմական, մշակութային և բնական ժառանգության նկատմամբ հարգանքը ՄԱԿ-ի մոդելի համաձայն մշակված դերային խաղերի միջոցով: Դերախաղն օգնում է երիտասարդներին ծանոթանալ տարածաշրջանային խնդիրների հետ, գտնել դժվար իրավիճակների լուծման այլընտրանքային ուղիներ, բանակցությունների ընթացքում երկխոսության հմտություններ զարգացնել: Դերախաղերն անցկացվել են Իմերեթիայում, ինչպես նաև Վրաստանի այլ շրջաններում՝ Աջարիայում, Սամեգրելոյում, Շիդա Քարթլիում, սահմանամերձ տարածքներում և ՆՏԱ-ների կոմպակտ բնակավայրերում:

Բացի այդ, իրականացվեցին «Հանդուրժողականության մանկական կրթական ծրագիր» նախաձեռնությունը, խաղաղության մշակույթ ծրագիրը, վստահության վերականգման նպատակով խաղաղարար կրթության ծրագրերը, այդ թվում՝ «Ուսուցիչը՝ խաղաղության ռեսուրս», «Մանկավարժական վարպետության տանող ուղին»:

Բոլոր միջոցառումներն ուղղված էին հակամարտությունների վերափոխման ոլորտում աշխատանքային փորձի զարգացմանը և հարստացմանը, ինչպես նաև ներգաղթած երեխաների, երիտասարդների և ուսուցիչների ինտեգրմանը:

«Շատ լավ օրինակներ են ներկայացված: Հստակ երևում է, թե ինչ է փոխվում: Ինձ դուր եկավ մանկավարժների փորձը, նրանք երիտասարդների շրջանում նոր աշխարհայացքի ձևավորման գործում առաջնորդներ են: Հետաքրքիր մեթոդ է հասարակական պատվերի և պետական ֆինանսների հետ կապակցումը, քանի որ շատ կարևոր է աստիճանաբար ռազմավարական անցում ապահովել միջազգային ֆինանսական օժանդակությունից պետականին»:

(Ծրագրի ուկրաինացի մասնակիցների հաշվետվություններից)

«Համաձայնություն» ՆՏԱ կանանց ասոցիացիա (Consent)

Վրաստան, Թբիլիսի,
Թամար Մեպե պողոտա 20
+ 99 532 234 49 82
julia.kharashvili@yahoo.com
idpwa.org
fb.com/IDPWAConsent

ՆՏԱ կանանց «Համաձայնություն» ասոցիացիան (այսուհետ՝ Ասոցացիա) ստեղծվել է Աբխազիայի ՆՏԱ համայնքի կանանց կողմից 1995թ., իսկ 1996թ. գրանցվել է Վրաստանի արդարադատության նախարարության կողմից: Ասոցիացիան հենց սկզբից նպատակ էր հետապնդում բարելավել ՆՏԱ կանանց և նրանց ընտանիքի անդամների սոցիալ-տնտեսական, հոգեբանական վիճակի բարելավումը:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

ՆՏԱ-կանանց և նրանց ընտանիքների անդամների սոցիալական, տնտեսական և հոգեբժշկական վիճակի բարելավմանն ուղղված աջակցություն:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Կազմակերպությունը սկսեց իր գործունեությունը ծավալել (Նորվեգիայի փախստականների խորհրդի հետ համատեղ) բնակարանային պայմանների ուսումնասիրության, սոցիալական

և բժշկական-հոգեբանական խնդիրների ուղղությամբ, այնուհետև, այլ ծրագրերի շրջանակներում փորձեց արձագանքել հայտնաբերված մարտահրավերներին: 1995 թ.-ից Ասոցիացիան կանոնավոր կերպով իրականացրել է հոգե-սոցիալական վերականգնման ծրագրեր, հակամարտությունից տուժած կանանց և երեխաների բժշկական զննում, հիմնականում՝ ՆՏԱ կոմպակտ բնակավայրերում:

1996 թ. Ասոցիացիան ակտիվորեն աշխատում է վստահության և խաղաղության հաստատման ծրագրերում ՆՏԱ-ների ներգրավման ուղղությամբ: 12 տարիների ընթացքում Ասոցիացիան կազմակերպել է խաղաղարար ճամբարներ, որոնցում երեխաները, ապա նաև Հարավային Կովկասի հակամարտությունների գոտիներից երիտասարդները հանդիպում են, ուսումնասիրում և աշխատում են, ինչը թույլ տվեց 2001 թ.-ին ստեղծել Կովկասի երիտասարդ առաջնորդների ցանց:

ՆՏԱ-ների հետ աշխատանքի ընթացքում Ասոցիացիան հանգեց նրանց իրավունքների պաշտպանությունն իրականացնելու անհրաժեշտությանը: 1995 թ.-ից ի վեր Ասոցիացիան եղել է ԱՊՀ երկրների ժնևի համաժողովի միգրացիայի և արտագաղթի հարցերի աշխատանքային խմբի անդամ: 1996 թ.-ից ի վեր կազմակերպությունն ակտիվորեն աշխատում է սոցիալական և հոգեբանական աջակցության կազմակերպման ուղղությամբ: 1998 թ.-ին Գալիի շրջանում ռազմական էսկալիացիայի ժամանակ Ասոցիացիան նախաձեռնել էր չորս մասնագիտական կազմակերպություններից բաղկացած կոալիցիայի կողմից կազմակերպված զանգվածային հոգեբանական աջակցություն և բժշկական օգնություն (ավելի քան 10,000) ՆՏԱ-ների համար: 1996-2000թթ. Ասոցիացիան ՆՏԱ-ների հոգեբանա-սոցիալական վերականգնման տարածաշրջանային համագործակցության կազմակերպման հարցերի շուրջ ակտիվորեն համագործակցել է Նորվեգիայի փախստականների խորհրդի հետ, իսկ 2000 թ.-ից ի վեր Բրուքինգս ծրագրի և ՆՏԱ իրավունքների մասին հատուկ զեկուցողի հետ: 2003 թ. մասնակցել է «Վրաստանում ներքին տեղահանված անձանց իրավունքները» հրապարակման առաջին հրատարակության նախապատրաստմանը (ՄԱԿ-ի հրատարակություն):

ՀԱՋՈՂՎԱԾ ՓՈՐՁ

Ասոցիացիան, Փախստականների հարցերով Դանիայի խորհրդի հովանու ներքո իրականացվող տարածաշրջանային համատեղ ծրագրերի շրջանակներում, նախաձեռնել էր ստեղծել աշխատանքային խումբ ՆՏԱ վերաբնակեցման՝ հատկապես չկարգավորվող, այսինքն՝ մասնավոր հատվածում բնակվող և մշտապես անուշադրության մատնված խնդիրներով տեղահանվածների իրավունքների վրա կենտրոնացող ռազմավարության մշակման համար:

Ընդունված էր, որ մասնավոր հատվածում բնակվող ՆՏԱ-ները ավելի ադապտացված էին և ավելի քիչ օգնության կարիք ունեին, քան կոլեկտիվ կենտրոնների բնակիչները: Միջազգային կազմակերպությունները ավելի մեծ ուշադրություն են դարձրել կոմպակտ բնակավայրերում բնակվող ՆՏԱ-ներին, նախ՝ խնդիրները, մեկ վայրում կենտրոնացած լինելու շնորհիվ, ավելի տեսանելի էին, և ապա, կառավարությունը անընդհատ դիմել է մարդասիրական կազմակերպություններին՝ այդ կոլեկտիվ բնակավայրերի վերականգնմանն աջակցելու համար: Սա ՆՏԱ-ներին ուղղված պետական ռազմավարության մշակումը նախաձեռնելու դրդիչ գործոններից էր: Մեկ այլ գործոն էր այն ընկալումը, որ ՆՏԱ-ների հետ կապված իրավիճակի լուծված չլինելը խանգարում է զարգացման ծրագրերին: Իր հերթին, հասարակական հատվածը երկար ժամանակ բարձրացնում էր ՆՏԱ-ների տնտեսական, սոցիալական, իրավական զարգացման և նրանց վերաբնակեցման խնդիրների լուծման հարցը:

2009 թ.-ից ի վեր կառավարությունը ընդունել է ՆՏԱ-ների վերաբնակեցման ծրագիրը: Ասոցիացիան հասարակական կազմակերպությունների Սիներժի ցանցի հետ ներգրավված է այդ ծրագրում և իրականացնում է ՆՏԱ-ների իրավունքների պաշտպանության ջատագովություն, մշակում է չափանիշներ, իրականացնում է հիմնականում՝ 90-ականների հակամարտությունների արդյունքում ՆՏԱ-ների սոցիալական և բնակարանային պայմանների ուսումնասիրություն, քանի որ 2008 թ.-ի պատերազմից հետո «նոր» ի հայտ եկած ՆՏԱ-ները գրեթե ամբողջությամբ ապահովված էին բնակարաններով, չնայած որ այդ բնակարանների որակը բազմաթիվ հարցեր

էր առաջ բերում:

Ասոցիացիան շարունակում է աշխատել Արևմտյան Վրաստանի երկու մարզերի ՆՏԱ-ների հետ (Աբխազիա և Ցխինվալի շրջան): Հիմնական ոլորտներն են ՆՏԱ-ների վերաբնակեցման ճշգրիտ մշտադիտարկումը, բնակարանային պայմանների բարելավումը և ՆՏԱ-ների՝ սոցիալական ծրագրերում և մատչելի ծառայություններում ներգրավվելու դյուրինությունը, վերաբնակեցումից հետո ադապտացիայի աջակցությունը: Ընտանեկան և կանանց նկատմամբ բռնությունների աճը դեռևս լուրջ խնդիր է: Համաշխարհային բանկի ուսումնասիրությունները (2017 թ.) ցույց են տվել բռնության ցուցանիշների աճի, չլուծված հակամարտությունների հետևանքների և ՆՏԱ ընտանիքներում արդեն իսկ փոքր տնտեսական հնարավորությունների միջև կապը: Տեղական իշխանությունների հետ համագործակցությամբ շարունակվում է աշխատանքը կանանց հետ՝ քաղաքացիական կին ակտիվիստների դաստիարակության և նրանց կարողությունների զարգացման ուղղությամբ:

ՆՏԱ-ՆԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԱՍՈՑԻԱՑԻԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ Է ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ.

- Շիդա Քարթլիում և Քվեմո Քարթլիում բնակվող ՆՏԱ-ների համար անվճար բուժօգնություն,
- մասնագիտական կրթություն (Շիդա Քարթլի),
- վերաբնակեցման մոնիթորինգ և օժանդակություն կենտրոնական և տեղական իշխանություններին՝ ուղղված խնդիրների լուծմանը,
- նոր բնակավայրերում ՆՏԱ համայնքների մոբիլիզացումը,
- համատիրությունների կազմակերպմանն աջակցությունը,
- ոչ ֆորմալ կրթական ծրագրեր,
- «Կանանց առաջնորդության ակադեմիա»,
- բռնության կանխարգելման ծրագրեր ոչ ֆորմալ կրթության միջոցով,

- ֆորում-թատրոնի ներկայացումներ,
- հոգեդրամաներ
- հավասարակիցների կողմից ահաբեկությունների կանխման ուղղությամբ աշխատանք այն դպրոցներում, որտեղ սովորում են ՆՏԱ-ների և հակամարտությունից տուժած անձանց երեխաները,
- երիտասարդության համար արդիական թեմաներին վերաբերող բանավեճեր,
- երիտասարդության շրջանում կամավորության զարգացումը,
- ցերեկային խնամքի կենտրոնի և տնային օժանդակության միջոցով տարեց ՆՏԱ-ների սոցիալականացման ուղղությամբ տարվող աշխատանք,
- իրավաբանական խորհրդատվություն և իրավական աջակցություն և այլն:

«Թբիլիսիում մեզ ներկայացրեցին Վրաստանում ՆՏԱ-ների կոմպակտ վերաբնակեցման մոդելը: Ելույթում նրանք կարևորեցին պետության դերը իրենց գործունեության համար, ինչպես նաև համագործակցությունը պետական կառույցների հետ, որը մեկնարկել էր 2007 թվականին: Գործունեության բոլոր բնագավառներում կազմակերպությունը առանձնահատուկ դեր է խաղացել ՆՏԱ-ների և վերաբնակիչների հետ աշխատանքում: Ինձ շատ դուր եկավ նրանց մոտեցումը ՆՏԱ-ների ներկայիս խնդիրներին: Նրանց տվյալներով, 50000 ՆՏԱ ընտանիք այժմ կարիքի մեջ է ապրում՝ նվազագույնի հասած կենսապահովման պայմաններով. կան ՆՏԱ- ներ, որոնք սեփական ուժերով են բնակարաններ գտել, մինչդեռ գոյություն ունի այսպես կոչված «status-based»՝ կարգավիճակով պայմանավորված օժանդակություն, որը պետք է փոխարինվի «need-based»-ի՝ կարիքով պայմանավորված օժանդակության, որպեսզի ավելի շատ կենտրոնանան ՆՏԱ-ների կարիքների վրա»:

(Ծրագրի ուկրաիանացի մասնակիցների հաշվետվություններից)

«Աբխազետի» բարեգործական-մարդասիրական կենտրոն

Վրաստան, Թբիլիսի,
Ազատության հրապարակ 4ա, բն.12
+995 32 294 45 44
chca.org.ge
fb.com/CHCAGeorgia

«Աբխազետի» բարեգործական-մարդասիրական կենտրոնը, որը ոչ առևտրային հասարակական կազմակերպություն է, հիմնադրվել է 1995թ.-ին:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Հակամարտությունից տուժած և սոցիալապես անապահով անձանց համար գոյության աղբյուրների հասանելիության բարձրացումը, ինչպես նաև նրանց սոցիալ-տնտեսական ինտեգրման ապահովումը:

Կազմակերպությունը ստեղծվել է Աբխազիայում զինված հակամարտությունից հետո հազարավոր ՆՏԱ-ներին աջակցելու նպատակով: Այդ ժամանակից ի վեր իրականացվել են բազմաթիվ կրթական, միկրոֆինանսավորման և ՆՏԱ-ների վերաբնակեցմանն աջակցող ծրագրեր:

Հիմնական նպատակն է բարձրացնել անհատների և համայնքների դերը քաղաքացիական հասարակության կառուցման և ժողովրդավարության ամրապնդման գործում, ինչպես նաև բարելավել ՆՏԱ-ների և սոցիալապես անապահով անձանց սոցիալական և

տնտեսական պայմանները՝ զարգացման հնարավորությունների ստեղծման և ինքնավստահության ավելացման միջոցով:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ապրուստի միջոցների և տնտեսական զարգացման աղբյուրների ապահովում,
- համայնքային զարգացում և ջատագովություն,
- երեխաների և երիտասարդների պաշտպանություն և զարգացում,
- խաղաղարարություն և վստահության վերականգնում,
- թիրախային լսարան,
- տեղահանված անձինք,
- հակամարտության գոտում ապրող անձինք,
- սոցիալապես անապահով ընտանիքներ,
- օրենքի հետ խնդիրներ ունեցող անձինք,
- նախկին միգրանտները,
- երեխաները և երիտասարդները:

ՀԱՋՈՂՎԱԾ ՓՈՐՁ

Սոցիալ-տնտեսական ինտեգրման և ապրուստի միջոցների ստեղծման/պահպանման խթանում

Այս ոլորտում իրականացվող ծրագրերի նպատակն է հզորացնել ՆՏԱ-ների տնտեսական գործունեությունը: ՆՏԱ-ների և հակամարտությունից տուժած բնակչության համար իրականացվում են հետևյալ գործողությունները՝ մասնագիտական ուսուցում, բիզնեսի կառավարման և աշխատանքի որոնման վերաբերյալ դասընթացներ և խորհրդատվություններ, գործարարությանն ուղղված անկանխիկ դրամաշնորհներ և անտոկոս վարկեր, գյուղատնտեսությանը աջակցող ծրագրեր և սոցիալական ձեռնարկությունների ստեղծում:

Անհատական օրինակներ.

Լևան Մախարոբլիձեն ծնունդով Աբխազիայից է: Քութաիսիում նա հաջողությամբ գլխավորում է մետաղների վերամշակման բիզնեսը, իսկ ընկերությունում կայուն աշխատատեղ ունի վեց հոգի: Ծրագրի շրջանակներում Լևան Մախարոբլիձեն անցել է ուսուցում բիզնեսի վարման մասին, մշակել է բիզնես առաջարկ և ստացել 2000 եվրո դրամաշնորհի տեսքով: Այս գումարով նա ձեռք է բերել խառատի հաստոց, եռակցման սարքեր և այլն: «Նոր գործիքների օգնությամբ իմ աշխատանքը թեթևացավ, և ես խնայում եմ ժամանակը: Խառատի հաստոցը բազմաֆունկցիոնալ է, և արտադրողականությունը աճել է մոտ 20%-ով», - ասում է նա: Ընկերությունում աշխատում է ևս երկու մարդ, և նրանց ամսական վճարը կազմում է 500-600 լարի:

Մեջդրիսխևի գյուղը (Գորի) գտնվում է Հարավային Օսեթիայի վարչական սահմանի մոտ: Լարի Մեզվրիշվիլին գյուղում ստեղծել է «Ավտոմեքենաների շրջիկ արհեստանոց» սոցիալական ձեռնարկությունը 2016 թ.-ին: Նա ակտիվորեն ներգրավված էր ծրագրի շրջանակներում նախատեսվող դասընթացներում, հաջողությամբ անցավ մրցույթը և ստացավ 16.000 ԱՄՆ դոլարի ֆինանսական աջակցություն որպես դրամաշնորհ: «Ես երազում էի դա անել, բայց առանց կողմնակի օգնության դրա համար երկար տարիներ կպահանջվեին: Իսկ այսպես իմ

երազանքը իրականություն դարձավ մեկ տարում», - նշում է նա: Լարի Մեզվրիշվիլին ձեռք է բերել ավտոփոխադրամիջոց և ավտովերանորոգման համար անհրաժեշտ սարքավորումներ: Նա նաև աշխատանքի է ընդունել չորս երիտասարդների, որոնք ամեն ամիս ստանում են 700 լարի աշխատավարձ: Այսօր ավտոտեխսպասարկման արհեստանոցը հաջողությամբ կատարում է իր սոցիալական առաքելությունը և անվճար օգնում է գյուղի և սահմանամերձ գյուղերի ՆՏԱ բնակիչներին:

ՆՏԱ-ՆԵՐԻ և ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՏՈՒԺԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՋԱՏԱԳՈՎՈՒԹՅՈՒՆ և ԽԹԱՆՈՒՄ

Այս ուղղությամբ իրականացվող ծրագրերի նպատակն է նպաստել ՆՏԱ-ների և համայնքի ներկայացուցիչների միջև երկխոսությանը իրենց կյանքի վրա ազդող հարցերի շուրջ: Տարբեր միջոցառումներ են իրականացվում՝ ՆՏԱ-ների կարիքների ուսումնասիրություն և վերլուծություն, բնակարանների սեփականատերերի միջև համայնատիրությունների ստեղծում/զարգացում, շահերի պաշտպանության պլանավորում/իրականացում, դասընթացներ/խորհրդատվություններ:

Անհատական օրինակներ

Թեոնա Բուկիան ապրում է Բորժոմիում, ՆՏԱ-ների համար վերականգնված մասնաշենքում: «Աբխազետի» կենտրոնի օգնությամբ 2015թ.-ին ստեղծված սեփականատերերի միությունը ընտրեց նրան նախագահի պաշտոնում մեկ տարի ժամկետով: «Որպես նախագահ ես արդեն կարողացել եմ լուծել մեր խնդիրներից մեկը: Բնակարանները մեզ տրամադրելուց վեց ամիս անց՝ նոր արված վերանորոգումը սկսեց փչանալ: Ուսուցումներից մեկի ընթացքում ստացված տեղեկատվության հիման վրա ես հեշտությամբ կարողացա կապ հաստատել շինարարական ընկերության հետ, և արդյունքում նրանք բոլոր խնդիրները շտկեցին», - ասում է նա: Համատիրությունն ունի ընդհանուր հիմնադրամ, որտեղ կուտակվում են սպասարկման և շահագործման աշխատանքային խմբին նվիրաբերված

աշխատանքային գործիքների վարձակալությունից գոյացած դրամական միջոցները և անդամավճարները: Այս ֆինանսական միջոցների հաշվին համատիրությունը կատարել է անհրաժեշտ վերանորոգման աշխատանքները:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԵՎ ԱՍՈՑԻԱՑԻԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ

«Աբխազետի» կենտրոնը մասնակցում է պետական երեք հանձնաժողովների աշխատանքներին, ինչպես նաև հինգ ասոցիացիաների ակտիվ անդամ է: ՆՏԱ-ների հարցերով զբաղվող կազմակերպությունների կողմից «Աբխազետի»-ի կենտրոնը ընտրվել է ՆՏԱ-ների պետական ռազմավարության վերահսկող խորհրդի կազմում և ակտիվորեն ներգրավված է ՆՏԱ-ների և փախստականների համար պետական ռազմավարության և ռազմավարության գործողությունների ծրագրի մշակման գործընթացում: Կազմակերպությունը լոբբինգ է իրականացնում և զբաղվում է այն խնդիրներով, որոնք ուղղված են ՆՏԱ-ների սոցիալական և տնտեսական ինտեգրմանը:

Անցյալ և ընթացիկ տարիներին կազմակերպությունն ակտիվորեն ներգրավված է եղել ՆՏԱ-ներին հատկացվող նպաստի հարցի քննարկմանը: Գրավյալ տարածքներից փախստականների, ներքին տեղահանված անձանց և վերաբնակեցման հարցերի նախարարությունը պատրաստեց փաստաթուղթ («Նախապատրաստական փաստաթուղթ. ՆՏԱ-ների համար նպաստի բարեփոխման վերաբերյալ») և սկսեց աշխատել ՆՏԱ-ների համար ամսական նպաստի հատկացումը վերանայելու ուղղությամբ:

Կազմակերպությունն իր հերթին 2017թ. օգոստոսին Շիդա Քարթլի շրջանում իրականացրեց ուսումնասիրություն՝ «ՆՏԱ համայնքի վերաբերմունքը ՆՏԱ նպաստների բարեփոխման հավանական այլընտրանքների նկատմամբ» և բոլոր հետաքրքրված անձանց ներկայացրեց այս զգայուն հարցի շուրջ ՆՏԱ համայնքի տեսլականը: «Աբխազետի» կենտրոնը կազմակերպում կամ մասնակցում է տարբեր հանդիպումների, որտեղ քննարկվում է ՆՏԱ համայնքի իրավունքների

պաշտպանությունը նպաստի բարեփոխման համատեքստում: Օրինակ, Բորժոմիում անցկացվեց երկօրյա ցանցային հանդիպում, որին ներկա էին տեղական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, ովքեր զբաղվում էին ՆՏԱ-ների հարցերով: «Աբխազետի» կենտրոնի նախաձեռնությամբ Հանրային պաշտպանի գրասենյակում տեղի ունեցավ հանդիպում և հասարակական կազմակերպությունների հատվածը Հանրային պաշտպանին ներկայացրեց ՆՏԱ-ների հարցերով զբաղվող նախարարության կողմից կազմված փաստաթղթի վերաբերյալ իր կարծիքը:

«Աբխազետի» կենտրոնը գտնվում է Թբիլիսիում և իր գործունեությամբ բարեգործական և մարդասիրական կենտրոն է, այն 22 տարի աշխատում է հակամարտությունից տուժածների հետ: Ցանկանում եմ առանձնացնել իրենց կողմից ներկայացված «3P» մոդելը, որը ՆՏԱ-ների հետ աշխատանքային մոտեցում է՝ Provision, Protection, Promotion (ապահովում, պաշտպանություն, առաջխաղացում): Այս մոտեցումներից յուրաքանչյուրը ունի նշանակալից դեր: Այսպիսով, առաջինն այն է, ինչը սկզբում ամենաանհրաժեշտն է հակամարտությունից տուժած ՆՏԱ-ներին, դա կենսապահովումն և առողջապահությունն է, երկրորդը՝ պաշտպանությունն ու գոյատևման միջոցներն են, իսկ վերջինը, երրորդը՝ զարգացմանը միտված առաջխաղացումն է»:

(Ծրագրի վրացի մասնակիցների հաշվետվություններից)

ՆՏԱ-ների և փախստականների ինտեգրման հայաստանյան փորձը

Հայաստանում ՆՏԱ-ների և փախստականների ինտեգրման իրավիճակի հակիրճ վերլուծություն

Ներգաղթյալների առաջին ներհոսքը Հայաստան տեղի ունեցավ Խորհրդային Միության փլուզումից անմիջապես հետո: Անկախ Հայաստանի և Ադրբեջանի միջև Լեռնային Ղարաբաղի զինված հակամարտությունը (1988–1994թթ.) հանգեցրեց նրան, որ փախստականների թիվը հասավ մոտ 360 հազարի: Երկրորդ խոշոր ներհոսքը սկսվեց իրաքյան պատերազմի արդյունքում (2003-2011թթ.), երբ Իրաքում բնակվող բավական մեծաքանակ էթնիկ հայերը ստիպված էին ապաստան փնտրել Հայաստանում: Եվս մի հոսք եղավ Սիրիայի (2011 թ.-ից սկսած) և Ուկրաինայի (2014 թ.-ից սկսած) հակամարտությունների արդյունքում: Հոսք էր նկատվում նաև այլ երկրներից։

Էթնիկ հայերը լիակատար աջակցություն ունեն կառավարության կողմից, չնայած պետական ռեսուրսների սահմանափակությանը։

Ազգությամբ ոչ հայ ապաստան հայցողները և փախստականները հանդիպում են մի շարք խնդիրների ապաստանի հայցման ընթացակարգի ժամանակ: Ապաստան հայցողները և այլ տեղահանված անձինք կարող են հանդիպել բազմաթիվ ենթադրյալ խնդիրների՝ կապված բնակարանի, առողջապահության, կրթության, սոցիալական նպաստների, ինտեգրման, ինչպես նաև լեզվական խոչընդոտների և այլնի հետ: Պաշտոնյաների կողմից իրենց պարտականությունների թերակատարումը կարող է էլ ավելի բարդացնել իրավիճակը, ավելին, հանգեցնել միջազգային կոնվենցիաների և մարդասիրական իրավունքի սկզբունքների չպահպանման:

Փախստականներ Ադրբեջանից:

360 հազար փախստականներից, որոնք Հայաստան էին փախել Ադրբեջանից 1988-1992թթ. ընթացքում՝ Լեռնային

Ղարաբաղի հակամարտության հետ կապված, շատերը դադարել են փախստական լինել և հասել են հարցի երկարաժամկետ լուծման: Փախստականների թիվը մոտ 1500 է:

Փախստականներ Իրաքից:

Ըստ կառավարության տվյալների՝ Իրաքի փախստականները 1019 են, որոնք հիմնականում էթնիկ հայկական ծագում ունեն:

Ապաստարան հայցողները, փախստականները և անձինք Սիրիայի փախստականների կարգավիճակում:

ՀՀ-ի կառավարության տվյալների համաձայն 2012-2017թթ. մոտ 20000 սիրիահայեր ստացել են ՀՀ քաղաքացիություն, 2500՝ կացության իրավունք: Փախստականների մեծ մասի համար տեղական հասարակությունում ինտեգրումը նախընտրելի լուծումն է, քանի որ հայրենադարձության հեռանկարները անորոշ են: Հայաստանի կառավարությունը և հասարակությունը գրկաբաց ընդունեցին սիրիահայերին: Կառավարությունը հակված է ընդունել նրանց և արագ տրամադրել անվճար մուտքի արտոնագրեր, կացության թույլտվություններ և քաղաքացիություն, պետական բյուջեից հատկացնել միջոցներ՝ առողջապահական (մասնակի) ծառայությունների և կրթական հնարավորությունների տրամադրման նպատակով: Միջազգային կազմակերպությունները և տեղական հասարակական կազմակերպությունները լրացնում են կառավարության՝ բնակարանով ապահովման և եկամուտներ ստանալուն ուղղված աջակցության ջանքերը: Այնուամենայնիվ, Հայաստանում սիրիահայերի առջև ծառացած երկու հիմնական խնդիրները բնակարանային ապահովումն ու աշխատատեղերն են:

Ապաստան հայցողներ, փախստականներ և անձինք, որոնք ունեն Լեռնային Ղարաբաղից փախստականների կարգավիճակին նման կարգավիճակ:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության լարվածությունը

2016 թ. ապրիլի սկզբին հանգեցրեց քաղաքացիական զոհերի և շփման գծի մոտակայքում գտնվող մի քանի գյուղերի զգալի ոչնչացման: Լարվածության ժամանակ իրականացվեցին վայրագություններ քաղաքացիների հանդեպ, ովքեր գտնվում էին շփման գծից այն կողմ, օգտագործվել են անօդաչու թռչող սարքեր, իսկ Ադրբեջանի՝ շփման գծից ներս ընկած, խիտ բնակեցված շրջաններին սպառնում էր ռմբակոծություն: Այս բոլոր գործողությունների հետևանքով Հայաստան տեղափոխվեց ավելի քան 2000 մարդ: Տեղափոխվածների մոտ երեք քառորդը վերադարձավ Լեռնային Ղարաբաղ 2016թ. նոյեմբերին: Թալիշից և հակամարտությունից շատ տուժած և շփման գծին մոտ գտնվող այլ տարածքներից փախածների մեծ մասը մնացել են: Տեղահանված անձանց համակազմը զգալիորեն չի փոխվել: Այն բաղկացած է հիմնականում կանանցից, երեխաներից և տարեցներից: Այնուամենայնիվ, տարեցների տոկոսը աճել է (ինչը վկայում է այն մասին, որ երիտասարդներն ավելի հակված են վերադառնալ), իսկ կանայք շատ ավելի հաճախ են տեղափոխվում՝ Լեռնային Ղարաբաղում իրենց ամուսիններին և Հայաստանում գտնվող ընտանիքի անդամներին հոգ տանելու համար: Այն ընտանիքները, որոնք դեռ Հայաստանում են գտնվում, ստանում են ֆինանսական օգնություն և ընդգրկված են ՄԱԿ-ի ՓԳՀ-ի օժանդակության տրամադրման կանոնավոր կերպով իրականացվող ծրագրերում:

Տարիներ շարունակ Հայաստանը առանձին ընթացակարգով փախստականի կարգավիճակ է տրվել Իրանից, Լիբանանից, Վրաստանից, Կոտ դ'Իվուարից, Կամերունից, Նիգերիայից, Թուրքիայից և մի շարք այլ երկրներից ժամանած մոտ 70 հոգու: 2016 թ.-ի հունիսի 30-ի դրությամբ 54 ապաստան հայցողներ եղել են Իրաքից, Իրանից, Լիբանանից և Կոնգոյի Հանրապետությունից, Գվինեայից, Թուրքիայից, Սիրիայից և Ուկրաինայից:

Լեռնային Ղարաբաղի շուրջ ծավալվող զինված հակամարտությունը, որում վերջին անգամ ակտիվ մարտական գործողություններ իրականացվել են 2016 թ.-ին, կրկին ու կրկին ստիպում է հասարակական կազմակերպություններին զբաղվել փախստականների ինտեգրմամբ: ՀԿ-ների և ամբողջ հայ հասարակության առջև ծառացած մեկ այլ լուրջ խնդիր է երիտասարդ և հմտություններ ունեցող հայերի մշտական արտագաղթը՝ կապված տնտեսական դժվար իրավիճակի հետ:

Դիանա Միրիբյան

ծրագրի համակարգող (Հայաստան)

Ուսուցողական այց Հայաստան

Ուկրաինայի, Հայաստանի, Վրաստանի և Հյուսիսային Կովկասի ակտիվիստները 2017թ. սեպտեմբերի 24-ից հոկտեմբերի 1-ը մասնակցել են Հայաստան կատարած ուսուցողական այցին, որը կազմակերպվել էր մեր ծրագրի շրջանակներում: Քանի որ Հայաստանը նրանց այցելած երրորդ երկիրն էր, ավելի շատ էին համեմատական վերլուծությունների և տարբեր երկրների ծրագրային աշխատանքների համանմանությունների և տարբերությունների քննարկման հնարավորությունները:

Մեկ շաբաթվա ընթացքում մասնակիցները այցելել են Հայաստանի Երևան, Ճամբարակ, Էջմիածին և Գյումրի քաղաքներում գործող, ինտեգրման հարցերով զբաղվող հիմնական դերակատարներին: Այս բոլոր կազմակերպությունները ներկայում աշխատում են ՆՏԱ-ների և փախստականների ինտեգրման, Հայաստանում միգրացիոն գործընթացների և հակամարտության կարգավորման հարցերի շուրջ: Մասնավորապես միջազգային գործընկերների հետ համատեղ նրանք ինտեգրման ծրագիր են իրականացնում այն փախստականների համար, որոնք փախել էին Լեռնային Ղարաբաղում 2016թ. ռազմական գործողությունների պատճառով, ինչպես նաև բազմաթիվ սիրիահայերի համար, որոնք փախչում են Սիրիայից և հիմնականում ծնունդով Հալեպից են:

Այս թեմաները, ինչպես նաև այս խնդիրներին արձագանքման տարբեր ռազմավարությունները քննարկվել են այցի ընթացքում հետևյալ 10 հայկական հասարակական կազմակերպությունների հետ՝ «Հայկական Կարիտաս» Երևանի ենթագրասենյակ, Հայաստանում Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման ազգային կենտրոն (Երևան), Սիրիահայերի միություն (Երևան), «Հալէպ» հայրենակցական բարեսիրական ՀԿ (Երևան), «Առաքելություն Հայաստան» հասարակական կազմակերպություն (Երևան), Արծվաշենի օկուպացված համայնք (Ճամբարակ), Սախարովի իրավունքների պաշտպանության կենտրոն (Գյումրի), «Էմիլի Արեգակ» բազմակի հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների կենտրոն (Գյումրի), «ԿԱՁԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամ (Գյումրի) և «Կլոր սեղան» հասարակական կազմակերպություն (Էջմիածին): Բացի այդ, ակտիվիստները փորձի և մասնագիտական կարծիքների փոխանակում իրականացրեցին Սփյուռքի նախարարությունում փոխնախարարի և աշխատակիցների ինչպես նաև ՄԱԿ-ի փախստականների հարցերով Գերագույն հանձնակատարի՝ հայաստանյան ներկայացուցիչների հետ:

Երևանում Սփյուռքի նախարարությունը ուսուցողական այցի մասնակիցներին տրամադրեց տեղեկություններ սիրիահայերի տնտեսական ինտեգրման պետական ծրագրերի մասին: Պետական ծրագրերի նպատակն է, մասնավորապես, փախստականներին օժանդակելը և փոքր ու միջին կազմակերպություններ հիմնելը, այդ մարդկանց մասնագիտական որակավորումն ու վերապատրաստումը, ինչպես նաև խրախուսել փախստական կանանց կողմից տան պայմաններում կատարվող աշխատանքը:

Հայաստանում ՄԱԿ-ի փախստականների հարցերով հանձնակատարի ներկայացուցիչը խոսեց Հայաստանում ինտեգրման իրենց ծրագրերի մասին և ներկայացրեց հայաստանյան հասարակական կազմակերպությունների միջոլորտային համագործակցության ուղղությամբ

համակարգման գործառույթը: ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ Քրիստոֆ Բիրվիրն ընդգծեց Հայաստանի և Ադրբեջանի ժողովուրդների միջև անհատական մակարդակում երկխոսության կարևորությունը, ինչպես նաև նախկինում գոյություն ունեցած միջանձնային հարաբերությունների վերադարձը՝ ապահովելու տարածաշրջանում խաղաղարար գործընթացը:

Ի վերջո, ուսուցողական այցի ավարտին մասնակիցներն ընտրեցին երեք կազմակերպություններ, որոնց փորձը հատկապես արժեքավոր և հետաքրքիր էին համարել՝ «ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամը, Հայաստանի փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման ազգային կենտրոնը, «Հալէպ» հայրենակցական բարեսիրական ՀԿ-ն:

«Շատ բաներ ինձ դուր եկան Հայաստանում. ինչպես է Սփյուռքի նախարարությունը հոգ տանում իր հայրենակիցների մասին, «ԿԱԶԱ» կազմակերպության աշխատանքը երիտասարդների հետ, սոցիալական ձեռնարկատիրության ներմուծումը, զբոսաշրջային փոխայցերը ու ծրագրերը, բոլոր կազմակերպությունների հետ համակարգումը, որոնք աշխատում են ՆՏԱ-ների և փախստականների հետ, դրանց արդյունավետ համագործակցությունը»:

(Ծրագրի ուկրաինացի մասնակիցների հաշվետվություններից)

«Սոցիալական ձեռնարկությունների փորձը շատ ավն է, նման բան մենք էլ ունենք, բայց այնտեղ [Հայաստանում] շատ ավելի հետաքրքիր է: Հատկապես կարևոր է, որ նրանք սովորեցնում են երիտասարդներին հուշանվերներ պատրաստելու արհեստները, ինչը կարևոր է զբոսաշրջության զարգացման համար: Հասարակ քարից գումար են ստեղծում, եկամուտ են վաստակում, զարգանում են ... Շատ բան կար, որ ինձ դուր եկավ. ՆՏԱ-ների, փախստականների և տեղաբնակ համայնքների ընտանիքների համատեղ գործարարությունը, ներգրավումը տեղական համայնքի բոլոր կառույցներում և ծրագրերում, ՆՏԱ-ների և փախստականների, հաշմանդամություն ունեցող անձանց և տարեցների սոցիալական ինտեգրումը, ցերեկային կենտրոնները, երիտասարդների կրթության և կամավորների զարգացման վրա կենտրոնացումը, սկսնակների և հաջողակ գործարարների համար ներդրումային գոտու ստեղծումը, Կանանց գործարար խորհուրդը...»

(Ծրագրի ուկրաինացի մասնակիցների հաշվետվություններից)

ՆՏԱ-ների և փախստականների ինտեգրման հաջողված փորձ Հայաստանում

ԿԱԶԱ շվեցարական մարդասիրական հիմնադրամ

Հայաստան, ք. Գյումրի,
Շահումյան փ. 69
+374 312 5 65 28; 10 58 40 32
kasa.gumri@kasa.am, kasaam@kasa.am
www.kasa.am
Տնօրեն՝ Անահիտ Մինասյան

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Բաց և անկախ հասարակությունում կարևորել այնպիսի քաղաքացիների, ովքեր ստանձնել են կարևոր առաքելություն իրականացնելու կարևոր փոփոխություններ հարափոփոխ ժամանակակից աշխարհում:

ԱՐԺԵՔՆԵՐԸ

- նպաստել անձի զարգացմանը,
- ուղեկցել նրան մասնագիտական և քաղաքացիական կրթության ոլորտում,
- նպաստել համերաշխ տնտեսության զարգացմանը՝ որպես կոլեկտիվիզմի և անհատապաշտության երրորդ ճանապարհ:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- օգնություն կարիքավորներին,

- կրթության՝ գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ձեռքբերման խրախուսում,
- քաղաքացիական և բնապահպանական իրազեկության և համերաշխության ընդլայնում,
- կանանց առաջընթացի խթանում,
- միջմշակութային երկխոսության խրախուսում,
- ֆրանսիական, ֆրանկոֆոն մշակույթի և արժեքների տարածում,
- անհատական և այլընտրանքային զբոսաշրջություն, որն անմիջականորեն կապված է իրականության և բնակչության վիճակի հետ:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- մարդասիրական օգնություն,
- շինարարություն,
- կրթություն
- գյուղատնտեսություն,
- զբոսաշրջություն

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

- խրախուսել ճկուն մոտեցումներ, որոնք խթանում են նախաձեռնողականությունը,
- ստեղծել կառույցներ, որոնք համատեղում են աստիճանակարգությունը և համատեղ կառավարումը,
- հավատարմության և ստեղծագործականության ճկուն ինտեգրումը, նորարարության աջակցումը և խթանումը:

Ներգաղթողների ինտեգրումը իրականացվում է ՄԱԿ-ի փախստականների գերագույն հանձնակատարի գրասենյակի հետ երեք ոլորտներում.

- սոցիալական –տեղահանված ընտանիքներին ներգրավման գործողություններին սատարում տեղական կամավորների միջոցով,
- մշակութային – «Հատուկ հանրակացարան» ՊՈԱԿ-ում մշակութային միջոցառումներ,
- տնտեսական - վերապատրաստում համապատասխան գործընկերների հետ:

ՀԱՋՈՂՎԱԾ ՓՈՐՁ

Կողք-կողքի ապրելն բավական չէ միմյանց ճանաչելու համար: Այս գաղափարը հիմնականում ճշմարտացիորեն է պատկերում սիրիական ճգնաժամի արդյունքում սիրիահայերի և տեղացի հայերի միջև հարաբերությունները, քանի որ երկու խմբերն էլ բավականին մեծ են և հազվադեպ է, որ այս կամ այն խմբի անդամները ստիպված են լինում դուրս գալ իրենց համար ուրվագծված հարմարավետ շրջանակներից: Պարտադիր չէ, որ իսկապես միմյանց ընդունեն:

Երիտասարդների հետ աշխատանքը

Այս վերջին դիտարկումը և իրավիճակը փոխելու հնարավորության գիտակցումը հանգեցրեցին Երևանում գտնվող «Հալեպ» անդրազգային ակումբի նոր երիտասարդական նախաձեռնությանը՝ ուղղված սիրիահայերի և տեղացի հայերի միջև երկխոսության իրականացմանը: Սա թույլ տվեց երիտասարդ սիրիահայերին, հիմնականում «YMCA Armenia» ակումբի անդամներին, հանդիպել և բավարարել տեղացի հայերի կարիքներն ու ցանկությունները, մտածել դրանց ձևաչափերի մասին: Այսպիսով, ծրագիրը ներկայացրեց տարբեր բացահայտումներ՝ քննարկումներ, կորպորատիվ երեկոներ, ֆիլմերի ցուցադրություններ, տոներ, քարոզարշավներ, թեմատիկ միջոցառումներ և այլն: Ծրագրի թիմը

բաղկացած էր 20 հիմնական մասնակիցներից (10 սիրիահայ և 10 տեղացի):

Տեղացի և սիրիահայ երիտասարդները հաճախ շփվում են միմյանց հետ, հատկապես նույն դպրոցներում: Բայց արդյո՞ք նրանք իսկապես ճանաչում են միմյանց: Երիտասարդների ինտեգրման ծրագրի մեր դիտարկումները ցույց տվեցին, որ միջնակարգ կրթությունը չի նպաստում այս երկու խմբերի անչափահասների միջև տեղեկատվության փոխանակմանը: Ի դեպ, ճամբարները շատ սիրված են սիրիահայերի շրջանում:

«Տնտեսական հնարավորությունների շաբաթ»

Փ«ԿԱՁԱ» հիմնադրամը մասնակցել է սիրիահայերի տնտեսական համաժողովի «Տնտեսական հնարավորությունների շաբաթ»-ին:

Գերմանիայի միջազգային համագործակցության գործակալությունը (GIZ) 2015 թ.-ին մեկնարկեց «Սիրիահայերի տնտեսական ինտեգրումը Հայաստանում» ծրագրի իրականացումը, որի շրջանակներում մայիսի 19-22 Երևանում տեղի ունեցավ «Տնտեսական հնարավորությունների շաբաթ» համաժողովը: Նա համախմբեց Հայաստանում տնտեսական գործունեությամբ զբաղվող սիրիահայերին, ինչպես նաև

սիրիահայեր վերաբնակիչներին, կառավարության և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին, որոնք աջակցում են սեփական բիզնեսը ստեղծել կամ աշխատանք գտնել ձգտող թիրախային խմբին:

Միջազգային կազմակերպություններ էի նաև ԿԱՁԱ հիմնադրամը, որը նույնպես մասնակցեց ֆորումին: Համաժողովը, դասընթացները, սիրիահայերի արտադրանքի և ծառայությունների և ցուցահանդեսները թույլ են տալիս ֆորումի անդամ սիրիահայերին ստեղծել նոր կապեր, ձևավորել և ամրապնդել հարաբերությունները, ծանոթանալ տեղահանված սիրիահայերի համար ստեղծված հնարավորություններին և աջակցության ծրագրերին:

Համագործակցություն ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հետ

Որպես ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գործընկեր «ԿԱՁԱ» հիմնադրամը նպաստում է ոչ միայն տեղահանված անձանց սոցիալ-մշակութային ինտեգրմանը, այլև մասնագիտական կրթության միջոցով տեղահանված սիրիահայերի կենսապայմանների բարելավմանը: Այս ոլորտում նրանց փորձը և գաղափարները դառնում են հիմնադրամի պատասխանատվության առարկան, որի իրականացմանը նրանք պետք է ձգտեն փախստականների կրթության և կենսապայմանների բարելավման ծրագրի, համաժողովի և վերապատրաստման դասընթացների ժամանակ պատասխանատու թիմի, ինչպես նաև ցուցահանդեսներին այցելուների մասնակցության միջոցով:

«Ես շատ տպավորված էի ԿԱՉԱ շվեյցարական կազմակերպությամբ, որն իրականացրել է 70 ծրագիր հինգ ոլորտներում՝ աշխատանք դպրոցների հետ, երիտասարդների մասնագիտական հմտությունների զարգացում, լեզուների ուսուցում, խոցելի ընտանիքների հետ աշխատանք, ՆՏԱ-ների հետ աշխատելու կամավորական ծրագիր, հոգեբանական աջակցություն, վերարտադրողական առողջություն, զբոսաշրջության զարգացում:»

(Ծրագրի վրացի մասնակիցների հաշվետվություններից)

Հայաստանի փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման ազգային կենտրոն

0010, Հայաստան, ք. Երևան,
Միհեր Մկրտչյան փ. 5ա
+3 741 254 16 48,
56 37 14, 58 32 61, +374 10 23 71 02
+3 741 254 16 42
info@smednc.am
smednc.am/en

Գործադիր տնօրեն՝ Լևոն Մնացականյան

Հայաստանի փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման ազգային կենտրոնը ստեղծվել է 2002 թ. Փոքր և միջին բիզնեսի աջակցության ծրագրի (ՓՄՁ) ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ և հանդիսանում է Հայաստանում պետական քաղաքականության և ՓՄՁ հատվածում զարգացման ծրագրեր իրականացնող հիմնական հաստատությունը:

ՀՀ ՓՄՁ ԶԱԿ-ը իր գործունեությունն է ծավալում Երևանում տեղակայված կենտրոնական գրասենյակի, ինչպես նաև հանրապետության բոլոր մարզերում տեղակայված մասնաճյուղերի և ներկայացուցչությունների միջոցով: Արդյունքում, հազարավոր փոքր և միջին ձեռնարկություններ հնարավորություն ունեն նախաձեռնելու, բարելավելու և ընդլայնելու իրենց բիզնեսը:

Փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցությամբ իրականացվող ծրագրերն ուղղված են մասնավորապես ներքին և արտաքին շուկաներում ՓՄՁ-ների արդյունավետության և մրցունակության բարձրացմանը, ՓՄՁ-ների համար գործարար ծառայությունների մատչելիության ապահովմանը, ինչպես նաև ՓՄՁ-ների համար ֆինանսավորման հնարավորությունների ընդլայնմանը, նորարարությունների խթանմանը և ՓՄՁ-ներում նոր տեխնոլոգիաների ներդրմանը, նոր ՓՄՁ-ների աջակցությանը, ՓՄՁ-ների միջազգայնացմանը՝ նպաստելով պետական և մասնավոր հատվածների միջև երկխոսությանը:

Փոքր և միջին բիզնեսի խթանման ամենամյա ծրագրի շրջանակներում ՀՀ ՓՄՁ ԶԱԿ-ն իրականացնում է տեխնիկական և ֆինանսական աջակցության ծրագրեր հետևյալ հիմնական ուղղություններով՝ տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն, աջակցություն ՓՄՁ-ներին, ձեռնարկատիրական աջակցություն սկսնակ գործարարների համար, տեղական տնտեսական զարգացում, արդյունաբերական ձեռնարկություններին ցուցաբերվող աջակցություն, կանանց ձեռներեցությանն ուղղված աջակցություն, գոյություն ունեցող ՓՄՁ-ների համար վարկերի տրամադրում, այդ թվում՝ սկսնակների համար վարկային երաշխիքների, ֆինանսական աջակցության տրամադրում՝ գործարար նախաձեռնությունների համար:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում փոքր և միջին բիզնեսի զարգացման ուղենիշ լինել՝ ցուցաբերելով համապարփակ և նպատակային աջակցություն:

ԱՐԺԵՔՆԵՐ

- թափանցիկություն
- հասանելիություն

- արհեստավարժություն,
- նախաձեռնողականություն
- թիմային աշխատանք:

ՀԱՋՈՂՎԱԾ ՓՈՐՁ

2012 թ.-ից սկսած՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը բազմաբնույթ և բազմակողմանի աջակցություն է ցուցաբերում Սիրիայի պատերազմից փախած այն հայրենակիցներին, որոնք ցանկանում են ստեղծել նոր ձեռնարկություններ Հայաստանում: Սիրիահայ գործարարների մուտքը հայաստանյան շուկա նոր շունչ հաղորդեց գործարար միջավայրին: Սիրիայից մեր հայրենակիցները իրենց հայրենիք ներմուծեցին նոր գործարար մշակույթ և հիմնեցին նոր ավանդույթներ:

Ի աջակցություն սիրիահայ գործարարների Հայաստանում իրենց սեփական բիզնեսն սկսելու՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը, համագործակցելով ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հետ, իրականացրել է գործունեություն տարատեսակ ուղղություններով, օրինակ՝ տեղեկատվական, կրթական և խորհրդատվական:

Հայաստանում բիզնես սկսելու համար սիրիահայերը մասնակցեցին «Ձեռնարկատիրական աջակցություն սկսնակ բիզնեսին» ծրագրին: Ծրագրին մասնակցելով՝ սկսնակ գործարարները հմտություններ են ձեռք բերել բիզնես պլանավորման, մարքեթինգի, կառավարման, արտադրության և ֆինանսների պլանավորման, ինչպես նաև բիզնեսի հմտությունների վերաբերյալ: Փորձառու մասնագետները խորհրդատվական աջակցություն և ուղղորդում են ստացել սեփական բիզնես պլանների մշակման համար: Այն բիզնես ծրագրերին, որոնք լավագույնն են և առավել իրատեսական են, ֆինանսական աջակցություն են ստանում: Վարկ ստանալու համար անհրաժեշտ են երաշխիքներ հետևյալ պայմաններով.

- մաքսիմում հինգ մլն. դրամ,
- տարեկան 4% տոկոսադրույք,
- վարկի մարման առավելագույն ժամկետ՝ 5 տարի,
- երաշխիքը տրամադրվում է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ- ի կողմից (100%):

Աջակցություն ստացող շահառուները հիմնականում զբաղվում են ավտոմեքենաների, ոսկերչական իրերի, դերձակության, հաստոցների, սպասարկման և այլ տեսակի բիզնեսներով, որոնց 80%-ը գտնվում է Երևանում, իսկ մի մասը՝ Հայաստանի մարզերում:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ, ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Պարբերաբար անցկացվում են այլ տեղեկատվական, կրթական և խորհրդատվական միջոցառումներ, ինչպիսիք են ՝

- տեղական և միջազգային բիզնես կազմակերպությունների հետ հանդիպումներ (B2B) այն հայ և սիրիահայ գործարարների մասնակցությամբ, որոնք զբաղվում են թեթև արդյունաբերությամբ, պլաստիկի արտադրությամբ, բեռնափոխադրմամբ, ավտոսպասարկմամբ, սննդի կազմակերպմամբ և այլն,
- Հայաստանի ազատ տնտեսական գոտիներում («Մարս» և «Մերիդիան») գործունեության հնարավորությունների հետ ծանոթանալու նպատակով ուսուցողական և խորհրդակցական հանդիպումներ,
- Հայաստանի Հանրապետության հարկային և մաքսային օրենսդրության և նրանց փոփոխությունների վերաբերյալ ուսուցողական և տեղեկատվական սեմինարներ,
- սիրիահայ գործարարների համար վերապատրաստման սեմինարներ, որտեղ կքննարկվեն և կլուծվեն Հայաստանում բիզնես գործունեության արդյունքում առաջացած խնդիրների, ինչպես նաև իրացման շուկայի և անշարժ

գույքի (վաճառք/վարձույթ), հումքի և սարքավորումների ձեռքբերման/ներմուծման համար,

- պարբերաբար կազմակերպված դասընթացներ սիրիահայ գործարարների և փախստականների համար, որոնց ընթացքում մասնակիցներին ներկայացվում են տեղեկություններ մարքեթինգի, կառավարման, բիզնես պլանավորման և այլ հարցերի մասին,
- պետական գնումների ընթացակարգերի և ՓՄՁ-ների համար հասարակայնության հետ կապերի մասին դասընթացներ, որոնց ժամանակ մասնակիցներին ներկայացվեցին գնումների ընթացակարգերի համակարգման և կարգավորման օրենսդրական նորմերը, ինչպես նաև հանրության հետ կապերի (PR) հայեցակարգը և գործառույթները, ապրանքների և ծառայությունների հանրահռչակումը և գովազդումը PR գործիքների օգնությամբ,
- «Սննդի անվտանգության խնդիրները» վերապատրաստման/գործնական ուսումնական հանդիպում, որի ընթացքում մասնակիցներին ներկայացվեց սննդամթերքի անվտանգության ժամանակակից համակարգը (GMP/GHP, HACCP, Serve Safe):

«Նրանք աշխատում են սկսնակ գործարարների, բիզնեսմենների հետ: Աշխատանքի հաջողությունը տարածաշրջանային ծրագրերն են: Կազմակերպությունը իրականացրել է 10 տարածաշրջանային ծրագիր. այստեղ հետաքրքիր շատ բան կար՝ գործարարներին աջակցող ցուցահանդես, կրթական տեղեկատվական գործունեություն, փախստականների ինտեգրում բիզնեսի զարգացման միջոցով»:

(Ծրագրի ռուս մասնակիցների հաշվետվություններից)

jica

«Հալէպ» հայրենակցական բարեսիրական ՀԿ

Հայաստան, ք. Երևան,
Հյուսիսային պողոտա 11
+374 010 54 53 69
info@aleppo-ngo.org
aleppo-ngo.org
fb.com/aleppo.ngo1

Ներկայացուցիչ՝ Անի Բալխյան

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Հալէպ» հայրենակցական բարեսիրական հասարակական ոչ առևտրային կազմակերպությունը հիմնադրվել է և գրանցվել 2013թ. Հայաստանում՝ սիրիահայ կանանց միության կողմից, որը երկար ժամանակ արհմիութենական գործունեություն էր իրականացնում Սիրիայում՝ Անի Բալխյանի ղեկավարությամբ:

Կազմակերպությունը, որի գործունեության հիմքում բարեգործությունն է, սիրիական հակամարտության արդյունքում մարդասիրական օգնություն է տրամադրում այն սիրիահայերին, որոնք ապաստան են փնտրում Հայաստանում, մշակում և իրականացնում է երկարաժամկետ ծրագրեր, նպաստում սոցիալ-մշակութային, հոգևոր, ֆիզիկական, կրթական և գիտական զարգացմանը:

Ներկայում սիրիահայերի մոտ 1850 կարիքավոր ընտանիքներ (6100-ից ավելի սիրիահայ) գրանցված են «Հալէպ»-ում և համարվում են կազմակերպության շահառուներ:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

«Հալէպ» ՀԲՀԿ-ն աշխատակիցների և շատ կամավորների համախմբված ջանքերի, ինչպես նաև հովանավորների ու գործընկերների հավատի և կենսական աջակցության շնորհիվ՝

- տրամադրում է մարդասիրական օգնություն մոտ 6100 սիրիահայերի,
- տրամադրում է ֆինանսական աջակցություն սիրիահայ կարիքավոր ընտանիքներին՝ կեցության ծախսերը հոգալու համար,
- տրամադրում է բնակարաններ կարիքավոր սիրիահայ ընտանիքներին,
- ապահովում է միակողմանի ավիատոմսով այն կարիքավոր սիրիահայերին, ովքեր դիմել են «Հալէպ» Հայաստան տեղափոխվելու համար,
- հնարավորություն է տալիս ամենօրյա, անվճար, ներառական կրթություն հաշմանդամ սիրիահայերի համար,
- իրականացնում է տնտեսական և սոցիալական զարգացման ծրագրեր,ինչպես նաև աշխատատեղեր է ստեղծում խոցելի սիրիահայերի, մասնավորապես՝ կանանց և հաշմանդամների համար,
- ապահովում է անվճար սոցիալական և հոգեբանական աջակցություն հարյուրավոր սիրիահայերի համար,
- տրամադրում է խորհրդատվություն՝ նպաստելով սիրիահայերի ներգրավվածությանը քաղաքացիական կյանքում,
- կազմակերպում է դասընթացներ և դասեր սիրիահայ երեխաների, դեռահասների և երիտասարդների համար:

ՀԱՋՈՂՎԱԾ ՓՈՐՁ

2015թ. «Հալէպ»-ը սոցիալ-հոգեբանական աջակցություն է ցույց տալիս նրանց, ովքեր սիրիական հակամարտության արդյունքում կորցրել են հարազատներին և կրել նյութական վնասներ:

Հասկանալով, որ մարդասիրական օգնության ամենակարևոր կողմերը սոցիալ-հոգեբանական բաղադրիչներն են, «Հալէպը» աջակցություն է ցուցաբերում դժվար վիճակում գտնվող, հակամարտությունը վերապրածների հոգևոր և բարոյական հատկությունների պահպանման համար՝ ապահովելով նրանց սոցիալ-հոգեբանական բարեկեցությունը:

Ամեն ուրբաթ սիրիահայերին սոցիալական և հոգեբանական աջակցություն է տրվում «Հալէպ» ՀԲՀԿ-ի գրասենյակում: Հանդիպումների հիմնական նպատակն է պատերազմի ազդեցությունից տուժած բնակչության շրջանում դիմակայման, վերականգնման և հետագա զարգացման կարողությունների ճանաչումը: Հանդիպումներին մասնակցում են քահանաներ,

հոգեբաններ և տարբեր փորձագետներ:

2015թ.-ից առ այսօր այս ծրագրին մասնակցել է 300-ից ավելի սիրիահայ: Ծրագիրը նպաստել է սիրիական հակամարտության փորձառությունն անցած մարդկանց հոգեբանական վերականգնմանը և սոցիալական ինտեգրմանը: Այս ծրագրի օգնությամբ շատ սիրիահայեր կարողացան հեշտությամբ ինտեգրվել Հայաստանի քաղաքացիական կյանքին: Կիսելով մասնակիցների մտահոգությունները և արտահայտելով իրենց մտահոգությունները՝ ծրագրի մասնակիցները կարող են գտնել իրենց տեղը և դերը նոր հասարակության մեջ:

Օրինակ, մի կին, որը հակամարտության արդյունքում տեղափոխվել էր Սիրիայից Հայաստան, կարիք ուներ հոգեբանական վերականգման: «Հալէպ»-ի կողմից կազմակերպած սոցիալ-հոգեբանական հանդիպումներին մասնակցելով՝ նա կարողացավ ազատվել սոցիալական և հոգեբանական խնդիրներից, սկսեց ինքնահաստատման քայլեր անել քաղաքացիական կյանքում և հիմնեց փոքր բիզնես: Հիմա զբաղվում է պանրի արտադրությամբ և վաճառքով և ունի բազմաթիվ հաճախորդներ:

«Հալէպ»-ի սոցիալ-հոգեբանական աջակցության ծրագրի շրջանակներում մասնակիցները հանդիպում են տարբեր բանախոսների հետ, ձեռք են բերում նոր գիտելիքներ առողջ ապրելակերպի և մարդու կենսունակության մասին: Այսպիսի հանդիպումները նպաստում են սիրիական հակամարտության միջով անցած սիրիահայերի սոցիալ-մշակութային, հոգևոր, ֆիզիկական, կրթական և գիտական զարգացմանը:

«Հայաստանում կիրառվող բոլոր աշխատակարգերն ու ռազմավարությունները շատ լավ են աշխատում այսօր՝ ՆՏԱ-ների և ներգաղթյալների ներգրավման նպատակով: (...) Տպավորություն ստացանք, որ Հայաստանում ինքնաինտեգրումն ավելի լավ է ընթանում, քան մյուս երկրներում: Հայաստանում ավելի շատ դոնորներ կան, և հայկական սփյուռքը ֆինանսական և այլ օգնություն է տրամադրում ՆՏԱ-ների և միգրանտների խնդիրների լուծման համար»:

(Ծրագրի ռուս մասնակիցների հաշվետվությունից)

ՆՏԱ-ների և փախստականների ինտեգրման հյուսիսկովկասյան (ռուսաստանյան) փորձը

Հյուսիսային Կովկասում (Ռուսաստան) ՆՏԱ-ների և փախստականների ինտեգրման իրավիճակի համառոտ վերլուծություն

Չեչենիայի Հանրապետությունում 1995-1999թթ. երկու ռազմական գործողությունների արդյունքում իրենց տները լքած բնակիչները, ամենայն հավանականությամբ, դեռևս Ռուսաստանի Դաշնությունում տեղահանված քաղաքացիների մեծ մասն են կազմում։

Թվերը դեռևս տատանվում են ըստ տարբեր կազմակերպությունների հաշվարկների, ներքին տեղահանված անձանց քանակը Հյուսիսային Կովկասում կազմում է 150-ից 600 հազար մարդ։ Նրանց մոտ 70%-ը կանայք և երեխաներ են։ ՆՏԱ-ների մեծ մասի հոսքը տեղի ունեցավ 1999թ. աշնանը Չեչնիայում ռազմական գործողությունների երկրորդ ալիքի սկսելուց առաջ, մեծ թվով քաղաքացիներ ստիպված էին լքել իրենց տները և փնտրել ապաստան Չեչենական Հանրապետության հետ շփման գծում։

ՆՏԱ-ների մեծ մասին ընդունեցին Ինգուշեթիայում, տեղավորեցին վրանային ճամբարներում և այսպես կոչված կոմպակտ բնակավայրերում: Ներքին տեղահանվածների բնակարաններով, պարենով, բժշկական և ոչ պարենային օժանդակությամբ ապահովելու խնդիրների լուծման ջանքերին, դաշնային կենտրոնի և հանրապետական ղեկավարության հետ համաձայնեցմամբ, անհապաղ կերպով միացան նաև միջազգային մարդասիրական և ռուսական հասարակական կազմակերպությունները:

Հիմնականում աշխատանքն ընթացել է հետևյալ ուղղություններով՝

- Ինգուշեթիայում ՆՏԱ-ների հետ կապված իրավիճակի մշտադիտարկում,
- անհապաղ բուժօգնության տրամադրում ֆիզիկապես տուժածներին,
- տարատեսակ մարդասիրական օգնության տրամադրում,
- ՄԱԿ ՓԳՀ-ն[1] կազմակերպել է հասարակական ոչ առևտրային կազմակերպությունների և միջազգային կազմակերպությունների համակարգող խորհուրդ՝ համակարգելու աշխատանքները և պլանավորելու ՆՏԱ-ների կարիքների բավարարման հետ կապված գործողությունները,
- ՄԱԿ ՓԳՀ-ի իրականացնող գործընկերները անվճար իրավաբանական խորհրդատվության, իրավաբանական աջակցության կենտրոններ և սոցիալական աջակցման կենտրոններ են բացել նախ Ինգուշեթիայում, ապա՝Չեչնիայում,
- Չեչենական Հանրապետության ՆՏԱ-ների իրավիճակի մոնիթորինգի իրականացում և այլն:

Ավելի մանրամասն տեղեկություններ կարելի է գտնել «Հյուսիսային Կովկասում ՆՏԱ-ների վերադարձի և վերաինտեգրման խնդիրները» հոդվածում տպագրված 2009 թ. հունիսի 16-ին:[2]

Երբ 2004-2005թթ. սկսվեց վերադարձը Չեչենական Հանրապետություն, հասարակական կազմակերպություններն սկսեցին աջակցություն ցուցաբերել վերադարձողներին սոցիալ-տնտեսական վերաինտեգրման գործընթացում, քանի որ տարիներ շարունակ բացակայելուց հետո մարդիկ, վերադառնալով, իրենց զգում էին շփոթված, իրենց ապագայի, բնակարանի և աշխատանքի վերաբերյալ անորոշ պատկերացումներով: Հասարակական կազմակերպություններն օգնում էին նրանց անհրաժեշտ փաստաթղթերի վերականգման,

1 *ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ*

2 *http://www.kavkaz-uzel.eu/articles/141549/*

պետական աջակցություն ստանալու հարցում, օգնում երեխաներին ընդունվել մանկապարտեզ կամ դպրոց, կցագրվել պոլիկլինիկաներին, որպեսզի ստանան անհրաժեշտ բժշկական օգնություն: Նաև աջակցում էին փոքր բիզնեսի հիմնմանը կամ մասնագիտական կրթություն ստանալուն, որպեսզի այս մարդիկ սկսեին եկամուտ ստանալ:

Գտնվելով Հյուսիսային Կովկասում և տարածաշրջանում 15 տարուց ավելի գործունեության փորձառություն ունենալով՝ հասարակական կազմակերպություններն ունեն մարդասիրական իրավիճակների մասին հիանալի գիտելիքներ, ինչպես նաև պրոֆեսիոնալ դիտորդների և մասնագետների անձնակազմ՝ ՆՏԱ-ների ինտեգրման վերաբերյալ հետազոտություններ անցկացնելու համար: Այնուամենայնիվ, ներկայումս միայն մի քանի հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվում են կառավարությունների, միջազգային կազմակերպությունների և լայն հասարակության համար մարդասիրական և սոցիալ-տնտեսական իրավիճակի համակողմանի գնահատումներ: Այստեղ, օրինակ, «Վեստա» կազմակերպությունը, որն Ինգուշեթիայի Հանրապետությունում իր գործունեությունն է սկսել ծավալել առաջին փախստականների ժամանումից հետո, 1999 թվականից ի վեր, նախաձեռնել է ուսումնասիրություններ հետևյալ թեմաներով.

- Ինգուշեթիայի Հանրապետությունում, Դաղստանի Հանրապետությունում և Չեչենական Հանրապետությունում ներքին տեղահանված անձանց դրությունը,
- Ինգուշեթիայի Հանրապետությունում Հյուսիսային Օսեթիայի Հանրապետությունից – Ալանիայից հարկադիր տեղահանվածների դրությունը,
- քաղաքացիների վերադարձի պետական աջակցության միջոցառումների մատչելիությունը,
- խոցելի քաղաքացիների սոցիալ-տնտեսական դրությունը:

Հասարակական կազմակերպությունների այլ փորձառու մասնագետներ աշխատանքի են անցել պետական միգրացիոն ծառայությունում, Արտակարգ իրավիճակների նախարարությունում, վերականգնողական կենտրոններում:

Ներկայումս իրավիճակը կայունացել է, սակայն Խորհրդային Միության փլուզման նախօրեին բռնկված մի շարք ազգամիջյան հակամարտություններ դեռևս լուծված չեն, ինչը և նպաստում է լարվածության պահպանմանը:

Այսօր ինտեգրման աշխատանքի ոլորտում առկա խնդիրները հիմնականում կապված են միգրանտների, վերադարձած փախստականների և տեղահանվածների հետ: Ուզբեկստանից, Տաջիկստանից, Ադրբեջանից միգրանտների ներհոսքն աճում է, և դա իրական մարտահրավեր է Հյուսիսային Կովկասի հանրապետությունների համար, քանի որ հնարավոր չէ ադապտացիա և ինտեգրում ապահովել՝ ինտեգրման քաղաքականության սահմանափակումների պատճառով: Միգրանտները սոցիալական պաշտպանության իրավունք չունեն, չկա առողջապահական ծառայությունների և արդարադատության մատչելիություն, իրավական պաշտպանություն և հատկապես արժանապատիվ աշխատավարձի իրավունք: Ստացվում է, որ հասարակությունը մերժում է միգրանտներին, և նրանք, իրենց հերթին, չեն փորձում շփվել, պարփակվում են իրենց մեջ և չեն ինտեգրվում, մնում են իրենց սահմանափակ համայնքում: Ինստիտուցիոնալ քաղաքականությունը նպատակաուղղված չէ միգրանտների ադապտացիային, նրանց մշակութային ինքնության ընդունմանը և պահպանմանը, այն բարեփոխման կարիք ունի: Հասարակական կազմակերպությունների մասնագետները փորձում են այդ խնդիրները լուծել այնպիսի ծրագրերի միջոցով, որոնք ուղղված են միգրանտների ադապտացիային և փախստականների և ՆՏԱ-ների վերադարձի համար պայմանների ստեղծմանը: Ձեռնարկվում և անցկացվում են ռուսերենի և չեչեներենի ուսուցման ծրագրեր, մասնագիտական կողմնորոշմանը վերաբերող դասախոսություններ և զրույցներ

են անցկացվում 15-18 տարեկան երիտասարդների համար, իսկ մեծահասակների համար կա տնային ուսուցման հիմունքներով բիզնես պլան մշակելու դասընթաց, որի հիմնական թիրախ խումբը կանայք են: Տրամադրվում է անհատական հոգեբանական աջակցություն, հասանելի են վերականգնման խմբակային ծրագրեր, փաստաբանի և իրավաբանի աջակցություն, իշխանությունների և պետական կառույցների կողմից սոցիալական աջակցություն, միգրանտների իրավունքների խախտման դեպքերում կամ կացության թույլտվություն ստանալու համար փաստաթղթերի հավաքագրում:

Իհարկե, այս բոլոր ծրագրերով մեկ հասարակական կազմակերպություն չէ, որ զբաղվում է: Հասարակական կազմակերպությունների շրջանում կա գործառույթների վերահասցեագրում և վերաուղղորդում:

Ինևա Հայրապետյան՝
Հյուսիսային Կովկաս ուսուցողական այցի համակարգող

Հյուսիսային Կովկասի հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող ինտեգրման աշխատանքների ներկայացում

Հյուսիսային Կովկասի հինգ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները ակտիվորեն մասնակցել են Ուկրաինա, Վրաստան և Հայաստան կատարված ուսուցողական այցերին: Սակայն, հաշվի առնելով մասնակից երկրների միջև առկա խնդրահարույց հարաբերությունները, նմանատիպ այց Հյուսիսային Կովկասում նախատեսված չէր: Այս իմաստով էլ ավելի կարևորվեցին շփումները տարածաշրջանի գործընկերների հետ, որոնք հնարավորություն տվեցին հանդիպել և շփվել Ուկրաինա, Հայաստան և Վրաստան կատարած երեք ուղևորությունների ընթացքում: Ծրագրի ընթացքում տեղի ունեցան Հյուսիսային Կովկասի խմբի մի քանի ներկայացումներ (presentation) փախստականների և ՆՏԱ-ների ինտեգրման ոլորտում նրանց ունեցած երկարաժամկետ փորձի վերաբերյալ: Ակտիվիստները խոսեցին իրենց երկրում ՆՏԱ-ների, փախստականների և վերադարձողների մասին, ներկայացրեցին իրենց մոտեցումները և հաջողությունները ինտեգրման աշխատանքներում: Բոլորը տպավորված էին հոգեբանական վերականգնման ինտենսիվ աշխատանքով, ցնցումների հետ տարվող աշխատանքով, որն անցկացնում էին ՆՏԱ-ների հարցերով զբաղվող միջազգային և տեղական կազմակերպությունները, առաջին և երկրորդ չեչենական պատերազմներից հետո նախ՝ Ինգուշեթիայի վրանային ճամբարներում, ապա՝ Չեչնիա վերադառնալով: Միևնույն ժամանակ, հատկապես կարևոր փաստ էր այն, որ այս իրադարձությունները տեղի են ունեցել ավելի քան 10 տարի առաջ: Հետևաբար, Հյուսիսային Կովկասում ակտիվիստներն ավելի շահեկան դիրքում են՝ ունենալով երկար տարիների փորձ, որը նրանք անընդհատ վերլուծել են և դուրս բերել մասնագիտական գործունեության հասկացական այնպիսի

շրջանակ, որով սահմանվում են լավ և վատ արդյունքների հանգեցնող մոտեցումներն ու մեթոդները: Այս գիտելիքների փոխանցումը (իրենց իսկ խոսքի համաձայն) խիստ օգտակար է եղել այլ երկրների ակտիվիստների համար:

Ուսուցողական այցերին մասնակցած կազմակերպություններից երեքի գործունեությունը և հաջողված փորձը ներկայացված է հաջորդ բաժնում:

«Հյուսիսային Կովկասի փորձը մեր ծրագիր ներմուծեց նորարարություն, օրինակ, հոգեբանական վերականգնում, արտ-թերապիա, ցնցումների թերապիա: Մեր աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով մենք նախատեսում ենք կիրառել չեչեն գործընկերների փորձը մեզ մոտ, մեր կազմակերպությունում»:

(Ծրագրի վրացի մասնակիցների հաշվետվությունից)

Հյուսիսային Կովկասում (Ռուսաստան) ՆՏԱ-ների և փախստականների ինտեգրման հաջողված օրինակներ

«Սինտեմ» չեչենական տարածաշրջանային սոցիալ-հոգեբանական կենտրոն ՀԿ

364000 Ռուսաստան, Չեչենական
Հանրապետություն, ք. Գռոզնի, Մայակովսկի 7
8 938 893 74 51
sintem_org@mail.ru

Կազմակերպության նախագահ՝ Հայրապետյա
Ինևա Կիմայի

ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Տարբեր հակամարտությունների և բնապահպանական աղետների հետևանքով բնակչության համար լայնամասշտաբ հոգե-սոցիալական ծառայությունների տրամադրում:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ

- սոցիալ-հոգեբանական վերականգնում,
- իրազեկության բարձրացմանը միտված գործողություններ,
- իրավունքների պաշտպանություն,
- խաղաղարար գործունեություն:

Կազմակերպության մասին ավելի մանրամասն տե՛ս հետևյալ էջերում 88-90:

ՀԱՋՈՂՎԱԾ ՓՈՐՁ

Մենք ինտեգրման հաջողված փորձի դրսևորում ենք համարում «Վերադարձ» ծրագիրը, որը կազմակերպությունն իրականացնում է «Կարիտաս Մոսկվայի» և եվրոպական գործընկերների հետ, որոնք ներկայացնում են Բելգիան, Ավստրիան, Ֆրանսիան և Գերմանիան: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է այն մարդկանց վերադարձը, ովքեր 1995 թվականից ի վեր մեծ դժվարությունների և ոտնահարումների են ենթարկվել, ստիպված են եղել փախստական դառնալ և ապրել վրանային ճամբարներում և ժամանակավոր կացարաններում Հյուսիսային Կովկասի հարևան հանրապետություններում, այնուհետև, տարբեր պատճառներով, հեռացել են երկրից և այժմ ուզում են վերադառնալ տուն:

Եվրոպայում ավելի քան 10 տարի ապրած մարդկանց համար դժվար է ինտեգրվել: Նրանց երեխաները լավ չեն խոսում մայրենի և ռուսերեն լեզուներով, ինչը խնդիրներ է ստեղծում դպրոցում կրթության հետ, նրանց առաջադիմությունը բավարար չի լինում, ուստի հաճախ նրանք դառնում են երկտարեցիներ: Մեծահասակները չեն կարողանում աշխատանք գտնել, քանի որ չունեն կրթություն կամ աշխատանքային փորձ, մասնագիտական հմտություններ: Պետական հաստատություններ այցելելիս՝ մարդիկ հաճախ կոնֆլիկտներ էին ունենում, քանի որ նրանք սովոր էին կարգ ու կանոնի և բոլոր ընթացակարգերի արագ իրականացմանը, բայց այստեղ ամեն ինչ ձգձգվում էր, հաճախ ժամանակին չէին կարողանում պատասխանել և ծառայությունների որակը չէր համապատասխանում ակնկալիքներին: Մարդիկ ավելի հաճախ էին իրենց ճնշված զգում և սկսեցին Եվրոպա վերադառնալու ուղիներ փնտրել:

Այսպիսով, մենք, մեր գործընկերների հետ, ստեղծեցինք «Վերադարձ» ծրագիրը, որով մեր կազմակերպությունը դարձավ վերադարձողների համար առաջին հանդիպման վայրը: Յուրաքանչյուր անձի կամ ընտանիքի համար եվրոպական

կազմակերպությունները որոշակի բյուջե են նախատեսում, սկզբնական ժամանակահատվածում թույլ տալով, որ մարդը հարմարավետ զգա, դեղամիջոցներ ձեռք բերի, նույնիսկ փոքր բիզնես հիմնի: Տվյալ ոլորտում մասնագետները տեղեկացնում են մարդկանց իրենց իրավունքների և հնարավորությունների մասին, ում կարող են դիմել օգնության համար՝ իրենց իրավունքների խախտման դեպքում, նաև կապեր հաստատել գործող հասարակական կազմակերպությունների հետ, որտեղ նրանք կարող են անվճար հոգեբանական խորհրդատվություն ստանալ, մասնակցել կրթական ծրագրերին, անցնել վարպետաց դասեր, կատարելագործել կամ ձեռք բերել մասնագիտական հմտություններ: Բացի այդ, փորձագետները տեղեկացնում են փոքր բիզնեսի ստեղծման հնարավորությունների մասին՝ հատկապես կանանց համար տնային պայմաններում գործունեություն ծավալելու պարագայում: Նրանք տրամադրում են պետական սոցիալական ծառայությունների կենտրոնների տվյալները, բացատրում են, թե ինչպես գրանցվել գործազրկության դեպքում, որտեղ և ինչպիսի նպաստ կարող են ստանալ: Ավագ դպրոցի աշակերտների կամ երիտասարդների համար, ովքեր ցանկանում են ընդունվել համալսարան, մենք կազմակերպում ենք մասնագիտական կողմնորոշման դասախոսություններ, և շուտով կազմակերպվելու են չեչեներեն և ռուսերեն լեզուների դասընթացներ:

Մեր հաջողությունները. ավելի քան 100 վերադարձած ընտանիք, որոնք այսօր իրենց հարմարավետ են զգում հայրենիքում: Նրանք հաջողությամբ զարգացնում են իրենց բիզնեսը, սովորում են, կազմում են ընտանիքներ: Եվ կարևորն այն է, որ մենք ստեղծում ենք նրանց ինտեգրման համար պայմաններ, և նրանք եվրոպական մշակույթ են ինտեգրվում իրենց վարքագծով, հաղորդակցության ձևով, փոքր բիզնեսով, բիզնեսում շփման էթիկետով:

«Մեծ, շատ անհրաժեշտ և կարևոր աշխատանք է տարվել ՆՏԱ-ների և փախստականների համար «Սինտեմ» կազմակերպության կողմից: Ապշեցնում են մասնագիտական կարողությունները ցնցումների հետ աշխատանքում, հոգեբանական վերականգնումը, որն անցկացվում է հարյուրավոր անձանց հետ, որոնք սատարման կարիք ունեն: Բաներ կան, որ մեզ հարկ է սովորել»:

(Ծրագրի վրացի մասնակիցների հաշվետվությունից)

«Կովկասյան նախաձեռնությունների կենտրոն» միջտարածաշրջանային ՀԿ

1105062, Ռուսաստան, Մոսկվա,
Պոկրովկա փ., տուն 30
+7 985 487 47 80, 495 625 06 63
hadbad2012@gmail.com

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ

Քաղաքացիական հասարակության զարգացման և խոսքի ազատության միջտարածաշրջանային հասարակական կազմակերպություն «Կովկասյան նախաձեռնությունների կենտրոն» (ԿՆԿ)

- հանդիսանում է առաջին կովկասյան անկախ ամսագրի՝ «ԴՈԾ»-ի հիմնադիր հրատարակիչը, որն 2003թ. ի վեր լուսաբանում է իրավիճակը Հյուսիսային Կովկասի հանրապետություններում՝ շեշտադրելով մարդու իրավունքների խախտումները տարածաշրջանում,
- Հյուսիսային Կովկասում իրականացնում է սոցիոլոգիական հետազոտություններ, հասարակական կարծիքի հարցումներ՝ առկա խնդիրների և մշտադիտարկման վերաբերյալ,
- 2012 թ. ապրիլին Գռոզնիում բացվեց ՀԿ-ների և անկախ քաղաքացիական հասարակության ակտիվիստների համար ռեսուրս կենտրոն,
- 2012 թ. հուլիսին գործընկեր կազմակերպության՝ «Սինտեմ» կանանց ռեսուրս կենտրոնի հետ համատեղ սկսեց հրատարակել «Կանանց խոսքը» ամսագիրը:

Ավելի մանրամասն կազմակերպությունների մասին տե՛ս հետևյալ էջերում 86-87.

ՀԱՋՈՂՎԱԾ ՓՈՐՁ

«ԴՈՇ» ամսագիրը. Հյուսիսային Կովկասի առաջին «ԴՈՇ» ամսագիրը հրապարակվել է 2003 թ. հունվարից: Նկարագրում է Հյուսիսային Կովկասի տարածաշրջաններում մարդու իրավունքների խախտումները, հասարակական և քաղաքական իրավիճակը, ներկայիս սոցիալ-տնտեսական խնդիրները, բժշկության, կրթության և բնապահպանության ոլորտներում առկա խնդիրները: Այստեղ մարդիկ տեսնում են, թե ինչ է իրականում տեղի ունենում իրենց տարածաշրջանում:

Ամսագիրը լուսաբանում էր փախստականների, միգրանտների և ՆՏԱ-ների կյանքը, ինչպես Հյուսիսային Կովկասում, այնպես էլ Եվրոպայում և Կենտրոնական Ռուսաստանում, ուր նրանք հաճախ էին մեկնում լրագրողական հետաքննության նպատակով:

Ամսագրի շրջանառությունը կազմում է 5000-ից մինչև 10 000 օրինակ, տպագրության լեզուներն են ռուսերեն և անգլերեն: Օրինակներն իրացվում են Հյուսիսային Կովկասում, Մոսկվայում, Սանկտ Պետերբուրգում և այլ քաղաքներում, որտեղ բնակվում է կովկասյան սփյուռքը, ինչպես նաև արտասահմանում՝ Նորվեգիայում, Ֆրանսիայում, Բելգիայում, Ավստրիայում, Լեհաստանում, Գերմանիայում, Ֆինլանդիայում, Շվեդիայում և այլն:

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

- 2009թ. «ԴՈՇ»-ը դարձավ «Լրագրողներ առանց սահմանների» միջազգային կազմակերպության մրցանակի հաղթող, որպես 2009 թվականի լավագույն հրատարակություն՝ «Խոսքի ազատության և զարգացման գործում ներդրման համար»:
- 2010-ին «ԴՈՇ»-ի գլխավոր խմբագիր Իսրապիլ Շովխալովն արժանացավ «Մամուլի ազատության համար» միջազգային մրցանակաբաշխության մրցանակին,

- 2012 թ. «ԴՈՇ» ամսագիրը պարգևատրվել է «Արևելյան Եվրոպայի ազատ մամուլի» Գերդ Բուցերյուսի անվան մրցանակով, որը շնորհվել է Գերմանական «ՑԱՅՏ-Շթիֆթունգ» և Նորվեգիայի «Ազատ խոսք» հիմնադրամների կողմից:
- Անդրեյ Սախարովի անվան «Լրագրությունը որպես խիզախ արարք» մրցանակի դիպլոմներ 2005, 2007, 2009, 2011, 2013 և 2015 թվականներին:

«ԴՈՇ» ամսագրի կողմից բարձրացված հարցերը և դրա «Կանանց խոսքը» հավելվածը արդիական են և ունեն երկարաժամկետ արդյունք. նրանց ուշադրություն են դարձնում և արձագանքում են»:

(Ծրագրի հայ մասնակիցների հաշվետվությունից)

«Կանանց ռեսուրս կենտրոն» չեչենական տարածաշրջանային ՀԿ

Ռուսաստան, ք. Գռոզնի,
Տրոշևա փ., շենք 73, բն. 6
+8 928 738 33 84

Չեչնիայի տարածաշրջանային հասարակական բարեգործական «Կանանց ռեսուրս կենտրոն» կազմակերպությունը սկսեց իր գործունեությունը 2006 թվականին Չեչենական Հանրապետությունում:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Կազմակերպության առաքելությունն է բարելավել կանանց վիճակը Չեչենական Հանրապետությունում հետևյալ ուղիներով՝

- բարեգործական օգնություն ցուցաբերել կանանց, երկկողմանի կամ միակողմանի ծնողազուրկ երեխաներին, բնակչության սոցիալապես անապահով այլ խավերին,
- աջակցել պետական իշխանություններին հանրօգուտ գործունեությունում կանանց և սոցիալապես անապահով խավերի ներգրավմանը,
- կանանց, սոցիալապես անապահով և խոցելի անձանց նյութական կամ այլ օգնություն տրամադրել անկախ նրանց ազգությունից, քաղաքացիությունից, կրոնական պատկանելությունից,

- խթանել ընտանիքի հեղինակության և դերի ամրապնդումը հասարակությունում,
- նպաստել մայրության և մանկության պաշտպանությանը:

Կազմակերպության մասին մանրամասները տե՛ս հետևյալ էջերում 83-84.

ՀԱՋՈՂՎԱԾ ՓՈՐՁ

Հետևյալ աշխատակարգերի թիրախ լսարանը կանայք են, այդ թվում՝ ՆՏԱ-ները և փախստականները, որոնք կալանավորված են, ազատված են կալանքից, գտնվում են ծանր կացության մեջ և տուժել են բռնությունից:

1. ՉՀ քրեակատարողական Դաշնային ծառայության հետ համատեղ մշակվել է համագործակցության ծրագիր նախկինում կալանավորված կանանց հասարակությունում վերասոցիալիզացման և ինտեգրման նպատակով. մշակվել է տեղեկատվության արագ փոխանակման համակարգ՝ ազատված կանանց տվյալների բազայի հիման վրա, պարբերաբար իրականացվում են հարցումներ կալանավոր կանանց շրջանում՝ կազմակերպելու և իրականացնելու համար գործողություններ հանուն նրանց՝ կալանքի և ազատության պայմաններում ադապտացիոն կարողությունների զարգացման: Այս համագործակցությունը նպաստում է քրեակատարողական հիմնարկներում վերասոցիալականացման ավելի ինտենսիվ գործընթացների հայեցակարգային ընկալմանը, ինչպես նաև ազատված կանանց սոցիալ-մշակութային ադապտացիայի խնդիրների լուծմանը՝ փոխակերպման մեջ գտնվող չեչեն հասարակության մեջ:

2. Ծրագրի թիրախային խմբից 902 կին (որոնք գտնվում էին կալանքի մեջ, ազատվել էին կալանքից, գտնվում էին ծանր կենսապայմաններում և տուժել էին բռնությունից) ստացավ հնարավորություն բարելավել իր հոգեհուզական վիճակը, փոխակերպել բացասական կենսափորձի հետևանքները,

վերակենդանացնել Ես-ի հայեցակարգը, մոբիլիզացնել սոցիալապես դրական հոգեկան ակտիվությունը, ապրել անձի զարգացում, ունենալ ապագայի այնպիսի պրոյեկցիա, որը հիմնված է կողմնորոշումների և սոցիալական մոտիվացիայի սոցիալապես դրական արժեքների վրա։

Բացի այդ, կանանց մասնակցությունը հատուկ խմբակային հոգեբանական խորհրդատվություններին նպաստեց.

- ինքնագնահատականի բարձրացման և սեփական ուժերի հանդեպ վստահության ձեռք բերմանը,
- դրական ստեղծագործ շահերի զարգացմանը,
- խմբերի ներսում միջանձնային բարոյական հարաբերությունների դրսևորման պայմանների ստեղծմանը,
- ակտիվ սոցիալական պատասխանատվության և սոցիալական նորմերին հետևելու գիտակցության դաստիարակմանը, որն ընդհանուր առմամբ կնպաստի կանանց՝ նախկին կալանավորների շրջանում կրկնահանցագործությունների տոկոսի իջեցմանը։

3. 120 (կալանքի մեջ գտնվող, կալանքի մեջ գտնված, ծանր կենսապայմաններում գտնվող և բռնության զոհ դարձած) կանայք ստացել են աջակցություն ընտանեկան կոնֆլիկտները հարթելու համար. հոգևորականների ծառայությունների շնորհիվ կանանց մոտ ձևավորվեց հետաքրքրություն բարելավելու ինչպես ներանձնային և ընտանեկան հարաբերությունները, այնպես էլ հասարակական դիրքն ու շփումները։

Բարվոք ընտանեկան հարաբերությունների և սեփական կյանքի բարելավման համար ավանդույթների մասին իրազեկությունը կապահովի նրանց սոցիալ-հոգեբանական կայունությունը և առաջ կբերի համայնքին պատկանելության զգացում, որը կարագացնի նրանց սոցիալականացման գործընթացը և նվազագույնի կհասցնի ապօրինի գործողությունների կրկնության ռիսկը։

4. Ծրագրի թիրախ խմբի 680 կանայք հնարավորություն ստացան ձեռք բերել տնտեսական կայունություն, ինքնազարգացման, սեփական ռեսուրսների և հաղորդակցման ունակությունների դրսևորման հանրավորություն:

- 680 կանայք սովորել են պրոֆեսիոնալ դերձակի և մատնահարդարի արհեստները, անցել ընտանեկան բուժքրոջ դասընթացներ,
- մասնակից կանանցից 370-ը աշխատանքի ընդունվեցին գեղեցկության սրահներում և կարի արհեստանոցներում, սկսեցին աշխատել որպես ընտանեկան բուժքույր,
- կանանցից 103-ը մատուցում են վճարովի ծառայություններ տանը, ինչը նպաստում է նրանց նյութական վիճակի բարելավմանը:

5. 856 (կալանքի մեջ գտնվող, կալանքի մեջ գտնված, ծանր կենսապայմաններում գտնվող և բռնության զոհ դարձած) կանայք բարձրացրեցին կրթական մակարդակը իրավական հարցերում, ստացան բարձրակարգ իրավաբանական աջակցություն՝

- անշարժ գույքի նկատմամբ իրավունքների վերականգնման,
- վերականգնման/ռեաբիլիտացիայի իրավունքի վերահաստատում, սոցիալական արտոնությունների ստացում և երեխաների նկատմամաբ խնամակալության իրավունքի վերականգնում:

6. Ավելի քան 600, նախկինում կալանքի մեջ գտնված կին ստացել է տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն, որը տրամադրվում է ծանր կացության մեջ գտնվող կանանց, Չեչենական Հանրապետության հասարակական կազմակերպությունների և պետական կառույցների կողմից՝ ապահովելով կանանց համար աջակցության կենտրոնների մատչելիությունը և ընդլայնելով վերասոցիալականացման հնարավորությունները:

7. 600-ից ավելի կին բանտարկյալ մասնակցեց սոցիալական

մշտադիտարկման ծրագրին. նրանց իրավունքները և շահերը պաշտպանվում են հանրային իրազեկման միջոցով, բացի այդ որոնվում են հնարավորություններ՝ նրանց համար զբաղվածության ապահովման և տարատեսակ սոցիալական նշանակության ծրագրերում և նախագծերում ներգրավման նպատակով:

Մեր գործունեության լայնամասշտաբ և դրական ազդեցությունը Չեչենական Հանրապետությանում կանանց իրավունքների խթանման ոլորտում ի հայտ եկած փոփոխություններն են: Այսօր, ի դեմս մեր կազմակերպության, շահառուները, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամները ձեռք են բերել մի ռեսուրս, որով նրանք կարող են հասնել իրենց սահմանադրական իրավունքների իրացմանը:

«Կալանավորված կանանց, այդ թվում ՆՏԱ-ների և փախստականների ինտեգրումը, նրանց հոգեբանական վերականգնումը, թրեյնինգների միջոցով նրանց իրավազորումը, ինքնագնահատման բարձրացումը շատ տպավորիչ էին»:

(Ծրագրի ուկրաինացի մասնակիցների հաշվետվությունից)

Եզրակացություն

Չորս (հետ-)կոնֆլիկտային տարածաշրջաններում ՆՏԱ-ների և փախստականների ինտեգրման փորձի ուսումնասիրության ուղղությամբ կատարված աշխատանքը հաստատեց ինտերգման գործընթացի երկարաժամկետ և բարդ բնույթը: Պատերազմական գործողություններից տուժած անձանց ցուցաբերվող աջակցությունը և օժանդակումը բարդ խնդիր է, որը պահանջում է ոչ միայն խանդավառություն, այլև բարձր արհեստավարժություն:

Մեր կողմից 2017թ.-ին իրականացված ուսուցողական այցերը Ուկրաինա, Վրաստան և Հայաստան արժեքավոր և նպաստավոր էին ծրագրին մասնակից փորձագետների համար, որոնք ներկայացնում էին այս երեք երկրների, ինչպես նաև Ռուսաստանի (Հյուսիսային Կովկաս) մի շարք հասարակական կազմակերպություններ: Նրանք կարողացան բարձրացնել իրենց որակավորումը, փոխանակվեցին փորձով, միասին ուսումնասիրեցին տարբեր մոտեցումներ, ինչպես նաև կապեր և շփումներ հաստատեցին իրենց հայրենիքից և այլ երկրներից ծրագրին մասնակցող իրենց գործընկերների հետ:

Մասնակիցները միաձայն հաստատեցին, որ այցերը խիստ օգտակար էին: Շատերն էին ընդգծում, որ օգտակար էր լսել ոչ միայն դրական, այլև բացասական փորձի մասին, որպեսզի կարողանան համանման սխալներից խուսափել ապագայում: Բացի բուն ինտեգրմանն ուղղված աշխատանքից, անդրադարձ էր արվում նաև հասարակական կազմակերպությունների աշխատանքի այլ հայեցակերպերին, օրինակ՝ ծրագերի մշակմանը, ֆինանսավորման համար հայտերի ներկայացմանը, ինչպես նաև ծրագրերի արդյունավետ կառավարմանը և հասարակության հետ աշխատանքին:

Ակտիվիստները նշում են, որ իրենց կազմակերպությունների աշխատաոճը փոխվել էր արդեն իսկ այցերի ընթացքում. ներդրվում էին նոր թեմատիկ և մեթոդաբանական գաղափարներ, հաճախ՝ անհապաղ և տեղական իրավիճակին հարմարեցմամբ: Փորձի փոխանակումն ունեցավ նաև միջնաժամկետ և երկարաժամկետ ազդեցություն. հատկորոշվեցին բացերը, ինչը հանգեցրեց նոր ծրագրերի և խնդիրների լուծման մեթոդների մշակման: Դիտարկված հաջող աշխատակարգերից մի քանիսը

ակտիվիստներն արդեն իսկ ներդրել են կամ իրականացրել են իրենց երկրներում. օրինակ՝ Ուկրաինայում ներդրել են վրացական համատեղ կրթական ծրագրերի նման ծրագրեր երիտասարդ վերաբնակեցվածների և տեղացի բնակիչների համար: Իսկ Հայաստանի Գյումրի քաղաքից վերցրել են ՆՏԱ երեխաների համար սոցիալական և հոգեբանական վերականգնման ներառական կենտրոնի ստեղծման գաղափարը, որն արդեն սկսել է գործել Ուկրաինայում: Հայաստանից գործընկերների հետ կանոնավոր խորհրդակցությունների արդյունքում ուկրաինացի ակտիվիստները հաջողությամբ ադապտացրել են նախնական մոդելը: Հաճախ բարձրաձայնում էին (և մասամբ արդեն իսկ իրականություն է դարձել) ստեղծված կապերը խորացնելու և փոխադարձաբար միմյանց փորձը շարունակաբար ուսումնասիրելու և փոխառելու ցանկության և մտադրության մասին. օրինակ՝ փոխադարձ ուսուցողական այցերի և փորձի փոխանակման նմանօրինակ մոդելի շրջանակներում, ինչպես նաև կոնկրետ թեմաների և խնդիրների առնչությամբ փոխադարձ խորհրդակցությունների կազմակերպմամբ: Արդեն իսկ պլանավորված են, իսկ մասամբ՝ իրականություն են դարձել համագործակցության կոնկրետ ձևերը: Դրանց թվում են անդրսահմանային համատեղ ծրագրերը, համաժողովները և սեմինարները:

ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ և ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒՆՔՆԵՐԻ ԿՈՏՐՈՒՄ

«Հաղթահարենք պատերազմի հետևանքները միասին» ծրագիրը և բոլոր հարակից միջոցառումները, այդ թվում (հետ-) կոնֆլիկտային տարածաշրջաններ այցերը պլանավորելիս՝ մենք հասկանում էինք, որ պատերազմի փորձառությունն իր հետքը թողել է մասնակիցների գիտակցության մեջ: Մենք գիտակցում էինք, որ հենց իրենք էլ կարող են լինել կողմնակալ և նախապաշարված մյուս երկրները ներկայացնող իրենց գործընկերների նկատմամբ: Այդ իսկ պատճառով, բացի փորձի փոխանակումից մեր առանցքային նպատակներից էր հնարավոր նախապաշարմունքների կոտրումը և կառուցողական

երկխոսության ձևավորումը։ Այս նպատակը միավորում է մեր ծրագրի բոլոր աշխատանքային ուղղությունները։

Այս համատեքստում երեք ուսուցողական այցերի ամենակարևոր արդյունքներից մեկը եղավ այն, որ այցերի մասնակիցները ծանոթացան այլ երկրներից եկած իրենց գործընկերների և այլ անձանց հետ՝ այսպիսով հաղթահարելով իրենց նախապաշարմունքները կամ կողմնակալությունը այլ ժողովուրդների ներկայացուցիչների նկատմամբ։ Հիմա նրանք համագործակցում և ընկերություն են անում։ Բազմաթիվ մասնակիցներ խոստովանել են, որ ի սկզբանե այլ երկրների իրենց գործընկերներին վերաբերում էին կանխակալ կերպով և նույնիսկ թշնամաբար. իսկ վերջում բոլորն ընդգծում էին, որ մասնագիտական և անձնական համատեղ և ինտենսիվ շփումները օգնեցին նրանց մյուս մասնակիցների մեջ տեսնել անհատների, որոնք դուրս են ունեցած կարծրատիպերից. օրինակ՝ ուկրաինացի ակտիվիստներին հաջողվեց վստահություն ձևավորել ռուս և հայ գործընկերների նկատմամբ, վրացի և հայ մասնակիցներն ընդհանուր լեզու գտան, իսկ Ուկրաինայից, Հայաստանից և Վրաստանից բոլոր մասնակիցների մոտ փշրվեցին Չեչնիայից և Հյուսիսային Կովկասի մյուս տարածաշրջանները ներկայացնող գործընկերների նկատմամբ ունեցած բոլոր նախապաշարմունքները։ Նույնը վերաբերում է այլոց կրոնների՝ թե՛ քրիստոնեության, թե՛ իսլամի նկատմամբ վերաբերմունքին։

Բացի այդ, ճանապարհորդության ավարտին մասնակիցները ոչ միայն սովորեցին հասկանալ նախապաշարմունքների և խտրականության պատճառներն ու արդյունքները, այլև համապատասխան եզրակացություններ են արել սեփական աշխատանքի համար։

Այցերից վերադառնալով՝ մասնակիցները ակտիվ կիսվում էին իրենց տպավորություններով գործընկերների և ընկերների շրջանում, այս կերպ՝ անմիջականորեն իրենց նպաստը բերելով կոնկրետ երկրների, հասարակությունների

և մշակույթների ներկայացուցիչների նկատմամբ նախապաշարմունքների փշրմանը: Բացի այդ, շատերը պլանավորում են իրենց երկրներում ստեղծել երկխոսության վրա հիմնված նախաձեռնություններ և միջոցառումներ զինված հակամարտության մասնակցող կամ մասնակցած կողմերի ներկայացուցիչների միջև: Ծրագրի շրջանավարտներից շատերին արդեն հաջողվել է ազդել իրենց բնակության վայրերում խտրականության հետ կապված կոնկրետ կոնֆլիկտների վրա:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀՈԳԵ-ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ

Չորս երկրներից մասնակիցների երեք ուսուցողական այցերը և շփումները հաստատեցին ընդհանուր տպավորությունը. փախստականների և ՆՏԱ-ների ինտեգրումը նոր (մշտական կամ ժամանակավոր) բնակության վայրերում նկատելիորեն բարդ կլինեն հոգեբանական-սոցիալական հանգամանքների ներքո: Մարդիկ ստիպված են եղել հարկադրաբար լքել հայրենի տունը և հաճախ խորը ցնցումներ ունեն պատերազմի և բռնության փորձառության պատճառով: Ընդ որում, տարրական անհրաժեշտ միջոցներով (սնունդ, դեղամիջոցներ, կացարան) նրանց հրատապ ապահովման խնդրին ուղղված որոնումները հաճախ ստվերում են հոգեբանական աջակցության անհրաժեշտությունը:

Բացի այդ, ներկայացված չորս երկրներում դեռևս հոգե-սոցիալական աջակցության որակավորված մասնագետների խիստ պակաս կա: Խնդիրն էլ ավելի է խորանում հոգեթերապիայի խարանմամբ նախկին ԽՍՀՄ-ի ողջ տարածքում: Դրա պատճառով մարդիկ, ովքեր ունեն հոգեբանական և հոգե-սոցիալական աջակցության սուր արտահայտված կարիք, հաճախ հրաժարվում են օգտվել գոյություն ունեցող առաջարկներից: Այս կերպ, պատերազմի կողմից հասցված հոգեբանական ցնցումները չեն արժանանում մասնագիտական ուշադրության՝ էլ ավելի բարդացնելով ինտեգրումը, իսկ երբեմն

նույնիսկ՝ հանգեցնելով ագրեսիվ վարքի և բռնության։

Այցերի ընթացքում մասնագիտական շփումներն այս ոլորտում ի ցույց դրեցին նկատելի տարբերություններ տարբեր երկրներում։ Հյուսիսային Կովկասում միջազգային կազմակերպությունները գիտակցաբար զբաղվում էին հոգե-սոցիալական աջակցության մասնագետների կրթմամբ Չեչնիայի պատերազմից հետո։ Ուկրաինայում հիմա նույնպես նկատելի է այսպիսի զարգացում։ Վրաստանում և Հայաստանում տեղ գտած պատերազմներից հետո գործնականում ոչ մի ուշադրության չի արժանացել հոգեսոցիալական աջակցությունը։ Այս ոլորտում հյուսիսկովկասյան գործընկերների աշխատանքային փորձը խիստ հետաքրքրական էր մնացած մյուս մասնակիցներին։ Այն ցույց տվեց, թե որքան կարևոր է ավելի արագ տրամադրել հոգեսոցիալական աջակցություն փախստականներին և ՆՏԱ-ներին։

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԷՄՈՑԻՈՆԱԼ ՍՊԱՌՄԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

Ներկայացված բոլոր երկրներում ինտեգրման աշխատանքն իրականացվում է հիմնականում կամավորների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից։ Ընդ որում, նրանք մշտապես բախվում են ծանր ցնցումներ վերապրած և հաճախ այդ ցնցումները ներքուստ մշակելու հնարավորություն չունեցող մարդկանց հետ։ Այսպիսի մարդկանց օգնելը շատ ծանր է էմոցիոնալ առումով. կամավորները բախվում են էմոցիոնալ սպառման և ծայրահեղ հոգեկան հոգնության բարձր ռիսկի։

Այս իսկ պատճառով «Հաղթահարենք պատերազմի հետևանքները միասին» ծրագրի շրջանակներում մենք ուսուցում ենք անցկացրել և հավաստագրեր ենք հանձնել Ուկրաինայում առաջին կլինիկական սուպերվիզորներին։ Հիմա

նրանք առաջարկում են անհատական, թիմային և խմբակային սուպերվիզիա հոգեբանական աջակցության մասնագետներին։ Հավաստագրված կլինիկական սուպերվիզորների օգնությանը դիմելը և նրանց հետ կապ հաստատելը հնարավոր է անանուն ծրագրի կայքի միջոցով։[1]

Մեր այցերը նաև իրենց նպաստն են բերել էմոցիոնալ սպառման կանխարգելման գործում. նրանք հասարակական կազմակերպությունների աշխատակիցներին տվեցին հնարավորություն ժամանակավորապես դուրս գալ սովորական աշխատանքային համատեքստից, դիտարկել իրենց գործունեությունը նոր տեսանկյուններից՝ գործընկերների հետ շփումների միջոցով, ինչպես նաև զգալ այլ ակտիվիստների ընկալումն ու ճանաչումը, ինչը մոտիվացիայի և ուժի աղբյուր է։ Տեսանկյան այսպիսի փոփոխությունը մասնագիտական սուպերվիզիայի տիպիկ աշխատակարգ է։

1 Տե՛ս ծրագրի էջը՝ https://kriegsfolgen-ueberwinden.de/ru/обученные-в-рамках-нашего-проекта-кли

ՀԱՅԱՑՔ ԱՊԱԳԱՅԻՆ

Փորձի փոխանակումը և շփումների հաստատումը հիմնաքարային է «Հաղթահարենք պատերազմի հետևանքները միասին» միջազգային ծրագրի համար: Այս գործողությունները ներկայացված են (մասնավորապես, միջազգային համաժողովների և կլոր սեղան քննարկումների ձևով) նաև ծրագրի այլ աշխատանքային ուղղությունների շրջանակներում, ինչպիսիք են հոգեբանական ցնցումների մշակումը, սոցիալական ձեռնարկատիրությունը որպես սոցիալ-տնտեսական կոնֆլիկտների լուծման գործիք, պատերազմով հրահրված ընտանեկան բռնության կանխարգելումը:

Այս ոլորտներից յուրաքանչյուրում մեզ համար առանձնակիորեն կարևոր է միմյանց ծանոթացնել տարբեր (հետ-)կոնֆլիկտային տարածաշրջանների ակտիվիստներին և փորձագետներին: Նրանց գործունեության համատեքստերը մեծապես համընկնում են, իսկ աշխատանքի հաջողված մեթոդներով և լուծումներով փոխանակումը խիստ արդյունավետ է: Ծրագրի փորձը ցույց է տալիս տարբեր տեսանկյունների և նոու-հաուների համակցություններ և սիներգիաներ:

«Հաղթահարենք պատերազմի հետևանքները միասին» արդիական ծրագիրն ավարտվում է 2019թ.-ի հունվարին, սակայն նրան փոխարինելու է գալիս նույնանուն, համանման մի այլ ծրագիր: 2017թ.-ին ուսուցողական այցերի շրջանակներում ստացված փորձը ցույց է տալիս անհրաժեշտությունը՝ սովորեցնել (տրավմա-)հոգեթերապևտներին: Այս իսկ պատճառով առաջիկա ծրագրի՝ «Պատերազմի հասցրած հոգեբանական ցնցումների մշակում» աշխատանքային ուղղության շրջանակներում մենք պլանավորում ենք իրականացնել Ուկրաինայից, Վրաստանից և Հայաստանից մի շարք հոգեթերապևտների ուսուցում և սատարել նրանց պատերազմի պատճառով ցնցումների ենթարկված անձանց անվճար հոգեթերապևտիկ աջակցություն տրամադրելիս: Ընդ որում, մեզ համար կարևոր է ընդլայնել աշխատանքը Վրաստանի և Հայաստանի տարածքում հոգեթերապիայի խարանման դեմ:

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔԵՐ

Անչափ շնորհակալ ենք Ուկրաինայի, Հայաստանի և Վրաստանի բոլոր հասարակական կազմակերպություններին, որոնք հրավիրեցին մեզ, պատմեցին մեզ շատ օգտակար և հետաքրքրական բաներ իրենց աշխատանքի մասին և կիսվեցին մեզ հետ ինտեգրման դրական փորձով և հաջողված աշխատակարգերով, ինչպես նաև իրենց կողմից թույլ տրված սխալներով: Փորձի այսպիսի փոխանակումը հատկապես արժեքավոր եզրակացությունների հիմք հանդիսացավ:

Մենք նաև առանձնահատուկ շնորհակալություն ենք հայտնում ուսուցողական այցերի մասնակիցներին իրենց ակտիվության, խանդավառության և այն ամենի համար, որ նրանք մտահղացել, իրականացրել և պլանավորել են այցերի արդյունքում: Այս աշխատանքը դժվար է և անշահախնդիր ու հաճախ իրականացվում է այնպիսի մարդկանց կողմից, ովքեր հենց իրենք են վերապրել պատերազմ և հարկադիր արտագաղթ: Այս աշխատանքն արժանի է խորը երախտիքի: Շնորհակալություն և հաջողություն Ձեզ Ձեր կարևոր աշխատանքում:

Ի ամփոփումն, մեր երախտիքն ենք հղում Գերմանիայի արտաքին գործերի նախարարությանը թեմատիկ բազմազանությամբ միջազգային համագործակցության, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջև փորձի փոխանակման միջոցով պատերազմի հետևանքների համատեղ հաղթահարման գործին նպաստող այս հնարավորության համար:

Մարիա Սլեզաչեկ
«Հաղթահարենք պատերազմի հետևանքները միասին» ծրագրի ղեկավար

Ալլա Գամախարիա
Վրաստանում ծրագրի համակարգող և հրատարակության կազմող

Դիանա Միրիբյան
Հայաստանում ծրագրի համակարգող

Իննա Հայրապետյան
Ուսուցողական այցերի հարցերով Հյուսիսային Կովկասի խմբի համակարգող

Նադեժդա Խոմենկո
Ուկրաինայում ծրագրի համակարգող

«Խիստ տպավորիչ էր երեխաների հետ աշխատանքը։ Նույնիսկ ցանկանում եմ Հայաստան գալ որպես կամավոր, որպեսզի ավելի մանրամասն ծանոթանամ երեխաների հետ կապված սոցիալական ձեռնարկատիրության հարցերին»։

Ծրագրի մասնակից, Ուկրաինա

«Իմ հայացքները իսլամի վերաբերյալ փոխվեցին, և այդ ամենը՝ շնորհիվ Լուիզայի. նա դարձավ իմ լավագույն բարեկամը»։

Ծրագրի մասնակից, Հայաստան

«Ինձ շատ դուր եկավ Բաթումիում գործող կազմակերպությունը. երիտասարդների հետ նրանց աշխատանքը շատ տպավորեց։ Անպայման կապ կհաստատեմ նրանց հետ»։

Ծրագրի մասնակից, Ռուսաստան

«Տեսանք, թե ինչ վիթխարի աշխատանք էր տարվել Վրաստանում ՆՏԱ-ների ինտեգրման ուղղությամբ, ինչքան դժվար ուղի են անցել մարդիկ։ Շատ բան կա դեռ անելու, սակայն նրանք թևաթափ չեն եղել, աչքերում կրակ կա, կա թիմի զգացողություն, ՆՏԱ-ների՝ պետության հետ համագործակցության արդյունքում ստացվել է ՆՏԱ-ներին վերաբերող պատշաճ օրենսդրական հենք. սովորելու շատ բան կա»։

Ծրագրի մասնակից, Ուկրաինա

«Երանի շատ լինեին այսպիսի հանդիպումները, այսպիսի այցերը. մենք կազատվեինք բոլոր նախապաշարմունքներից և խտրականությունից, կլուծեինք բոլոր հակամարտությունները»։

Ծրագրի մասնակից, Հայաստան

«Մեր ուսուցողական այցերի և գործընկերների շնորհիվ ինձ մոտ մեծապես փոխվել են տեսակետներ, ես սկսել եմ այլ կերպ նայել շատ ազգությունների»։

Ծրագրի մասնակից, Ուկրաինա

«Այցը կոտրեց շատ կարծրատիպեր, օրինակ՝ չեչենների նկատմամբ, հնարավորություն տվեց նոր շփումներ ձևավորել»։

Ծրագրի մասնակից, Ուկրաինա

«Հաղթահարենք պատերազմի հետևանքները միասին»

Հակամարտությունների բազմազգ կարգավորումը և երկխոսության զարգացումը Ուկրաինայում և Արևելյան Եվրոպայի այլ (հետ-) կոնֆլիկտային տարածաշրջաններում քաղաքացիական հասարակության աջակցության միջոցով

Ելնելով նրանից, որ ներկա իրավիճակում (Ուկրաինայի արևելքում ընթացող պատերազմը և Ղրիմի բռնակցումը) Ուկրաինայի քաղաքացիական հասարակությունը (հետպատերազմյան) հակամարտությունների կարգավորման, լուծման և կանխման, խաղաղարարության գործընթացում կենտրոնական ուժ է, ծրագրի նպատակն է աջակցություն ցուցաբերել ուկրաինական քաղաքացիական հասարակությանը, կանխարգելել մասնագիտական գործունեության արդյունքում ուժերի սպառումը և ապահովել քաղաքացիական հասարակության երկարաժամկետ և կայուն աշխատանքը այս բարդ ոլորտում: Այս նպատակին հնարավոր է հասնել քաղաքացիական հասարակության ակտիվիստների շրջանում նպատակաուղղված մասնագիտական որակավորումների ձեռքբերմամբ՝ նրանց համար իրականացվող ուսուցումների և որակավորումների բարձրացման, ինչպես նաև այլ, զինված հակամարտություն վերապրած կամ հակամարտության մեջ գտնվող երկրների, օրինակ՝ Վրաստանի, Հայաստանի և Ռուսաստանի՝ Հյուսիսային Կովկասի փորձագետների և գործընկերների հետ գիտելիքները և փորձը կիսելով և փոխանակելով: Սույն ծրագրի շրջանակներում Վրաստանի, Հայաստանի և Ռուսաստանի՝ Հյուսիսային Կովկասի քաղաքացիական հասարակությունը՝ որպես հայրենիքում հետկոնֆլիկտային զարգացումն ապահովող կենտրոնական ուժերից մեկը, միջազգային համաժողովների, կլոր սեղանների և ուսուցողական այցերի շրջանակում աջակցություն է ստանում

նաև (հետպատերազմյան) հակամարտությունների լուծման և կանխարգելման գործում։

Ծրագրի երկրորդ, ոչ պակաս կարևոր նպատակներից է Արևելյան Եվրոպայի տարբեր (հետ-) կոնֆլիկտային երկրների, հատկապես ծրագրի մասնակից չորս երկրների՝ Ուկրաինայի, Վրաստանի, Հայաստանի և Ռուսաստանի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջև երկխոսության հաստատումն ու համագործակցային հարաբերությունների ցանցի ստեղծումը։ Հենց սա հնարավորություն է ընձեռում գտնելու տևական և բոլորին հարմար լուծում հակամարտությունների կարգավորման և խաղաղարարության ոլորտում, իսկ երկարաժամկետ կտրվածքով զարգացնում է խաղաղ գործընթացները ողջ տարածաշրջանում։ «Հաղթահարենք պատերազմի հետևանքները միասին» ծրագիրն իրականացվել է 2016.-ի օգոստոսից մինչև 2019թ.-ի հունվար ամիսը «Գերմանա-ռուսական փոխանակում» հասարակական կազմակերպության կողմից (ԳՌՓ ՀԿ (DRA e.V.), Բեռլին) ուկրաինական գլխավոր գործընկեր կազմակերպության՝ «Կռաինա վիլնիխ լյուդեյ» կազմակերպության հետ համատեղ (Կրամատորսկ/Լվով), գլխավոր ռուսաստանյան գործընկերոջ, ինչպես նաև Ուկրաինայի, Ռուսաստանի, Վրաստանի, Հայաստանի և Գերմանիայի հետևյալ հինգ գործընկեր կազմակերպությունների հետ միասին՝ «Նաշե մայբուտնե» (Զապոռոժիե, Ուկրաինա), «Հայկական Կարիտաս» (Գյումրի, Հայաստան), «Սուխումի» կանանց հիմնադրամ (Քութաիսի, Վրաստան), «Արևելյան Եվրոպայի հիմնադրամ» (Կիև), «Childfund Գերմանիա» (Բեռլին)։ Այս ծրագիրը ԳՌՓ հասարակական կազմակերպության կողմից 2014թ.-ից ի վեր Ուկրաինայում իրականացված հետպատերազմյան հակամարտությունների խաղաղ կարգավորման նախորդ ծրագրերի արդյունք է (https://kriegsfolgenueberwinden.de/ru/vorgaengerprojekt)։

Ծրագիրը ֆինանսավորվում է Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից։

«Հաղթահարենք պատերազմի հետևանքները միասին» միջազգային ծրագրի 6 աշխատանքային ուղղությունների շրջանակներում իրականացված միջոցառումները

Ծրագրում ներառվել էին ուսուցողական ծրագրերի, ուսումնական դասընթացների և 4 երկրներ (Ուկրաինա, Ռուսաստան, Վրաստան և Հայաստան) կատարված ուսուցողական այցերի 91 մասնակիցներ, երկու միջազգային համաժողովների և մեկ կլոր-սեղան քննարկման 286 մասնակիցներ: Բացի այդ, ծրագրի շրջանակներում կրթական ծրագրերի մասնակիցների կողմից իրականացված 32 ենթադրամաշնորհային ծրագրերի շնորհիվ 3847 մարդ ներգրավվել է անմիջականորեն, իսկ ավելի քան 45000-ը՝ համացանցային ռեսուրսների միջոցով:

ՉԻՆՎԱԾ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՑՆՑՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Սույն ուղղությունը սատարում է քաղաքացիական հասարակությանը պատերազմի արդյունքում առաջ եկած հոգեբանական ցնցումների հետ աշխատող հոգեթերապևտների և հոգեբանների որակավորման բարձրացման միջոցով՝ ձգտելով կանխարգելել հոգեբանների շրջանում երկրորդային ցնցումները և հասարակական հիմունքներով աշխատող կամավորների ուժերի սպառումը, ինչպես նաև ցրել հոգեբանական աջակցության մասին լայն տարածում ունեցող նախապաշարմունքները:

Սույն ուղղության շրջանակներում իրականացված միջոցառումները

- Ողջ Ուկրաինայում կլինիկական սուպերվիզորների հավաստագրված ուսուցում,

- Հոգեբանական աջակցության դիմելու դեպքում խարանին հակազդող երկու տեղեկատվական արշավ,
- «Հակամարտությունների և հետկոնֆլիկտային տարածաշրջաններում ցնցումների թերապիան» թեմայով միջազգային գիտաժողով:

ԶԻՆՎԱԾ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ

Սույն ուղղությունը սատարում է քաղաքացիական ակտիվիստներին հասարակության, այդ թվում նաև ընդունող համայնքների կոնկրետ թիրախային խմբերի հետ իրենց աշխատանքում, որն ուղղված է պատերազմով պայմանավորված խտրականության հաղթահարմանը և կանխարգելմանը: Ուսուցումն իրականացվում է մեր գործընկեր «Perspektivwechsel Plus»-ի կողմից մշակված մեթոդով: Այս մեթոդը հիմնված է «Anti-bias» (նախապաշարմունքներից զերծ) մոտեցման վրա և ուղղված է ինքնաներհայեցման հիման վրա նախապաշարմունքների նկատմամբ քննադատական վերաբերմունքի մշակմանը:

Սույն ուղղության շրջանակներում իրականացված միջոցառումները

- Ուսուցանողների վերապատրաստում (հետ)-պատերազմյան տարածաշրջաններում խտրականությանը դեմ ուղղված աշխատանքի մասին,
- 5 ենթադրամաշնորհային ծրագիր, որոնք իրականացվել են Ուկրաինայի տարբեր հատվածներում՝ նվազեցնելու Ուկրաինայի արևելքում զինված հակամարտությամբ հրահրված խտրականության մակարդակը հասարակությունում,
- Հակամարտությունների և հետ-կոնֆլիկտային տարածաշրջաններում խտրականության դեմ պայքարին վերաբերող աշխատանքների մասին մեթոդական ձեռնարկի հրապարակում երեք լեզուներով:

ՊԱՏԵՐԱԶՄՈՎ ՀՐԱՀՐՎԱԾ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆԸ ՀԱԿԱԶԴԵԼՈՒ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն ուղղությունը սատարում է քաղաքացիական հասարակությանը պատերազմով պայմանավորված ընտանեկան բռնության դեմ պայքարում՝ այս աշխատանքում տղամարդկանց ներառելու և տարբեր (հետ-)կոնֆլիկտային տարածաշրջաններից ընտանեկան բռնության թեմայով տղամարդկանց հետ աշխատող քաղաքացիական ակտիվիստների միջև փորձի փոխանակման միջոցով: Այս ուղղության մեջ ներառված են ծրագրի գործընկեր կազմակերպությունների՝ պատերազմով հրահրված ընտանեկան բռնության դեմ պայքարի հեղինակային ուսումնական ծրագիրը, որի շրջանակներում տղամարդիկ ներգրավվում են պատասխանատու աշխատակարգերում և հասարակական աշխատանք են իրականացնում ընտանեկան բռնության մակարդակի նվազեցման և կանխարգելման ուղղությամբ:

Սույն ուղղության շրջանակներում իրականացված միջոցառումները

- Տղամարդկանց շրջանում ուսուցում պատերազմով հրահրված ընտանեկան բռնության մակարդակի նվազեցմանը և կանխարգելմանը ուղղված հասարակական աշխատանքի միջոցով,
- Ուկրաինայի 6 շրջաններում, ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում մեր կողմից նախկինում ուսուցանված մասնակիցների կողմից իրականացվել է ընտանեկան բռնության թեմայով 7 սեմինար տղամարդկանց համար,
- 6 տեղեկատվական արշավ պատերազմով հրահրված ընտանեկան բռնության կանխարգելման թեմայով Ուկրաինայի 6 շրջաններում, ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում մեր կողմից նախկինում ուսուցանված մասնակիցների կողմից,

- Միջազգային կլոր-սեղան քննարկում «Աշխատանք տղամարդկանց հետ ընտանեկան բռնության թեմայով. պրոֆիլակտիկայի արդյունավետ մեթոդները, աշխատանք բռնություն կիրառողների հետ»։

ՖՈՐՈՒՄ-ԹԱՏՐՈՆԻ ՄԻՋՈՑՈՎ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱՂԱՂ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԱՇԽԱՏԱՆՔ

Ծրագրի այս ուղղության մասնակիցները սովորում են լուծումներ փնտրել պատերազմի հետևանքով հասարակության մեջ ի հայտ եկած տարբեր կոնֆլիկտների համար «ֆորում-թատրոն» մեթոդի օգնությամբ։ Ֆորում-թատրոնը բանակցային և խաղաղարար գործունեության մեջ միջնորդության արդյունավետ մեթոդ է։

Սույն ուղղության շրջանակներում իրականացված միջոցառումները

- Երկխոսությունների և խաղաղարար աշխատանքում ֆորում-թատրոն մեթոդի կիրառման ուղղությամբ փորձը տարածողների ուսուցում Ուկրաինայի, Հայաստանի և Հյուսիսային Կովկասի փորձագետների կողմից,
- 6 ենթադրամաշնորհային ծրագրեր Ուկրաինայի տարբեր շրջաններում «ֆորում-թատրոն» մեթոդի կիրառմամբ՝ ուղղված պատերազմի սոցիալական հետևանքների հաղթահարմանը,
- «Ֆորում-թատրոնը որպես (հետ)-պատերազմյան հակամարտությունների լուծման և կանխարգելման մեթոդ» թեմայով մեթոդական ձեռնարկի հրատարակում երեք լեզուներով։

ՆԵՐՔԻՆ ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐԻ ԵՎ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՈՒՄ

Այս ուղղության ներքո իրականացվում է Ուկրաինայի, Հայաստանի, Վրաստանի և Ռուսաստանի՝ Հյուսիսային Կովկասի քաղաքացիական հասարակությունների աջակցություն՝ ուղղված փախստականների և վերաբնակիչների ինտեգրման ոլորտում խնդիրների և կոնֆլիկտների լուծմանը ինտեգրման ուղղությամբ ունեցած փորձի և հաջողված աշխատակարգերի փոխանակման միջոցով։

Սույն ուղղության շրջանակներում իրականացված միջոցառումները

- 3 ուսուցողական այց Ուկրիանա, Վրաստան և Հայաստան Ուկրաինայի, Վրաստանի, Հայաստանի և Ռուսաստանի՝ Հյուսիսային Կովկասի ակտիվիստների համար փախստականների և ներքին տեղահանվածների ինտեգրման արդյունավետ ռազմավարությունների վերաբերյալ ունեցած փորձի փոխանակման նպատակով,
- Ուկրաինայի, Վրաստանի, Հայաստանի և Ռուսաստանի՝ Հյուսիսային Կովկասի քաղաքացիական հասարակությունների՝ ՆՏԱ-ների և փախստականների ինտեգրման ոլորտում հաջողված փորձի մասին տեղեկատվական գրքույկի հրատարակում չորս լեզուներով (ուկրաիներեն, ռուսերեն, հայերեն և վրացերեն)։

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ՝ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

Սույն ուղղության ներքո աջակցություն է ցուցաբերվում քաղաքացիական հասարակությանը պատերազմի արդյունքում առաջ եկած բազմաթիվ սոցիալ-տնտեսական խնդիրների և կոնֆլիկտների նվազեցմանը միտված աշխատանքում, որպեսզի Ուկրաինայում զարգանա և տարածում ստանա

սոցիալական ձեռնարկատիրության ընկալումը որպես քաղաքացիական հասարակության կողմից վերոնշյալ խնդիրների և կոնֆլիկտների լուծման համար կիրառվող գործիք:

Սույն ուղղության շրջանակներում իրականացված միջոցառումները

- Ակտիվիստներին սովորեցնել կիրառել սոցիալական ձեռնարկատիրությունը որպես պատերազմի պատճառով ի հայտ եկած սոցիալ-տնտեսական կոնֆլիկտների հաղթահարման և կանխման ռազմավարություն,
- Ստեղծվել են 4 սոցիալական ձեռնարկություններ, որոնք միտված են Ուկրաինայի 4 շրջաններում սոցիալ-տնտեսական կոնֆլիկտների կարգավորմանը:
- 2 համաուկրաինական տեղեկատվական արշավ, որոնք ուղղված են սոցիալ-տնտեսական կոնֆլիկտների հաղթահարմանը և կանխարգելմանն ուղղված սոցիալական ձեռնարկատիրության՝ քաղաքացիական հասարակության գործիք լինելու գաղափարի տարածմանը,
- «Սոցիալական ձեռնարկատիրությունը որպես ռազմական գործողությունների արդյունքում ի հայտ եկած սոցիալ-տնտեսական կոնֆլիկտների հաղթահարման և կանխարգելման գործիք հասարակական ակտիվիստների համար» թեմայով միջազգային համաժողով:

Ծրագրի և նրա վեց աշխատանքային ուղղությունների մասին ավելի մանրամասն տեղեկությունները, ինչպես նաև ծրագրի և ենթադրամաշնորհային ծրագրերի շրջանակներում կատարված աշխատանքի արդյունքները՝ տեքստային նյութերը և տեսանյութերը տե՛ս ծրագրի կայքում. http://www.overcome-war.org.

Հրատարակիչ	**DRA e.V.** *(ԳՌՓ ՀԿ)* *Բաղշտրասե 44* *13357 – Բեռլին, Գերմանիա* *+49 (0)30/4466800* *info@austausch.org* *www.austausch.org* *www.facebook.com/draberlin*
Հրատարակության կազմողը	**Ալլա Գամախարիա** **ծրագրի համակարգող**
Նախագծի ղեկավար:	**Մարիա Սլեզաչոկ, ԳՌՓ ՀԿ**
Ծրագիր.	**«Հաղթահարենք պատերազմի հետևանքները միասին»** *www.overcome-war.org* *www.fb.com/naslidkiviyni*
Ծրագրի աշխատանքային ուղղվածությունը	**«Ներքին տեղահանվածների և փախստականների ինտեգրումը»**
Ծրագրի աշխատանքային ուղղությունն իրականացնող գործընկերները	**ԳՌՓ (DRA), Գերմանիա** **Країна вільних людей (Կռաինա վիլնիխ լյուդեյ), Ուկրաինա** **Armenian Caritas (Հայկական Կարիտաս), Հայաստան** **Fond Suhumi («Սուխումի» հիմադրամ),Վրաստան**
Կազմակերպությունների վերաբերյալ նյութերը հավաքել են	**Դիանա Միրիբյան** *Ծրագրի համակարգող Հայաստանում* **Մերի Գելաշվիլին** *Ծրագրի աշխատակից Վրաստանում* **Իննա Հայրապետյան** *Հյուսիսային Կովկասի խմբի ուսուցողական այցերի համակարգող* **Նադեժդա Խոմենկո** *Ծրագրի համակարգող Ուկրաինայում*

ՆՏԱ-ների և փախստականների ինտեգրման վերաբերյալ իրավիճակի հակիրճ վերլուծություն

Դիանա Միրիբյան
Ծրագրի համակարգող Հայաստանում

Ալլա Գամախարիա
Ծրագրի համակարգող Վրաստանում և հրատարակիչ

Իննա Հայրապետյան
Հյուսիսային Կովկասի ուսուցողական այցի համակարգող

Նադեժդա Խոմենկոն
Ծրագրի համակարգող Ուկրաինայում

Հայերենի թարգմանիչ
Վրացերենի թարգմանիչ
Ուկրաիներենի թարգմանիչ

Քրիստինե Սողիկյան
Լալի Շենգելիա
Աննա Պեչերնայա

Դիզայն

Ալինա Պոտեմսկայա

Տեղեկատվական գրքույկի հրատարակումն իրականացվել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտաքին գործերի նախարարության ֆինանսական աջակցությամբ:

© «ԳՌՓ» ՀԿ, 2018 թ.

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս հրատարակության նյութերն կարելի է առանց սահմանափակման օգտագործել և վերարտադրել կրթական կամ այլ, ոչ առևտրային նպատակներով՝ անպայմանորեն նշելով ծրագիրը՝ «Հաղթահարենք պատերազմի հետևանքները միասին» և ԳՌՓ ՀԿ-ին («DRAe.V.») որպես հրատարակիչ:

Տեղեկատվական գրքույկը պետք է նշվի հետևյալ կերպ՝ « ՆՏԱ-ների և փախստականների ինտեգրման հաջողված փորձը: Ուկրաինայի, Վրաստանի, Հայաստանի և Ռուսաստանի՝ Հյուսիսային Կովկասի քաղաքացիական հասարակության փորձը» - Տեղեկատվական գրքույկ, DRAe.V. – «Հաղթահարենք պատերազմի հետևանքները միասին», Բեռլին, Կիև 2018 թ.

Այս հրատարակությունը վաճառքի ենթակա չէ: